

Դատական Գործ N: ԵՄԴ/0082/01/09

Երբ է գործը ստացվել:	04-08-2009
Քրեական գործի համարը:	62202607
Ինչ կարգով է գործը ստացվել:	Առաջին անգամ
Գործը որտեղից է ստացվել:	
Դատախազություն:	ՀՀ Գլխավոր դատախազություն
Նախաքննական գործի համարը:	62202607
Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:	Ա.Մատուլյանը իրացրել և կեղծ անձնագիր, դրդել է ՀՀ պետական սահմանը ապօրինի հատելուն, նախնական համաձայնությամբ շահագործական նպատակով հավաքագրել, փոխադրել, ստացել է շահագործման է ենթարկել երկու և ավելի անձանց, ինչպես նաև օրինականացրել է խոշոր չափի հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները:
Մեղադրյալ	
Անձ	
Անուն	Անայա
Ազգանուն	Մատուլյան
Հայրանուն	Ստեփանի
Հասցե	Անդրանիկի 10/12. քմ 5
Սեռ	Իգական
Ծննդյան ամսաթիվ	11-12-1964
Հոդված_1	
Հոդված	132 Մաս 3 Կետ 1,2
Հոդված_1	
Հոդված	38-329 Մաս 1
Դատվածություն:	նախկինում դատված
Պաշտպան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Վիճակագրական տողի համարը:	2.2
Իրեղեն ապացույց	
Երբ է ստացվել դատարան:	04-08-2009
Իրեղեն ապացույցի անվանումը:	1 փաթեթ և 2 ծրար
Իրեղեն ապացույցի պահպանման փաստացի տեղը:	Հանձնվում է դատավորին գործի հետ միասին
Խախտման միջոց:	Կալանավորում
Երբ:	04-08-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Մալաթիա-Սեբաստիա
Դատավորի անուն:	Միքայել Վախթանգի Գրիգորյան

Դատավոր	
Դատարանի անվանում:	Մալաթիա-Սեբաստիա
Դատավորի անուն:	
Երբ:	04-08-2009
Որոշումը ուղարկվել է կողմերին:	04-08-2009
Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:	04-08-2009
Այլ նշումներ:	
Երբ:	28-08-2009
Դատավարության կողմեր:	Մեղադրող
Դատավարության կողմեր:	Մեղադրյալ
Դատավարության կողմեր:	Տուժող
Դատավարության կողմեր	
Անուն	Արթուր
Ազգանուն	Դավթյան
Հասցե	ՀՀ գլխավոր դատադազություն
Դատավարության կողմեր	
Անուն	Անայա
Ազգանուն	Մատուլյան
Հասցե	„Արմվյան,, Քրեակատարողական հիմնարկ
Դատավարության կողմեր	
Անուն	Լուսինե
Ազգանուն	Հաարությունյան
Հասցե	ք. Գյումրի, Անի թաղ. 11 փող. 6 շենք
Դատավարության կողմեր	
Անուն	Գայանե
Ազգանուն	Դանդիլյան
Հասցե	ք. Գյումրի, Վ. Սարգսյան փողոց 224/054 տնակ
Դատավարության կողմեր	
Անուն	Արմենուհի
Ազգանուն	Ասատրյան
Հասցե	ք. Արմավիր, Չարենցի փողոց, 20 թենք, 32բն.
Դատավարության կողմեր	
Անուն	Կարինե
Ազգանուն	Ավդալյան
Հասցե	ք. Գյումրի, վ. Սարգսյան փողոց, 6 շենք, 13 բն.
Դատավարության կողմեր	
Անուն	Մարինե
Ազգանուն	Նալբանդյան
Հասցե	Արարատի մարզ, գյուղ Գետափ
Այլ նշումներ:	
Ժամ:	12:30

Դատավարության կողմեր	
Անուն:	
Հասցե:	
Նիստերի դահլիճի համարը:	4
Երբ:	26-08-2009
Դատավարության կողմեր:	Մեղադրող
Դատավարության կողմեր:	Մեղադրյալ
Դատավարության կողմեր:	Տուժող
Դատավարության կողմեր:	Տուժող
Դատավարության կողմեր	
Անուն	Արթուր
Ազգանուն	Դավթյան
Հասցե	ՀՀ գլխավոր դատադազություն
Դատավարության կողմեր	
Անուն	Ամալյա
Ազգանուն	Մատուլյան
Հասցե	„Աբովյան“, Քրեակատարողական հիմնարկ
Դատավարության կողմեր	
Անուն	Լուսինե
Ազգանուն	Հաարությունյան
Հասցե	ք. Գյումրի, Անի թաղ. 11 փող. 6 շենք
Դատավարության կողմեր	
Անուն	Գայանե
Ազգանուն	Ղանդիլյան
Հասցե	ք. Գյումրի, Վ. Սարգսյան փողոց 224/054 տնակ
Դատավարության կողմեր	
Անուն	Արմենուհի
Ազգանուն	Ասատրյան
Հասցե	ք. Արմավիր, Չարենցի փողոց, 20 թենք, 32բն.
Դատավարության կողմեր	
Անուն	Կարինե
Ազգանուն	Ավդալյան
Հասցե	ք. Գյումրի, Վ. Սարգսյան փողոց, 6 շենք, 13 բն.
Դատավարության կողմեր	
Անուն	Մարինե
Ազգանուն	Նալբանդյան
Հասցե	Արարատի մարզ, գյուղ Գետափ
Այլ նշումներ:	
Ժամ:	12:30
Դատավարության կողմեր	
Անուն:	
Հասցե:	
Նիստերի դահլիճի համարը:	4

Երբ:	10-09-2009,29-09-2009,16-10-2009,28-10-2009,10-11-2009,27-11-2009,30-11-2009			
Ժամ:	12.00			
Նիստերի դահլիճի համարը:	4			
Այլ նշումներ:				
Ամսաթիվ:	30-11-2009			
Հոդված				
Հոդված	132	Մաս 3	Կետ 1-ին, 2-րդ	
Հոդված				
Հոդված	132.1.	Մաս 2	Կետ 3-րդ, 4-րդ	
Հոդված				
Հոդված	190	Մաս 2	Կետ 1-ին	
Հոդված				
Հոդված	325	Մաս 1		
Հոդված				
Հոդված	38-329	Մաս 1		
Այլ:				
Հիմնական:	Որոշակի ժամկետով ազատագրվում			
Լրացուցիչ:	Գույքի բռնագրավումը			
Այլ:				
Դատական ակտի բովանդակությունը:	<p>գործ թիվ ԵՄԴ/0082/01/09 քաղ. Երևան 2009թ.</p> <p>ԴԱՏԱԿԺԻՈՒ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը հետևյալ կազմով</p> <p>Նախագահությամբ՝ Միքայել Վախթանգի Գրիգորյանի Քարտուղարությամբ՝ Սվետլանա Մարտիրոսի Ներսեսյանի մասնակցությամբ՝ Մեղադրող Արթուր Դավթյան Ամբաստանյալ Ամայա Մատուլյան Պաշտպան Ռազմիկ Թովմայան Տուժողներ Մարինե Նալբանդյան, Գայանե Ղանդիլյան, Կարինե Ավդալյան, Լուսինե Հարությունյան</p> <p>2009 թվականի նոյեմբերի 30-ին դատարանում, դռնբաց դատական նիստում, քննեց քրեական գործն ըստ մեղադրանքի Ամայա Ստեփանի Մատուլյանի, ծնված 1964 թվականի դեկտեմբերի 11-ին Երևան քաղաքում, ազգությամբ հայ, Հայաստանի Հանրապետության քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, չի աշխատում, ամուսնացած, նախկինում 5 անգամ դատապարտված 14.12.1987թ. ՀՀ 1961 թվականի քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասով, 15-143 հոդվածի 2-րդ մասով, 08.09.1989թ. ՀՀ 1961 թվականի քրեական օրենսգրքի 143 հոդվածի</p>			

2-րդ մասով, 24.02.1993թ. ՀՀ 1961 թվականի քրեական օրենսգրքի 229 հոդվածի 5-րդ մասով, 16.08.2000թ. ՀՀ 1961 թվականի քրեական օրենսգրքի 226 հոդվածի 1-ին մասով, 25.08.2004թ. ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասով, 262 հոդվածով, 34-262 հոդվածով, 38-329 հոդվածի 1-ին մասով, դատվածությունը չմարված, հաշվառված է ք. Երևան, Անդրանիկի փողոց, 10/1 շենք, բն. 5 հասցեում, փաստացի բնակվել է ք. Երևան, Հ. Հակոբյան փողոց, 1-ին շենք, բն. 63 հասցեում:

Քրեական գործը հարուցվել է 2007 թվականի ապրիլի 12-ին ՀՀ զլխավոր դատախազության քննչական վարչության մարդկանց առևտրի և նրանց անօրինական միգրացիայի դեմ պայքարի բաժնի կողմից:

Ամայա Մատուլյանը 2007 թվականի հունիսի 6-ին որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 1321 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով: 2007 թվականի հունիսի 6-ին Ամայա Ստեփանի Մատուլյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2007 թվականի հունիսի 12-ին նախաքննության մարմնի կողմից թիվ 62202607 քրեական գործի վարույթը կասեցվել է մինչև մեղադրյալ Ամայա Ստեփանի Մատուլյանին հայտնաբերելը:

2007 թվականի դեկտեմբերի 1-ին թիվ 62202607 քրեական գործը ընդունվել է ՀՀ ոստիկանության քննչական զլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչության քննիչի վարույթ և կատարվել նախաքննություն:

2008 թվականի սեպտեմբերի 16-ին Ամայա Ստեփանի Մատուլյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, լրացվել:

2008 թվականի սեպտեմբերի 16-ին Ամայա Մատուլյանին առաջադրված մեղադրանքի ծավալից վերացվել է 06.06.2007թվականի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 1321 հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասը: Ամայա Մատուլյանը 2008 թվականի սեպտեմբերի 16-ին որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով: Ամայա Մատուլյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը կալանավորումը թողնվել է անփոփոխ:

2008 թվականի սեպտեմբերի 30-ին նախաքննության մարմնի կողմից թիվ 62202607 քրեական գործի վարույթը կասեցվել է մինչև մեղադրյալներ Ա. Մատուլյանին, Ա. Նադիրյանին և Կ. Մելքոնյանին հայտնաբերելը, իսկ Ա. Մատուլյանի կողմից կեղծ անձնագիր պատրաստելու հարցին որոշվել է անդրադառնալ Ա. Մատուլյանին և Ա. Սեդրակյանին հայտանբերելուց հետո:

Ամայա Ստեփանի Մատուլյանը 2009 թվականի փետրվարի 13-ին բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության ԿՀՂՊ ԳՎ 4-րդ վարչության 1-ին բաժին:

2009 թվականի փետրվարի 13-ին թիվ 62202607 քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Մեղադրյալ Ամայա Ստեփանի Մատուլյանը 2009 թվականի փետրվարի 13-ից կալանքի տակ է, գտնվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում, կալանքի սկիզբը հաշվվել է 2009 թվականի փետրվարի 13-ից:

Ամայա Մատուլյանը 2009 թվականի հունիսի 17-ին որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 1321 հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով:

2009 թվականի հուլիսի 21-ին Ամայա Ստեփանի Մատուլյանին առաջադրված մեղադրանքի ծավալը փոփոխվել է, լրացվել և նրան նոր մեղադրանք է առաջադրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 1321 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 325 հոդվածի 1-ին մասով և 38-329 հոդվածի 1-ին մասով:

Ամայա Ստեփանի Մատույանը 2009 թվականի հուլիսի 21-ին որպես մեղադրյալ է ներգրավվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 1321 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 325 հոդվածի 1-ին մասով և 38-329 հոդվածի 1-ին մասով:

Նախաքննության մարմինը 2009 թվականի հուլիսի 21-ին որոշում է կայացրել թիվ 62202607 քրեական գործով Ամայա Մատույանի կողմից Ալլա Սեդրակյանին պոռնկությամբ զբաղվելուն նպաստելու դեպքի վերաբերյալ քրեական գործի մասը կարճելու մասին և որոշել քրեական հետապնդում չիրականացնել նույն մեղադրանքով օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության պատճառաբանությամբ:

Այսպիսով, Ամայա Ստեփանի Մատույանը մեղադրվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 1321 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 325 հոդվածի 1-ին մասով և 38-329 հոդվածի 1-ին մասով:

Քրեական գործը մեղադրական եզրակացության հետ 2009 թվականի օգոստոսի 4-ին ուղարկվել է Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարան:

Քրեական գործի դատական քննությամբ և գործի տվյալներով դատարանը հաստատված ու ապացուցված համարեց հետևյալը: Ամայա Մատույանը 1997 թվականից մինչև 2002 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում Արաբական Միացյալ Եմիրություններում զբաղվել է կավատությամբ, ինչի համար նախկինում դատապարտվել է:

Ամայա Մատույանը 2001 թվականի օգոստոս ամսին գտնվելով Երևան քաղաքում հանդիպել է նախկինում Արաբական Միացյալ Եմիրություններում մարմնավաճառությամբ զբաղվող Ալլա Ալբերտի Սեդրակյանին: Ամայա Մատույանը տեղեկացել է, որ Ալլա Սեդրակյանը ցանկանում է կրկին մեկնել Արաբական Միացյալ Եմիրությունների Դուբայ քաղաք մարմնավաճառությամբ զբաղվելու նպատակով, սակայն արտաքսված լինելու պատճառով չի կարող իր անձնագրով մեկնել Դուբայ քաղաք: Ամայա Մատույանն առաջարկել է իր օգնությունը, ոչելով որ կկատարի անձնագրի ձևակերպման և Դուբայ մեկնելու հետ կապված ծախսերը: Նա վերցրել է Ալլա Սեդրակյանի լուսանկարը, այն փակցրել անհայտ հանգամանքներում իր կողմից ձեռք բերված Արինկա Աթանեսյանի անձնագրում և անձնագիրը տրամադրել է Ալլա Սեդրակյանին: Ալլա Սեդրակյանը Ամայա Մատույանի կողմից իրեն տրամադրված կեղծ անձնագրով հատել է ՀՀ պետական սահմանը և մեկնել Դուբայ քաղաք:

Ամայա Մատույանը բնակվել է Արաբական Միացյալ Եմիրություններում և շարունակել իր գործունեությունը: Ամայա Մատույանը շահագործման նպատակով մարդուն հավաքագրելու և փոխադրելու շուրջ նախնական համաձայնության է ելել Գայանե Մելքոնյանի, Սուսաննա Նիկողոսյանի հետ և գումարներ վաստակելու նպատակով 2003 թվականի սեպտեմբեր ամսին Գյումրի քաղաքում բարձր վարձատրվող մատուցողուհու աշխատանք տրամադրելու կեղծ խոստումով հավաքագրել և Ռուսաստանի Ղազնության Մոսկվա քաղաք է ուղարկել հայ աղջիկների: Սևակ Սիմոնյանը և Ավետիք Խաչատրյանը Մոսկվա քաղաքում դիմավորել են աղջիկներին, իսկ ապա նրանց փոխադրել Արաբական Միացյալ Եմիրությունների Դուբայ քաղաք:

ՀՀ քաղաքացի Լուսինե Հարությունյանը 2003 թվականի օգոստոս ամսին Գյումրի քաղաքում ծանոթացել է Գայանե Մելքոնյանի հետ, վերջինս նրան առաջարկել է Արաբական Միացյալ Եմիրությունների Դուբայ քաղաքում մատուցողուհու բարձր վարձատրվող աշխատանք: Լուսինե Հարությունյանը ընդունել է Գայանե Մելքոնյանի առաջարկը և նրան փոխանցել իր ՀՀ քաղաքացու անձնագիրը: Ռուսաստանի Ղազնության Մոսկվա քաղաքում գտնվող

Սևակ Սիմոնյանի և Ավետիք Խաչատրյանի միջոցով Լուսինե Հարությունյանին փոխադրել են Դուբայ քաղաք, որտեղ նրան դիմավորել և տարել են Ամայա Մատուլյանի մոտ: Ամայա Մատուլյանը վերցրել է նրա անձնագիրը, պահել իր մոտ: Ամայա Մատուլյանը օգտագործել է Լուսինե Հարությունյանի կողմից լեզվին չտիրապետելու, անձնագրի բացակայությամբ օտար երկրում տեղաշարժվելու հնարավորության բացակայությունը, ինչպես նաև Լուսինե Հարությունյանի կողմից փոխադրման գումարները վերադարձնելու հնարավորություն չունենալու կապակցությամբ վերջինիս մոտ առաջացած վիճակի խոցելիությունը, բացի այդ Լուսինե Հարությունյանի առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու իրեն չենթարկվելու դեպքում արաբների միջոցով ծեծի ենթարկելու և բռնաբարելու սպառնալիքներով, նրան ներգրավել է պոռնկության մեջ ու շուրջ 6 ամիս պահել նրան սեռական շահագործման մեջ: Ամայա Մատուլյանն ամբողջությամբ ստացել է Լուսինե Հարությունյանի կողմից մարմնավաճառությամբ վաստակած գումարները:

ՀՀ քաղաքացի Գայանե Ղանդիլյանը 2003 թվականի հոկտեմբեր ամսին Գյումրի քաղաքում ծանոթացել է Գայանե Մելքոնյանի հետ: Գայանե Մելքոնյանը Գայանե Ղանդիլյանին առաջարկել է մեկնել Հնդկաստան, իր ծանոթ կնոջ մոտ խմորեղենի խանութում բարձր աշխատավարձով վաճառողուհի աշխատելու համար, միաժամանակ հայտնել է, որ ճանապարհածախսը պետք է կատարվի աշխատանք տրամադրողի կողմից այն վերադարձնելու պայմանով: Գայանե Ղանդիլյանը ընդունել է առաջարկը: Ռուսաստանի Ղաչնուլյան Մոսկվա քաղաքում գտնվող Սևակ Սիմոնյանի և Ավետիք Խաչատրյանի միջոցով Գայանե Ղանդիլյանին փոխադրել են Դուբայ քաղաք, որտեղ նրան դիմավորել և տարել են Ամայա Մատուլյանի մոտ: Ամայա Մատուլյանը վերցրել է նրա անձնագիրը, պահել իր մոտ: Ամայա Մատուլյանը օգտագործել է Գայանե Ղանդիլյանի կողմից լեզվին չտիրապետելու, անձնագրի բացակայությամբ օտար երկրում տեղաշարժվելու հնարավորության բացակայությունը, ինչպես նաև Գայանե Ղանդիլյանի կողմից փոխադրման գումարները վերադարձնելու հնարավորություն չունենալու կապակցությամբ վերջինիս մոտ առաջացած վիճակի խոցելիությունը, բացի այդ Գայանե Ղանդիլյանի առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու իրեն չենթարկվելու դեպքում անապատում արաբների միջոցով ծեծի ենթարկելու և բռնաբարելու սպառնալիքներով, նրան ներգրավել է պոռնկության մեջ ու շուրջ 5 ամիս պահել սեռական շահագործման մեջ: Ամայա Մատուլյանն ամբողջությամբ ստացել է Գայանե Ղանդիլյանի կողմից մարմնավաճառությամբ վաստակած գումարները:

Ամայա Մատուլյանը շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելու, փոխադրելու, ստանալու և սեռական շահագործման մեջ ներգրավելու դիտավորությամբ նախնական համաձայնության է եկել Արաբական Միացյալ Էմիրություններում բնակվող Ռուզաննա Սոկրատի Հարությունյանի հետ: Այդ նպատակով 2006 թվականի հուլիս ամսին, խաբեությամբ Դուբայ քաղաքում պոռնկությամբ զբաղվելով գումարներ վաստակելու խոստումներով, Երևան քաղաքում հավաքագրել է Արմենուհի Աշոտի Ասատրյանին: Ամայա Մատուլյանը Արմենուհի Ասատրյանին տրամադրել է Արաբական Միացյալ Էմիրությունների մուտքի հրավերք և Երևան-Մոսկվա, Մոսկվա-Դուբայ չվերթի ուղետոմսեր և 2006 թվականի հուլիսի 29-ին նրան փոխադրել Դուբայ քաղաք: Ըստ նախնական համաձայնության Դուբայ քաղաքում Ռուզաննա Հարությունյանը վերցրել է իր մոտ է պահել Արմենուհի Ասատրյանի անձնագիրը, ապա օգտագործելով նրա անձնագրի բացակայության, ինչպես նաև օտար երկրի օրենքներին ծանոթ չլինելու, գումար չունենալու, Դուբայ փոխադրելու և մուտքի հրավերք ձեռք բերելու ծախսերը մարելու կապակցությամբ Արմենուհի Ասատրյանի մոտ ծագած վիճակի խոցելիությունը, նրա նկատմամբ իրականացրել են փոխադարձ հսկողություն և մինչև 2007 թվականի փետրվար ամիսը

նրան պահել սեռական շահագործման մեջ տիրանալով նրա կողմից մարմնավաճառությամբ վաստակած գումարներին:

Ամայա Մատուլյանը շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելու, փոխադրելու, ստանալու և սեռական շահագործման մեջ ներգրավելու դիտավորությամբ նախնական համաձայնության գալով Ռուզաննա Սոկրատի Հարությունյանի հետ 2006 թվականի օգոստոս ամսին խաբեությամբ Դուբայ քաղաքում պոռնկությամբ զբաղվելով գումարներ վաստակելու խոստումներով, Հայաստանի Հանրապետությունում հավաքագրել է Կարինե Նաչատուրի Ավդայանին: Ամայա Մատուլյանը Կարինե Ավդայանին տրամադրել է Արաբական Միացյալ Էմիրությունների մուտքի հրավերը, Երևան-Մոսկվա, Մոսկվա-Դուբայ չվերթի ուղետոմսեր և 2006 թվականի օգոստոսի 16-ին նրան փոխադրել է Դուբայ քաղաք: Ըստ նախնական համաձայնության Դուբայ քաղաքում Ռուզաննա Հարությունյանը վերցրել և իր մոտ է պահել Կարինե Ավդայանի անձնագիրը, ապա օգտագործելով նրա անձնագրի բացակայության, ինչպես նաև օտար երկրի օրենքներին ծանոթ չլինելու, գումար չունենալու, Դուբայ փոխադրելու և մուտքի հրավերը ձեռք բերելու ծախսերը մարելու կապակցությամբ Կարինե Ավդայանի մոտ ծագած վիճակի խոցելիությունը, նրան մինչև 2006 թվականի հոկտեմբեր ամիսը պահել է սեռական շահագործման մեջ տիրանալով նրա կողմից մարմնավաճառությամբ վաստակած գումարներին: Կարինե Ավդայանի անձնագիրը վերադարձնելու համար Ռուզաննա Հարությունյանը նրանից պահանջել է 6.000 ԱՄՆ դոլար, գումարը ստանալուց հետո վերադարձրել է նրա անձնագիրը: Ամայա Մատուլյանը շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելու, փոխադրելու, ստանալու և սեռական շահագործման մեջ ներգրավելու դիտավորությամբ նախնական համաձայնության գալով Ռուզաննա Սոկրատի Հարությունյանի հետ 2006 թվականի նոյեմբեր ամսին խաբեությամբ Դուբայ քաղաքում պոռնկությամբ զբաղվելով գումարներ վաստակելու խոստումներով, Երևան քաղաքում հավաքագրել է Մարինե Հարությունի Նալբանդյանին: Ամայա Մատուլյանը Մարինե Նալբանդյանին տրամադրել է Արաբական Միացյալ Էմիրությունների մուտքի հրավերը, Երևան-Մոսկվա, Մոսկվա-Դուբայ չվերթի ուղետոմսեր և 2006 թվականի նոյեմբերի 9-ին նրան փոխադրել է Դուբայ քաղաք: Ըստ նախնական համաձայնության Դուբայ քաղաքում Ռուզաննա Հարությունյանը վերցրել և իր մոտ է պահել Մարինե Նալբանդյանի անձնագիրը, ապա օգտագործելով նրա անձնագրի բացակայության, ինչպես նաև օտար երկրի օրենքներին ծանոթ չլինելու, գումար չունենալու, Դուբայ փոխադրելու և մուտքի հրավերը ձեռք բերելու ծախսերը մարելու կապակցությամբ Մարինե Նալբանդյանի մոտ ծագած վիճակի խոցելիությունը, նրան մինչև 2007 թվականի փետրվար ամիսը պահել է սեռական շահագործման մեջ տիրանալով նրա կողմից մարմնավաճառությամբ վաստակած գումարներին:

Ամայա Մատուլյանը նպատակ ունենալով թաքցնել և խեղաթյուրել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները մի խումբ անձանց սեռական շահագործման ենթարկելու միջոցով վաստակած գումարների ծագումը, այդ եկամուտները փոխակերպել է այլ արժեքի ձեռք է բերել 4.769.500 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ոսկյա զարդեր: Ամայա Մատուլյանը 2008 թվականի հունիս ամսից մինչև 2009 թվականի փետրվար ամիսն ընկած ժամանակահատվածում ոսկյա զարդերը գրավադրել է Երևան քաղաքի տարբեր գրավատներում: Ամայա Մատուլյանը 2004 թվականի փետրվար-մարտ ամիսների ընթացքում Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքից «Վեստերն Յունիոն» դրամական փոխանցումների համակարգով 2.028.996 ՀՀ դրամին համարժեք 3.600 ԱՄՆ դոլար է փոխանցել Ռուսաստանի Դաշնությունում գտնվող Սևակ Սիմոնյանին և դրամական փոխանցումներ է կատարել Հայաստանի Հանրապետությունում գտնվող Սուսաննա Նիկողոսյանի և Ազնեսա Մարտիրոսյանի անվամբ: Ամայա Մատուլյանը փոխանցման միջոցով

օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացած 6.798.496 ՀՀ դրամ:

Վերը նկարագրված հանցանքները կատարելու համար Ամայա Ստեփանի Մատուլյանը ներգրավվել է որպես մեղադրյալ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, որը քրեական պատասխանատվություն է սահմանում շահագործման նպատակով մարդուն հավաքագրելու, փոխադրելու, հաճնելու, թաքցնելու կամ ստանալու համար, ինչը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ և կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 1321 հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով, որը քրեական պատասխանատվություն է սահմանում մարդուն պորնկության կամ սեռական շահագործման այլ ձևերի մեջ, հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների ներգրավելու համար, ինչը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ երկու կամ ավելի անձանց նկատմամբ, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, որը քրեական պատասխանատվություն է սահմանում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելու /փողերի լվացման/ համար, ինչը կատարվել է խոշոր չափերով, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 325 հոդվածի 1-ին մասով, որը քրեական պատասխանատվություն է սահմանում կեղծ փաստաթղթեր օգտագործելու համար, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 38-329 հոդվածի 1-ին մասով, որը քրեական պատասխանատվություն է սահմանում պետական սահմանն ապօրինի հատելուն օժանդակելու համար: Ամայա Ստեփանի Մատուլյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության մարմնի կողմից 2009 թվականի հունիսի 17-ին Ռուզաննա Հարությունյանին մեղադրանք է առաջարկվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 1321 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով: Ռուզաննա Հարությունյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում և որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Նախաքննության մարմինը 2009 թվականի հուլիսի 22-ի որոշմամբ «թիվ 62202607 քրեական գործից անջատել է Ռուզաննա Հարությունյանի վերաբերյալ մասը, այն առանձնացրել առանձին վարույթում և շնորհել նախկին 69102809 համարը»:

Վերը ներկայացված հանցանքը կատարելու համար Քայանե Մելքոնյանը և Սուսաննա Նիկողոսյանը ներգրավվել են որպես մեղադրյալ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 2008 թվականի մարտի 7-ին Երևանի քրեական դատարանի թիվ ԵՔԲԴ/0045/01/08 դատավճռով դատապարտվել են ազատազրկման :

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 1321 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 325 հոդվածի 1-ի մասով, 38-329 հոդվածի 1-ին մասով, առաջարկված մեղադրանքում ամբաստանյալ Ամայա Ստեփանի Մատուլյանն իրեն մեղավոր ճանաչեց մասնակիորեն և ցուցմունք տվեց այն մասին, որ ինքը 2003 թվականին գտնվել է Դուբայ քաղաքում: Իրեն զանգահարել է ընկերուհին և հայտնել, որ աղջիկներ կան, որոնք ցանկանում են գալ Դուբայ: Ինքը օգնել է նրանց մեկնել Դուբայ և այդ ճանապարհով Լուսինե Հարությունյանը, Քայանե Ղանդիլյանը մեկնել են Դուբայ: Նրանք տեղյակ են եղել թե ուր են գնում և ինչով են զբաղվելու: Այդ աղջիկները Դուբայ են գնացել իրենց կամքով, ինքը ոչ մեկին չի ստիպել, ազատությունից չի զրկել, չի ծեծել, բացի այդ նրանք կապ են ունեցել իրենց ծնողների հետ, իսկ անձնագրերը նրանց մոտ են եղել: Ինքը նրանց չի ստիպել, իր բռնվելուց հետո

նրանք տարիներ շարունակ մնացել են Դուբայ քաղաքում, իրենց հաճույքները վայելել են, իսկ ապա եկել ու իր «վրա գրում են»: Ինքը հավաքագրել է մարդկանց և ուղարկել Դուբայ, սակայն ոչ մեկի չի ստիպել, նրանք տեղյակ են եղել, որ գնում են մարմնավաճառությամբ զբաղվելու և կիսովի գումար աշխատելու: 2006 թվականին կրկին դիմել են իրեն ու խնդրել իրենց տանել աշխատելու, ինքը ոչ մի վատ բան չի արել: Ինքը սխալ արել է, որը պետք է չաներ, բայց արել է: Ամայյա Մատուլյանն իրեն մեղավոր չի ճանաչում ՀՀ քրեական օրենսգրքի 1321 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, քանի որ ոսկյա զարդերը եղել են իր անձական օգտագործման զարդերը, որոնց մի մասը նվեր է ստացել, իսկ մի մասը գնել է, բացի այդ ոչ մեկի չի շահագործել, չի սպառնացել, ազատությունից չի զրկել, ծեծի չի ենթարկել, ֆիզիկական բռնություն չի եղել, աղջիկները բոլորը իրենց կամքով են մեկնել Դուբայ: Ինքն արարք կատարել է, բայց թող իրեն դատեն արածի համար, այլ ոչ թե չարածների համար: Գայանե Ղանդիլյանի կողմից ներկայացրած քաղաքացիական հայցը չի ընդունում, քանի որ նա իրեն գումար չի տվել, ինքն այդ գումարներից տեղեկություն չունի, իսկ նա «շանտաժի սովոր է և ցանկանում է այդ ճանապարհով ևս գումար աշխատել»:

Ամբաստանյալ Ամայյա Ստեփանի Մատուլյանին մեղադրվող արարքները և նրա դրսևորած մեղքը հիմնավորվեցին գործով հետազոտված հետևյալ ապացույցներով.

Տուժող Գայանե Արտաշեսի Ղանդիլյանի ցուցմունքներով այն մասին, որ 2003 թվականի հոկտեմբեր ամսվա սկզբին Գյումրի քաղաքում ծանոթացել է Գայանե Մելքոնյանի հետ: Գայանե Մելքոնյանն իրեն առաջարկել է 3 ամիս ժամանակով մեկնել Հնդկաստան իր ծանոթ կնոջ մոտ խմորեղենի խանութում բարձր աշխատավարձով վաճառողուհի աշխատելու: Ինքը համաձայնվել է, մեկնել է Երևան քաղաք, որտեղ մի քանի օր մնացել է Սուսանայի տանը, իսկ ապա մեկնել Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաք: Մոսկվա քաղաքում իրեն դիմավորել են Սևակն ու Ավոն: Նրանք իրեն տարել են իրենց բնակարան, որտեղ մնացել է 10 օր, ապա նրանք պատրաստել են իր լուսանկարով ՌԴ քաղաքացու կեղծ անձնագիր և ինքը 2003 թվականի հոկտեմբերի 17-ին մեկնել է Դուբայ քաղաք: Դուբայ քաղաքում իրեն դիմավորել են Անժելան ու Սաթենիկը և տարել Ամայյա Մատուլյանի «Նանոյի» բնակարան: Ամայյա Մատուլյանը վերցրել է իր անձնագիրը և ասել. «այսօր գնա հանգստացիր, իսկ վաղը կհագնվես, կքսվես և աղջիկների հետ կգնաս դիսկոտեկա, որտեղ կզբաղվես մարմնավաճառությամբ»:

Հաջորդ օրը զբաղվել է մարմնավաճառությամբ, իսկ աշխատած գումարները տվել է Ամայյա Մատուլյանին: Գայանե Ղանդիլյանը շուրջ 5 ամիս մնացել է Ամայյա Մատուլյանի մոտ և զբաղվել մարմնավաճառությամբ, ահուվախով աշխատել է Արաբական Միացյալ Էմիրություններում: Ինքն այլ ճանապարհ չի ունեցել և ստիպված զբաղվել է մարմնավաճառությամբ, քանի որ «հնար չի եղել», օրեկան միջինն աշխատել է 300 ԱՄՆ դոլար: Ամայյա Մատուլյանն այդ ընթացքում իր աշխատած գումարներից իր համար գնել է ոսկյա շղթա, մատանի, ականջօղ, հագուստներ: Ամայյա Մատուլյանի բռնվելուց 2004 թվականից հետո Անժելան իրենց անձնագրերը հանձնել է և ասել. «Նանոյին բռնել են, դուք կարող եք աշխատել ինքներդ ձեզ համար»: Այդ օրվանից իրենք աշխատել են առանց հսկողության և իրենք են տնօրինել իրենց աշխատած գումարները: Ինքը ներկայացնում է քաղաքացիական հայց և խնդրում Ամայյա Մատուլյանից հօգուտ իրեն բռնագանձել 20.000 ԱՄՆ դոլար:

Տուժող Մարինե Հարությունի Նալբանդյանի ցուցմունքներով այն մասին, որ 2006 թվականի նոյեմբեր ամսին ծանոթացել է «Նանոյի» Ամայյա Մատուլյանի հետ: Ինքն այդ ժամանակ գտնվել է նյութապես վատ վիճակում և Ամայյա Մատուլյանին խնդրել է իրեն օգնել մեկնել Դուբայ քաղաք: Ամայյա Մատուլյանի օգնությամբ ինքն անձնագիր է ստացել և նրա օգնությամբ գնացել Դուբայ, քանի որ ցանկացել է մի

երկու կոպեկ աշխատել և վերադառնալ: Մեկնելու ժամանակ Ամայա Մատուլյանը իր ընտանիքի անդամներին գումար է տվել, որպեսզի նրանք ապրեն մինչև իր կողմից գումար ուղարկելը: Ամայա Մատուլյանի դեմ բողոք, պարտք ու պահանջ չունի, այլ գոհ է նրանից, որ նրա «օգնությամբ իր աչքերը բացվել են», բացի այդ մինչև օրս ինքը չի վերադարձրել Ամայա Մատուլյանին պարտք գումարը: Եթե ինքը ներկա պահին հնարավորություն ունենար, ապա կրկին կմեկներ Դուբայ քաղաք: Մինչև Դուբայ քաղաք մեկնելը ինքը Հայաստանում զբաղվել է մարմնավաճառությամբ: Դուբայ քաղաքում օրական սպասարկել է մեկ մարդու և աշխատել 1500 դրհամ:

Տուժող Մարինե Հարությունի Նալբանդյանը դատաքննության ընթացքում նախաքննության ընթացքում տված ցուցմունքը հրապարակելուց հետո հայտնեց, որ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներում սխալ է գրել միայն անձնագրի պահը, այսինքն այն, որ «անձնագիրը տվել է Նանոյին», իսկ նախաքննության ընթացքում գրված ցուցմունքն ամբողջությամբ ճիշտ է: Նախաքննության ընթացքում իր կողմից տրված գումարային հարցերը չափազանցված են և չեն համապատասխանում իրականությանը:

Տուժող Լուսինե Վաղարշակի Հարությունյանի ցուցմունքներով այն մասին, որ 2003 թվականի օգոստոս ամսվա կեսերին Գյումրի քաղաքում, աշխատանքի վայրում ծանոթացել է Գայանե Մելքոնյանի հետ: Գայանե Մելքոնյանն իրեն առաջարկել է բարձր աշխատավարձով մատուցողուհու աշխատանք Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում: Ինքը համաձայնվել է և երեք օր անց Գայանե Մելքոնյանի ուղեկցությամբ եկել է Երևան քաղաք, իսկ անձնագիրը տվել Գայանե Մելքոնյանին: Ինքը չորս օր բնակվել է Սուսանայի տանը, ապա մեկնել Ռուսաստանի Ղաչնույան Մոսկվա քաղաք, որտեղ իրեն դիմավորել են Սևակ և Ավո անուններով հայազգի տղաներ և տարել իրենց տուն, որտեղ մնացել է 14 օր: 2003 թվականի սեպտեմբերի 2-ին Սևակը և Ավոն իրեն ճանապարհել են Դուբայ քաղաք, որտեղ իրեն դիմավորել են երկու աղջիկներ և տարել Ամայա Մատուլյանի տուն: Ամայա Մատուլյանն իրեն դիմավորել է, տանը մարդ չի եղել, իսկ երեկոյան տուն են եկել մի քանի աղջիկներ, իսկ հաջորդ օրը Ամայա Մատուլյանն իրեն ուղարկել է դիսկոտեկա: Ինքը Դուբայ քաղաքում աշխատել է որպես մարմնավաճառ, իսկ աշխատած գումարներն ամբողջությամբ տվել է Ամայա Մատուլյանին: Ամայա Մատուլյանի մոտ մնացել է մինչև նրա ծերբակալվելը, որից հետո իրենց անձնագրերը տվել են իրենց:

Տուժող Լուսինե Հարությունյանը դատաքննության ընթացքում հարցերին պատասխանելու ժամանակ հայտնեց, որ Գայանե Մելքոնյանը և Սուսանան իրեն մինչև վերջ չեն ասել, որ Դուբայ քաղաքում աշխատելու է որպես մարմնավաճառ: Դուբայ քաղաքում իրեն դիմավորել է «Ազնեսան» և տարել Ամայա Մատուլյանի մոտ: Ամայա Մատուլյանն իրեն ասել է. «այսօր հոգնած ես, լողացիր քնիր», իսկ հաջորդ օրն իրեն ուղարկել է դիսկոտեկա և ասել, որ պետք է զբաղվես մարմնավաճառությամբ: Ինքը մերժել է ու ասել, որ իրեն մատուցողուհու աշխատանք են խոստացել: Ամայա Մատուլյանն ասել է. «մոռացիր այդ մասին, այստեղ պետք է մարմնավաճառությամբ գումար վաստակես, հո քեզ սիրուն աչքերի համար չե՞ն բերել այստեղ»: Ինքը ստիպված է աշխատել, քանի որ «Նանոն» վախեցրել է և ասել. «կզանգեմ պոչիկ Ալիյին, կզա կտանի, ամեն տեղից ամեն բան կանի և տեսնեմ, թե ո՞չնեց չե՞ք աշխատում»: Աշխատած գումարը տվել է Ամայա Մատուլյանին: Նա իր ընտանիքի անդամներին երկու անգամ 100 դոլար է ուղարկել, բացի այդ տվել է տան վարձը, սննդի գումարը և հագուստներ է գնել: Ինքն ամեն օր գնացել է դիսկոտեկա և յուրաքանչյուր օր աշխատել 300-ից 500 ԱՄՆ դոլար, նայած օր, բացի այդ օրեր են եղել, որ չի աշխատել: Երբ չի աշխատել, Ամայա Մատուլյանը խփել է և ասել. «զնա աշխատիր», իսկ խփել է կամ ձեռքով, կամ փայտով, կամ

երկարացման լարով: Անձնագրերը գտնվել են Ամայա Մատուլյանի մոտ, իսկ եթե նրան չձերբակալեին, հնարավոր է, որ նա վերադարձներ աշխատած գումարները: Ինքը Ամայա Մատուլյանի հանդեպ պարտք ու պահանջ չունի, իրեն ոչինչ պետք չէ: Տուժող Կարինե Խաչատուրի Ավդալյանի ցուցմունքներով այն մասին, որ իր ծնողները բնակվել են գյուղում, իսկ ինքը Գյումրի քաղաքում և ցանկացել է բնակարան գնել, քանի որ բնակարան չի ունեցել: Ինքը գրուցել է Գայանեի հետ, նա ասել է. «կցանկանա՞ս գնալ Դուբայ, աշխատել որպես մարմնավաճառ, ապա գալ բնակարան գնել»: Ինքը ցանկություն է հայտնել, վերցրել է «Նանոյի» հեռախոսահամարը, զանգահարել է նրան, պայմանավորվել, ապա եկել է Երևան քաղաք ու հանդիպել նրան: Ամայա Մատուլյանը օգնել է իրեն, ինքը ստացել է մուտքի հրավերը և մեկնել Դուբայ քաղաք: Ինքն ի սկզբանե տեղյակ է եղել, թե ինչ պետք է աշխատի և Դուբայ է մեկնել իր ցանկությամբ: Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքով մեկնել է Դուբայ, որտեղ իրեն դիմավորել է Ռուզաննա Հարությունյանը և վերցրել իր անձնագիրը, ապա ասել է. «այսօր հանգստացիր, իսկ վաղը կգնաս աշխատելու»: Սակայն ինքը նույն օրը աղջիկների հետ գնացել է դիսկոտեկա, աշխատել է, իսկ աշխատած գումարները տվել է Ռուզաննա Հարությունյանին: Ինքը աշխատել է շուրջ ամիս ու կես, որի ընթացքում ծանոթացել է մի տղայի հետ և նրա հետ մեկնել Աբու-Դաբի, որտեղ նրա հետ ապրել է հինգ ամիս, ապա վերադարձել Հայաստան և ընկերոջ իսկ օգնությամբ իր համար բնակարան է գնել Գյումրի քաղաքում: Տուժող Կարինե Ավդալյանը դատաքննության ընթացքում հարցերին պատասխանելու ժամանակ հայտնեց, որ ինքը Ամայա Մատուլյանին պետք է վերադարձներ վիզայի և տոմսի գումարը, շուրջ 3000-4000 ԱՄՆ դոլար: Ինքը Դուբայ քաղաքում Ամայա Մատուլյանին չի հանդիպել, քանի որ իր ընկերոջ հետ գնացել է Աբու-Դաբի: Ռուզաննա Հարությունյանի տանը մնացել է շուրջ 2 ամիս, օրեկան աշխատել է 700 դրհամ, 600 դրհամ, 500 դրհամ, իսկ աշխատած գումարները տվել է Ռուզաննա Հարությունյանին: Ռուզաննա Հարությունյանն ասել է. «ես պիտի գումարները հավաքեմ, իսկ երբ Ամայան գա, իր հետ ձեր հարցերը կլուծեք»: Ռուզաննա Հարությունյանն իրենց աշխատած գումարներից տվել է տան վարձը, սննդի գումարը և իրենց համար շորեր է գնել, որոնք թանկ գներով վաճառել է իրենց վրա: Իրեն ոչ մեկը չի արգելել տանից դուրս գալ, խանութ է գնացել, գնումներ կատարել: Ինքը մինչև Ամայա Մատուլյանի Դուբայ գալը Ռուզաննայից պահանջել է իր անձնագիրը, որպեսզի ընկերոջ հետ գնա, սակայն նա իրեն ասել է, որ «դու դեռ պարտքեր ունես, անձնագիրդ չեմ տա, այն կպատռեմ և այլն»: Ինքը Ռուզաննա Հարությունյանից 20.000 դրհամով գնել է իր անձնագիրը և ընկերոջ հետ գնացել Աբու-Դաբի: Ինքը Ամայա Մատուլյանից պարտք ու պահանջ չունի: Վկա Անահիտ Վաչագանի Ղանդիլյանի ցուցմունքներով այն մասին, որ Գայանե Ղանդիլյանն իր աղջիկն է: Իր աղջիկը 2003 թվականին անհայտ կորել է, ուստի ինքը ոստիկանությունում հայտարարություն է տվել: Որոշ ժամանակ անց տեղեկացել է, որ իր դստերը խաբեությամբ տարել են Դուբայ քաղաք, որտեղ նա 4 տարի զբաղվել է տաժանակիր աշխատանքով մարմնավաճառությամբ: Իր դուստրը եղել է 17 տարեկան, ամուսնացած չի եղել և նրան խաբելով վաճառել են արաբների շեյխերին: Ամայա Մատուլյանն իր դստերը լավ հագուկապ տվել է, պահել, իսկ եթե տաս դոլար է ծախսել, ապա իր աղջկանից վերցրել է մարմնավաճառությամբ աշխատած գումարները: Ինքը որպես ծնող խնդրում է խստագույն պատիժ, քանի որ որպես մայր չի կարողանում պարզ ձակատով նայել որևէ մեկին: Ինքը հեռախոսով խոսել է դստեր հետ, նրա ծնունդից հետո 2004 թվականի փետրվարի 4-ին: Գայանե Ղանդիլյանն իրեն ասել է. «մամ, ես շատ լավ եմ, Դուբայում եմ, ամուսնացել եմ և աշխատում եմ խմորեղենի ցեխում», իսկ ապա ստացել է գումար: Մինչ դստեր հետ խոսելն իրեն ուղարկել են 250 ԱՄՆ դոլար և խաղալիքներ: Ինքը հեռախոսով խոսել է Ամայա Մատուլյանի հետ, նա ասել է, որ

«Գայանեն իր մոտ է, նրան պահում է իր աղջկա պես և նա աշխատում է խնորեղենի ցեխում»։ Իր դուստրը ստիպված է զբաղվել մարմնավաճառությամբ, քանի որ նրան ստիպել են, վերցրել անձնագիրը և ծեծել են։

Վկա Սևակ Նվերի Սիմոնյանի ցուցմունքներով այն մասին, որ ինքը գտնվել է Մոսկվա քաղաքում և հայ աղջիկների ու տղաների կեղծ ռուսական անձնագրեր է տվել, որպեսզի մեկնեն Դուբայ քաղաք, կեղծել է շուրջ 20-ից 30 անձնագիր։ Կատարած արարքի համար դատապարտվել է։ Դուբայ քաղաքից զանգահարել են իրեն և ասել, որ «պետք է դիմավորեն որևէ անձի, անձնագիր տան և ճանապարհեն Դուբայ»։ Ինքը խոսել է հեռախոսով, ոչ մեկի հետ չի հանդիպել, իսկ իրեն զանգահարել են «Նարինե», «Նանո» անուններով անձնավորությունները։ Կատարած գործողությունների համար վճարել է զանգահարողը և ինքն այդ ճանապարհով գումար է աշխատել։ Ինքը աղջիկներին դիմավորել է, նկարել, ապա անձնագրերը տվել է նրանց ու ճանապարհել։ Ինքը ոչ մեկի չի հանդիպել, այլ խոսել և պայմանավորվել է հեռախոսով, իսկ յուրաքանչյուր անձնագրի համար վճարել են 1000-ից 1500 ԱՄՆ դոլար։ Վկա Սևակ Սիմոնյանը պնդեց նախաքննության ընթացքում տված ցուցմունքները և հայտնեց, որ դեպքից բավականին ժամանակ է անցել և ներկայումս ինքը մանրամասն չի հիշում։

Վկա Արա Ստեփանի Մնացականյանը դատաքննության ժամանակ օգտվեց իր դատավարական իրավունքներից, հրաժարվեց ցուցմունքներ տալ և հարցերին պատասխանել։

Ամբաստանյալ Ամայա Մատույանի հանցավոր արարքները հիմնավորվում են նաև գործով հետազոտված հետևյալ ապացույցներով.

- վկա Արա Մնացականյանի նախաքննության ընթացքում տված և դատաքննության ընթացքում հրապարակված ցուցմունքով այն մասին, որ Ամայա Մատույանն իր հարազատ քույրն է։ Ամայա Մատույանը 1990-ական թվականների վերջերից սկսած պարբերաբար մեկնել է Դուբայ քաղաք, որտեղ բնակվել է տևական ժամանակով։ Ամայա Մատույանը մի քանի անգամ դատապարտվել է, այդ թվում նաև կավատությամբ զբաղվելու համար։ Արա Մնացականյանը տեղյակ չէ, թե ովքեր են մեկնել Դուբայ Ամայա Մատույանի մոտ, ինքը որևէ առնչություն չի ունեցել այդ գործերին և տեղյակ չի եղել, որ Ամայա Մատույանը գտնվում է հետախուզման մեջ։ Ամայա Մատույանը ունեցել է բավականին մեծ քանակության ոսկյա զարդեր, որոնց մեծ մասը գնել է և իր հետ Երևան բերել Դուբայ քաղաքից, իսկ թե որ զարդեր է գնել, տեղյակ չէ։ Ամայա Մատույանը մոտ երկու տարի գտնվում է Երևան քաղաքում։ Նա չի աշխատել, ուստի իրեն պատկանող ոսկյա զարդերը ընկերոջ Արմեն Հակոբյանի անվամբ գրավ է դրել տարբեր գրավատներում։ 2009 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում իր կնոջից խնդրել և վերցրել է մեկ ոսկյա շղթա ու ոսկյա թևնոց, որոնք գրավ է դրել գրավատանը, իսկ թե ո՞ր գրավատանը և որքան գումար է վերցրել, չգիտի /հատոր 3-րդ գթ. 133-134/։

- Վկա Արաքսյա Գևորգի Սահակյանի նախաքննության ընթացքում տված և դատաքննության ընթացքում հրապարակված ցուցմունքով այն մասին, որ Ամայա Մատույանն իր ամուսնու Արա Մնացականյանի հարազատ քույրն է, որի հետ գտնվում է նորմալ հարաբերությունների մեջ։ Ամայա Մատույանը երկար ժամանակով բացակայել է Հայաստանից և բնակվել Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում, իսկ Հայաստանում գտնվելու ժամանակ բնակվել է տարբեր հասցեներում։ Արաքսյա Սահակյանը տեղյակ չէ, թե Ամայա Մատույանը Դուբայ քաղաքում ինչով է զբաղվել, նրա գործերի հետ չի առնչվել և տեղյակ չի եղել, որ նա գտնվել է հետախուզման մեջ։ Ամայա Մատույանը միշտ կրել է ոսկյա զարդեր, որոնք իր իմանալով գնել և իր հետ բերել է Դուբայ քաղաքից։ 2008 թվականի հոկտեմբեր ամսին Ամայա Մատույանը եկել է իրենց տուն և ասել, որ իրեն գումար է անհրաժեշտ, միաժամանակ խնդրել է որոշ ժամանակով իրեն տալ ոսկյա

գարդերը, որպեսզի դրանք թողնի գրավատանը և գումար վերցնի, իսկ հետագայում դրանք գրավից կհանի և կվերադարձնի իրեն: Ինքը համաձայնվել է, նրան է տվել իր երկու ապարանջանները, որոնցից մեկը մոտավորապես եղել է 750 հարգի 60 գրամ քաշով, իսկ մյուսը 750 հարգի 20 գրամ քաշով: Նշված գարդերը իրեն նվիրել են իր ծնողները, այդ իսկ պատճառով երբևէ այդ ոսկյա գարդերը չի կշռել և կոնկրետ չգիտի այդ գարդերի քաշը և արժեքը: 2009 թվականի փետրվար ամսին տեղեկացել է, որ Ամայա Մատուլյանը ձերբակալվել է, իսկ թե իր կողմից տրված ոսկյա գարդերը ներկայումս որտե՞ղ են, չգիտի /հատոր 3-րդ գթ. 274-275/:

- Վկա Ալլա Սեդրակյանի նախաքննության ընթացքում տված և դատաքննության ընթացքում հրապարակված ցուցմունքով այն ամսին, որ ինքը 1996-1997 թվականներին Անահիտ Մալխասյանի ղեկավարությամբ Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում զբաղվել է մարմնավաճառությամբ, որտեղ ծանոթացել է կավատությամբ զբաղվող «Բանգլադեշցի Նանոյի» Ամայա Մատուլյանի հետ: Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո մշտական աշխատանք չունենալու պատճառով որոշել է կրկին մեկնել Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաք և զբաղվել մարմնավաճառությամբ: Ալլա Սեդրակյանը 2001 թվականի Երևան քաղաքում հանդիպել է «Նանոյի» հետ և նրան հայտնել իր մտադրության մասին, միաժամանակ հայտնել է, որ Դուբայ քաղաքից արտաքսվել է և չի կարողանում իր անձնագրով մեկնել Դուբայ: Ամայա Մատուլյանը համաձայնվել է կազմակերպել մեկնումը և վերցրել է իր լուսանկարը: Մի քանի օր անց Ամայա Մատուլյանը զանգահարել է և ասել, որ փաստաթղթերը պատրաստ են, կարող է մեկնել Դուբայ քաղաք: «Զվարթնոց» օդանավակայանում Վարդուհի անունով անձը իրեն է փոխանցել իր լուսանկարով, սակայն Արինկա Աթանեսյանի տվյալներով ՀՀ քաղաքացու անձնագիր և ինքը մեկնել է Դուբայ քաղաք /հատ. 1-ին, գթ. 191-195/:

- Վկա Ավետիք Խաչատրյանի նախաքննության ընթացքում տված և դատաքննության ընթացքում հրապարակված ցուցմունքով այն ամսին, որ 2001 թվականին մեկնել է Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաք, որտեղ շուրջ մեկ տարի աշխատել է տարբեր շինարարական կազմակերպություններում: 2002 թվականի հուլիս ամսին իր հարևան Սևակ Սիմոնյանի միջոցով ծանոթացել է նրա հորաքրոջ որդու Արայիկ Աղաջանյանի հետ: Արայիկ Աղաջանյանը մտերիմ հարաբերությունների մեջ է գտնվել Դուբայ քաղաքում կավատությամբ զբաղվող մի շարք հայ կանանց հետ: Այդ ժամանակահատվածից սկսված իրենք երեքով դիմավորել են Հայաստանից Մոսկվա ժամանող աղջիկներին, որոնք մեկնելիս են եղել Դուբայ քաղաքում գտնվող հայ ազգի կավատների Ամայա Մատուլյանի և մյուսների մոտ մարմնավաճառությամբ գումար վաստակելու նպատակով: Ինքը և Սևակ Սիմոնյանը դիմավորել են Հայաստանից ժամանող աղջիկներին և տեղափոխել վարձակալած բնակարան: Ինքն անձամբ այդ աղջիկների համար կեղծ անձնագրեր չի պատրաստել, սակայն տեղյակ է եղել, որ այդ հարցերով զբաղվում են Սևակ Սիմոնյանն ու Արայիկ Աղաջանյանը: ՌԴ քաղաքացու կեղծ անձնագրերը պատրաստելուց հետո այդ աղջիկներին տարել են օդանավակայան, տվել անձնագրերը և ձանապարհել Դուբայ: Ինքն անձամբ այդ աղջիկների հետ չի զրուցել և տեղյակ չի եղել, որ նրանցից շատերին արտասահմանում մատուցողուհու կամ վաճառողուհու աշխատանք խոստանալով ՀՀ-ից հավաքագրել են, ուղարկել ՌԴ Մոսկվա քաղաք, իսկ իրենց կողմից Դուբայ ձանապահելուց հետո այդ աղջիկներին սեռական շահագործման են ենթարկել: Կատարած արարքների համար ինքը 2006 թվականի դեկտեմբեր ամսին դատապարտվել է /հատոր 1-ին գթ. 242-244/:

- Վկա Սևակ Սիմոնյանի նախաքննության ընթացքում տված և դատաքննության ընթացքում հրապարակված ցուցմունքով այն ամսին, որ 2002-2005 թվականներն ընկած ժամանակահատվածում

ինքը, Արայիկ Աղաջանյանը և Ավետիք Խաչատրյանը դիմավորել են Հայաստանից ժամանած մարմնավաճառների, իսկ ապա ճանապարհել Դուբայ քաղաք, իսկ նրանց տարիքը չբավականացնելու դեպքում նրանց տվյալներով պատրաստել են ՌԴ քաղաքացու կեղծ անձնագրեր, ապա նոր ճանապարհել Դուբայ: Դուբայ քաղաքից իրենց զանգահարել են այնտեղ կավատությամբ զբաղվող Մարիետա Մուսայեյանը, Նարինե Խաչատրյանը, Անահիտ Մալխասյանը և հայտնել Մոսկվա քաղաք ժամանող մարմնավաճառների տվյալները, թռիչքի օրը, ժամը և համարը: Իրենք գնացել են օդանավակայան, դիմավորել տվյալ մարմնավաճառներին, իսկ ապա նրանց ճանապարհել են Դուբայ քաղաք: Նման հարցերով մի քանի անգամ զանգահարել է Ամալյա Մատուլյանը «Նանո» մականունով: Իրենք զանգահարող կավատներին չեն ճանաչել, չեն հանդիպել, նրանց հետ պայմանավորվածություն ձեռք են բերել հեռախոսագանգի միջոցով: Դիմավորած և Դուբայ ճանապարհած մարմնավաճառների հետ իր շփումը սահմանափակվել է նրանց դիմավորելով, բնակարանում ժամանակավորապես տեղավորելով, հարկ եղած դեպքում նրանց համար կեղծ անձնագիր պատրաստելով, իսկ ապա Դուբայ քաղաք ճանապարհելով /հատոր 1-ին գթ. 84-85/:

- Տուժող Արմենուհի Աշոտի Ասատրյանի նախաքննության ընթացքում տված և դատաքննության ընթացքում հրապարակված ցուցմունքով այն մասին, որ ինքը 2002 թվականին Հոկտեմբերյանի բնակիչ Վեռայի միջոցով գնացել է Դուբայ, որտեղ Սուսաննա անունով մի կնոջ մոտ աշխատել է մարմնավաճառ: 2003 թվականին վերադարձել է Հայաստան և աշխատել որպես վաճառողուհի: 2006 թվականին իրեն է զանգահարել Մարիետան ու ասել, որ Դուբայի Նանոն Հայաստանում է և ու ցանկանում է իր հետ խոսել: Քանի որ ինքը գտնվել է նյութապես ծանր վիճակում, ուստի որոշել է հանդիպել Նանոյի հետ: Ինքը գնացել է Նանոյի բնակարան և Նանոն իրեն առաջարկել է մեկնել Դուբայ մարմնավաճառությամբ գումար աշխատելու համար: Ինքը հարցրել է, թե ի՞նչ պայմանով պետք է մեկնի ու աշխատի: Նանոն ասել է, որ ճանապարհածախսը ինքը կհոգա, իսկ Դուբայ քաղաքում իրեն կդիմավորի իր աջ ձեռքը Ռուզանը, որի տանը կապրի ու կզբաղվի մարմնավաճառությամբ մինչև որ ինքը ժամանի Դուբայ: Միաժամանակ հայտնել է, որ վիզայի ու տոմսի ծախսը կազմելու է 6000 ԱՄՆ դոլար և այդ պարտքը տալուց հետո աշխատելու է ինքն իր համար: Ըստ պայմանավորվածության Դուբայ քաղաքում անձնագիրը և մարմնավաճառությամբ աշխատած գումարները պետք է հանձնել Ռուզանին: Նանոն միաժամանակ հայտնել է, որ 3-4 ամիս հետո ինքը նույնպես կգա Դուբայ և կապրեն միասին: Իրեն այդ պայմանները ձեռնտու են եղել, ուստի համաձայնվել է և 2006 թվականի հուլիսի 29-ին մեկնել է Մոսկվա քաղաք, իսկ այնտեղից Դուբայ, որտեղ իրեն դիմավորել է Ռուզանը ու տարել իր տուն: Մեկ շաբաթ հանգստանալուց հետո սկսել է զբաղվել մարմնավաճառությամբ, իսկ վաստակած գումարները տվել է Ռուզանին, որը մատյան է վարել, որում գրել է աղջիկների կողմից տված գումարները և ծախսերը: Օրեկան միջին հաշվով աշխատել է 800-ից 1000 դրիամ գումար, որը կազմել է 250 ԱՄՆ դոլար: Ռուզանը կատարած ծախսերը մեծացրել է և ըստ նրա հաշվարկների այնպես է ստացվել, որ ինքը փակել է իր վրա կատարած ծախսերը, իսկ պարտքը մնացել է: Արմենուհի Ասատրյանը հասկացել է, որ ծուղակ է ընկել ու երբեք այդ պարտքից չի արձնի: Ինքը վախեցել է աղմուկ բարձրացնել, քանի որ գտնվել է օտարության մեջ, անձնագիրը գտնվել է Ռուզանի մոտ, իսկ պարտքը մարելու հեռանկարներ չի ունեցել: 2006 թվականի նոյեմբեր ամսին Նանոն եկել է Դուբայ, տուն վարձել և իր ուղարկած աղջիկների, այդ թվում իր հետ, բնակվել է համատեղ, որից հետո աշխատած գումարները տվել են Նանոյին: Ինքը Նանոյին ասել է, որ պարտքը վաղուց է մարել, Նանոն պատասխանել է, որ Ռուզանի հետ հաշվարկ կանի ու այդ հարցը կլուծի, սակայն այդ հաշվարկը անընդհատ ձգձգվել է: 2007

թվականի ապրիլ ամսին Դուբայ քաղաքում ոստիկանները Նանոյին բռնել են և իրենք ցրվել են: Ինքն իր անձնագիրը 6000 դրհամով 1500 ԱՄՆ դոլարով գնել է Ռուզանից, ապա նոր վերադարձել Հայաստան /հատոր 4-րդ գթ. 11-16, 18-22/:

- Տուժող Մարինե Նալբանդյանի նախաքննության ընթացքում տված և դատաքննության ընթացքում հրապարակված ցուցմունքով այն մասին, որ 2006 թվականի նոյեմբեր ամսվա սկզբին որոշել է մեկնել Դուբայ մարմնավաճառությամբ փող աշխատելու նպատակով: Իր ընկերուհի Տինայի մայրը Մարինեն տվել է Նանոյի

հեռախոսահամարը և ասել, որ նրա օգնությամբ կարող է մեկնել Դուբայ, քանի որ իր աղջիկը նրա օգնությամբ է մեկնել Դուբայ և շատ զոհ է: Մարինե Նալբանդյանը զանգահարել, իսկ ապա հանդիպել է Նանոյին: Նա իրեն ասել է, որ կօգնի մեկնել Դուբայ

մարմնավաճառությամբ գումար աշխատելու համար, սակայն պետք է վերադարձնի իր կողմից կատարած ծախսի գումարը, իսկ ապա նոր աշխատի իր համար: Ինքը համաձայնվել է, Նանոյի օգնությամբ ստացել է ՀՀ քաղաքացու անձնագիր, քանի որ այդ ժամանակ

մշտական բնակության վայր չի ունեցել, ուստի չի կարողացել ստանալ անձնագիր: 2006 թվականի նոյեմբերի 2-ին մեկնել է ՌԴ Մոսկվա քաղաք, իսկ նոյեմբերի 9-ին մեկնել է Դուբայ քաղաք: Մինչև մեկնելը Նանոն իրեն ասել է, որ իր վրա կատարած ծախսերը կազմում են 2000 ԱՄՆ դոլար: 2006 թվականի նոյեմբերի 9-ի ուշ երեկոյան հասել է Դուբայ քաղաք, որտեղ իրեն դիմավորել է Ռուզանը ու տարել իր վարձակալած բնակարան: Մոտ 20 օր

բնակվել է Ռուզանի տանը և այդ ընթացքում տանից դուրս չի ելել, չի աշխատել, իսկ իրեն այդ ընթացքում պահել է Ռուզանը: 2006 թվականի նոյեմբերի 29-ին Նանոն եկել է Դուբայ: Ինքը և մի քանի այլ աղջիկներ, որոնց Դուբայ է ուղարկել Նանոն, նրա հետ միասին տեղափոխվել են այլ բնակարան ու ապրել համատեղ:

Տեղափոխվելուց հետո Նանոն վերցրել է իր անձնագիրը, պահել իր մոտ, որպեսզի անձնագիրը չկորչի, իսկ ապա ասել է, որ պետք է պարտքը 2000 ԱՄՆ դոլարը վերադարձնի: Նանոյի հետ բնակվելու ընթացքում զբաղվել է մարմնավաճառությամբ և աշխատած գումարները տվել Նանոյին, որի մեջ է մտել նաև տան վարձի

գումարը, կոմունալ ծախսերի գումարը և այլն: 2007 թվականին Նանոյի բռնվելուց հետո իրենք հայտնվել են փողոցում, ուստի ինքն ու Ամինան մի քանի օր բնակվել են առանձին, որից հետո ինքը գնացել է Ռուզանի մոտ: Նանոյից տեղեկացել է, որ իր անձնագիրը գտնվում է Ռուզանի մոտ և նրանից պահանջել է անձնագիրը, սակայն Ռուզանը հրաժարվել է վերադարձնել անձնագիրը և ասել է,

որ իրեն պարտք է, պարտքը մարելուց հետո անձնագիրը կվերադարձնի: Որոշ ժամանակ բնակվել է Ռուզանի տանը, ապա իր արքը ընկերոջ հետ բնակվել է առանձին: Այդ ընթացքում ոստիկաններն իրեն բռնել են ու պահանջել անձնագիրը: Ինքը զանգահարել է Ռուզանին, ասել, որ ոստիկանությունում է, եթե անձնագիրը չբերի, ապա ամեն ինչ կպատմի: Ռուզանն իր անձնագիրը վերադարձրել է և այդ օրվանից ինքը Ռուզանին չի տեսել: Մինչև Նանոյի բռնվելը օրեկան Նանոյին տվել է 150-ից 200 ԱՄՆ դոլար: Նանոյի հետ բնակվելու ընթացքում նա իր մորն ուղարկել է 300 ԱՄՆ դոլար և ճամպուրակով հագուստ /հատոր 4-րդ գթ. 31-34/:

- Տուժող Կարինե Ավդալյանի նախաքննության ընթացքում տված և դատաքննության ընթացքում հրապարակված ցուցմունքով այն մասին, որ 2006 թվականի հուլիս, օգոստոս ամիսներին հանդիպել է Ամալյա Մատուլյանին «Նանոյին», նա իրեն առաջարկել է գնալ Դուբայ և մարմնավաճառությամբ գումար աշխատել: Ամալյա Մատուլյանն ասել է, որ իր միջոցներով կլուծի վիզայի և ճանապարհածախսի հարցերը: Ըստ իրենց նախնական

պայմանավորվածության ինքը Նանոյին պարտք է մնացել 4000-5000 ԱՄՆ դոլար, որը պետք է մարեր մարմնավաճառությամբ զբաղվելու արդյունքում վաստակած գումարներով: 2006 թվականի օգոստոսի 15-ին մեկնել է ՌԴ Մոսկվա քաղաք, իսկ այնտեղից մեկնել է Դուբայ:

Տեղափոխվելուց հետո Նանոն վերցրել է իր անձնագիրը, պահել իր մոտ, որպեսզի անձնագիրը չկորչի, իսկ ապա ասել է, որ պետք է պարտքը 2000 ԱՄՆ դոլարը վերադարձնի: Նանոյի հետ բնակվելու ընթացքում զբաղվել է մարմնավաճառությամբ և աշխատած գումարները տվել Նանոյին, որի մեջ է մտել նաև տան վարձի

գումարը, կոմունալ ծախսերի գումարը և այլն: 2007 թվականին Նանոյի բռնվելուց հետո իրենք հայտնվել են փողոցում, ուստի ինքն ու Ամինան մի քանի օր բնակվել են առանձին, որից հետո ինքը գնացել է Ռուզանի մոտ: Նանոյից տեղեկացել է, որ իր անձնագիրը գտնվում է Ռուզանի մոտ և նրանից պահանջել է անձնագիրը, սակայն Ռուզանը հրաժարվել է վերադարձնել անձնագիրը և ասել է,

որ իրեն պարտք է, պարտքը մարելուց հետո անձնագիրը կվերադարձնի: Որոշ ժամանակ բնակվել է Ռուզանի տանը, ապա իր արքը ընկերոջ հետ բնակվել է առանձին: Այդ ընթացքում ոստիկաններն իրեն բռնել են ու պահանջել անձնագիրը: Ինքը զանգահարել է Ռուզանին, ասել, որ ոստիկանությունում է, եթե անձնագիրը չբերի, ապա ամեն ինչ կպատմի: Ռուզանն իր անձնագիրը վերադարձրել է և այդ օրվանից ինքը Ռուզանին չի տեսել: Մինչև Նանոյի բռնվելը օրեկան Նանոյին տվել է 150-ից 200 ԱՄՆ դոլար: Նանոյի հետ բնակվելու ընթացքում նա իր մորն ուղարկել է 300 ԱՄՆ դոլար և ճամպուրակով հագուստ /հատոր 4-րդ գթ. 31-34/:

- Տուժող Կարինե Ավդալյանի նախաքննության ընթացքում տված և դատաքննության ընթացքում հրապարակված ցուցմունքով այն մասին, որ 2006 թվականի հուլիս, օգոստոս ամիսներին հանդիպել է Ամալյա Մատուլյանին «Նանոյին», նա իրեն առաջարկել է գնալ Դուբայ և մարմնավաճառությամբ գումար աշխատել: Ամալյա Մատուլյանն ասել է, որ իր միջոցներով կլուծի վիզայի և ճանապարհածախսի հարցերը: Ըստ իրենց նախնական

պայմանավորվածության ինքը Նանոյին պարտք է մնացել 4000-5000 ԱՄՆ դոլար, որը պետք է մարեր մարմնավաճառությամբ զբաղվելու արդյունքում վաստակած գումարներով: 2006 թվականի օգոստոսի 15-ին մեկնել է ՌԴ Մոսկվա քաղաք, իսկ այնտեղից մեկնել է Դուբայ:

Դուբայում իրեն դիմավորել է Նանոյի ընկերուհի Ռուզանը ու տարել իր բնակարան: Ճանապարհին Ռուզանը վերցրել է իր անձանգիրը և ասել, որ այն պետք է փոխանցի «սպոնսորին»: Նախքան Դուբայ մեկնելը Նանոն իրեն զգուշացրել է, որ Ռուզանը պետք է անձնագիրը վերցնի և որպես երաշխիք պահի իր մոտ, մինչև իր կողմից պարտքը մարելը և դա իր համար անսպասելի չի եղել: Կարինե Ավդալյանը առաջին իսկ օրից զբաղվել է մարմնավաճառությամբ, իսկ աշխատած գումարները տվել է Ռուզանին: Մոտ 2,5 ամիս բնակվել է Ռուզանի տանը, աղջիկների հետ գնացել «դիսկոտեկ», որտեղ հաճախորդ է գտել ու գումարի դիմաց սեռական հարաբերություն ունեցել, իսկ աշխատած գումարները հանձնել է Ռուզանին: Օրեկան աշխատել է 200 ԱՄՆ դոլար և տվել Ռուզանին, որպեսզի պարտքը շուտ մարի և սկսի աշխատել իր համար: Ինքը պարտքը մարել է ու այդ մասին ասել է Ռուզանին, իսկ նա պատասխանել է, որ Նանոն կգա, այդ հարցը նոր կլուծեք: Մի քանի անգամ Ռուզանից պահանջել է իր անձնագիրը, սակայն նա անձնագիրը չի վերադարձրել, այլ ասել է, որ անձնագիրը «սպոնսորի» մոտ է, պարտքը կմարի, նոր անձնագիրը կվերադարձնեն: Այդ ընթացքում ծանոթացել է արաբ տղայի հետ և որոշել նրա հետ մեկնել Աբու-Դաբի ու բնակվել այնտեղ: Ինքն այդ մասին հայտնել է Ռուզանին, սակայն նա զայրացել է ու ասել, որ դեռ պարտքը չի մարել, իսկ անձնագիրը վերադարձնելու համար պահանջել է 20.000 դրամ 6000 ԱՄՆ դոլար: Ռուզանին ասել է, որ իր պարտքը վաղուց մարել է և կրկին պահանջել է անձնագիրը, սակայն նա կտականապես հրաժարվել է առանց գումարի վերադարձնել անձնագիրը: Կարինե Ավդալյանն այդ մասին ասել է ընկերոջը և նա 20.000 դրամով Ռուզանից գնել է անձնագիրը: Ինքը 2,5 ամսվա ընթացքում աշխատել է 15.000 ԱՄՆ դոլար և այն ամբողջությամբ տվել Ռուզանին, իսկ վերջում 6000 ԱՄՆ դոլարով գնել է իր անձնագիրը: Ինքը «ենթադրում է, որ Ռուզանը պետք է Նանոյի հետ համաձայնության եկած լիներ, քանի որ Նանոն էր իրեն Դուբայ ուղարկել և չի կարծում, որ Ռուզանն ինքնազուլս իր անձնագիրը հետ կտար» /հատոր 4-րդ գլ. 60-62/:

- Լուսանկարով անձին ճանաչման ներկայացնելու արձանագրություններով, որոնց ժամանակ Լուսինե Հարությունյանը, Գայանե Ղանդիլյանը, Արմենուհի Ասատրյանը ճանաչման ներկայացված լուսանկարներում պատկերված անձանցից ճանաչել են Ամալյա Մատուլյանին որպես Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում իրենց սեռական շահագործման ենթարկող անձի /հատոր 1-ին գլ. 278, 297, հատոր 4-րդ գլ. 17/:
- Իրեղեն ապացույց ճանաչված և քրեական գործին կցված «Վալգե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատանը թիվ 168244 պայմանագրով գրավադրված 900 հարզի ոսկու համաձուլվածքից պատրաստված 47,360 գրամ քաշով 440.800 ՀՀ դրամ արժողությամբ ապարանջանով, «Ֆաստ-Կրեդիտ» գրավատանը թիվ 107008 պայմանագրով գրավադրված 750 հարզի ոսկու համաձուլվածքից պատրաստված 444.700 ՀՀ դրամ արժողությամբ 31,357 գրամ քաշով մանյակով, 13,856 գրամ քաշով ապարանջանով և 10,822 գրամ քաշով մատանիով /հատոր 4-րդ, գլ. 106-107/:
- Ապրանքագիտական, մետաղագիտական և հենուլոգիական փորձաքննության 2009 թվականի ապրիլի 27-ի թիվ ՀՆ.10180910 եզրակացությամբ այն մասին, որ «1. փորձաքննությանը ներկայացված գարդերի ընդհանուր շուկայական արժեքը, առկա ապրանքային վիճակի հաշվառմամբ, 2009 թ. փետրվարի 13-ի դրությամբ, կարող էր կազմել 2.086.800 (երկու միլիոն ութսունվեց հազար ութ հարյուր) դրամ, իսկ դրանց արժեքները, առանձին-առանձին, բերված են սույն եզրակացության «Հետազոտություն» բաժնի «Ապրանքագիտական» մասում: 2. Փորձաքննությանը ներկայացված բջջային հեռախոսների ընդհանուր շուկայական արժեքը, առկա ապրանքային վիճակի հաշվառմամբ, 2009թ. փետրվարի 13-ի դրությամբ, կարող էր կազմել 67.500 (վաթսույնյոթ

հազար հինգ հարյուր) դրամ, իսկ դրանց արժեքները, առանձին-առանձին, բերված են սույն եզրակացության «Հետազոտություն» բաժնի «Ապրանքագիտական» մասում» /հատոր 3-րդ գթ. 227-231:

- Ամալյա Մատուլյանի կողմից Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքից «Վեստերն Յունիոն» համակարգով գումար փոխանցելու վերաբերյալ թվով 4 կտրոններով /հատոր 2-րդ գթ. 301-304/:

- Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2007 թվականի օգոստոսի 3-ի դատավճռով, որով Գայանե Վազգենի Մելքոնյանը, Սուսաննա Բորիսի Նիկողոսյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել են ազատազրկման /հատոր 1-ին գթ. 253-258/:

- ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 11-ի դատավճռով, որով պատժի մասով փոփոխվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի 2007թ. օգոստոսի 3-ի դատավճիռն ըստ մեղադրանքի Գայանե Վազգենի Մելքոնյանի և Սուսաննա Բորիսի Նիկողոսյանի ՀՀ քր. օր-ի 132 հոդ. 3-րդ մասի 2-րդ կետով: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 11-ի դատավճռով Գայանե Վազգենի Մելքոնյանը, Սուսաննա Բորիսի Նիկողոսյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել են ազատազրկման /հատոր 1-ին գթ. 259-264/:

- Երևան քաղաքի քրեական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 24-ի դատավճռով, որով Գայանե Վազգենի Մելքոնյանը, Սուսաննա Բորիսի Նիկողոսյանը մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել են ազատազրկման /հատոր 3-րդ գթ. 206-212/:

Դատարանը հարկ է համարում անդրադառնալ ամբաստանյալ Ամալյա Մատուլյանի և նրա շահերի պաշտպան Ռազմիկ Թովմասյանի այն փաստարկին, որ Ամալյա Մատուլյանը տեղյակ լինելով, որ Արմենուհի Ասատրյանը, Մարինե Նալբանդյանը, Կարինե Ավդալյանը մարմնավաճառներ են և ցանկություն ունեն մեկնել Դուբայ քաղաք, օգնել է, որպեսզի նրանք հասնեն Դուբայ, սակայն նրանցից որևէ շահ չի ունեցել, նրանց չի շահագործել, նրանք տեղյակ են եղել, որ գնում են մարմնավաճառությամբ զբաղվելու և կիսովի գումար աշխատելու, իսկ Ամալյա Մատուլյանը միայն նպատակ է ունեցել ստանալ իր գումարները, որոնք ծախսել է նրանց Դուբայ տեղափոխելու և անձնագրային հարցերը լուծելու համար: Այդ փաստարկը նրանք հիմնավորում են նաև նրանով, որ դատաքննության ընթացքում տուժողներ Մարինե Նալբանդյանը, Կարինե Ավդալյանը իրենց շահագործման փաստը ընդունեցին միայն անուղակիորեն, իրենց ցուցմունքներում նշելով, որ իրենք վաղօրոք տեղյակ են եղել, թե ինչի՞ համար են գնում և որպես ի՞նչ են աշխատելու, նրանք Ա. Մատուլյանից որևէ պարտք ու պահանջ չունեն: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 1321 և 190 հոդվածներով Ամալյա Մատուլյանի նկատմամբ պետք է կայացնել արդարացման դատավճիռ:

Ամբաստանյալի և նրա պաշտպանի կողմից բերված փաստարկները հերքվում են տուժողների կողմից դատաքննության և նախաքննության ընթացքում տված ցուցմունքներով, ըստ որոնց իրենք Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաք են մեկնել աշխատելու նպատակով և նախապես տեղյակ են եղել, որ պետք է, նախ, վճարեն ճանապարհածախսը, մուտքի հրավերքի ծախսը, իսկ մնացած գումարները տնօրինեն անձամբ: Իրենք աշխատել են և ըստ իրենց կողմից կատարված հաշվարկների փակել են այն գումարները, որոնք ծախսվել են իրենց վրա որպես նախապես կատարված ճանապարհածախս և մուտքի հրավերքի ծախս, սակայն օրի-օրի այդ գումարները ոչ թե պակասել են, այլ աճել: Այդ հանգամանքով ևս ապացուցվում է տուժողներին շահագործելու

փաստը:

Դատարանը համադրելով նախաքննության և դատաքննության ժամանակ տուժողներ Մարինե Նալբանդյանի, Գայանե Ղանդիլյանի, Կարինե Ավդալյանի տված ցուցմունքները, վերլուծելով այլ ապացույցները, հանգեց եզրակացության, որ ավելի արժանահավատ են տուժողների կողմից նախաքննության ընթացքում տված ցուցմունքները:

Տուժող Լուսինե Հարությունյանը, թե՞ դատաքննության, թե՞ նախաքննության ընթացքում տվել է նույնաբովանդակ ցուցմունքներ և հայտնել, որ «...Գայանե Մելքոնյանը և Սուսաննան իրեն մինչև վերջ չեն ասել, որ Դուբայ քաղաքում աշխատելու է որպես մարմնավաճառողուհի: Դուբայ քաղաքում իրեն տարել են Ամայա Մատուլյանի մոտ և նա ասել է, որ ինքը պիտի գնա դիսկոտեկա, զբաղվի մարմնավաճառությամբ: Ինքը ստիպված է աշխատել, քանի որ «Նանոն» վախեցրել է և ասել. «կզանգեմ պոչիկ Ալիյին, կգա կտանի, ամեն տեղից ամեն բան կանի և տեսնեմ, թե ոչնչ չեք աշխատում»: Աշխատած գումարները տվել է Ամայա Մատուլյանին, իսկ օրեկան աշխատել է 300-ից 500 ԱՄՆ դոլար: Երբ չի աշխատել, Ամայա Մատուլյանը խփել է և ասել. «գնա աշխատիր», իսկ խփել է կամ ձեռքով, կամ փայտով, կամ երկարացման լարով»:

Իսկ տուժող Մարինե Նալբանդյանը դատաքննության ընթացքում հայտնեց, որ «...իր խնդրանքով Ամայա Մատուլյանն իրեն ուղարկել է Դուբայ քաղաք, որտեղ ինքը զբաղվել է մարմնավաճառությամբ: Ամայա Մատուլյանի դեմ բողոք, պարտք ու պահանջ չունի, այլ գոհ է նրանից, բացի այդ մինչև օրս ինքը չի վերադարձրել Ամայա Մատուլյանին պարտք գումարը»:

Մինչդեռ, նախաքննության ընթացքում Մարինե Նալբանդյանը ցուցմունք է տվել և պնդել, որ «...մեկուկես ամսվա ընթացքում օրեկան վաստակել է շուրջ 200 ԱՄՆ դոլար: Նանոյին ընդհանուր տվել է 8000-9000 ԱՄՆ դոլար և այդ գումարներով մարել է իր պարտքը, որն ըստ իր հաշվարկների կազմել է 3000-4000 ԱՄՆ դոլար: Իր հաշվարկներով պարտքը մարել է և հասկացել է, որ Նանոն հաշվարկների մեջ ճիշտ չէ: Եթե Նանոն չբռնվեր, հայտնի չէ, թե որքան ժամանակ ինքը ստիպված էր լինելու զբաղվել մարմնավաճառությամբ և նրան վճարելու իր վաստակած գումարները...» /հատոր 4-րդ գթ. 77-78/ :

Տուժող Գայանե Ղանդիլյանը դատաքննության ընթացքում հայտնեց, որ «... շուրջ 5 ամիս մնացել է Ամայա Մատուլյանի մոտ և զբաղվել մարմնավաճառությամբ, օրեկան աշխատել է 300 ԱՄՆ դոլար, իսկ աշխատած գումարները տվել է Ամայա Մատուլյանին: Ինքն այլ ճանապարհ չի ունեցել և ստիպված զբաղվել է մարմնավաճառությամբ...»:

Տուժող Գայանե Ղանդիլյանը նախաքննության ընթացքում հայտնել է, որ «...գտնվելով Դուբայ քաղաքում առանց փողի և անձնագրի, լեզվին չտիրապետելու պատճառով ոչ մի տեղ չի կարողացել փախչել, ստիպված համաձայնվել է և Նանոյի մոտ զբաղվել է մարմնավաճառությամբ: Մինչև 2004թ. փետրվար կամ մարտ ամիսը Նանոյի մոտ զբաղվել է մարմնավաճառությամբ և այդ ընթացքում իր անձնագիրը և աշխատած փողերը մնացել են նրա մոտ» /հատոր 1-ին գթ. 163-167, հատոր 2-րդ գթ. 63-65/:

Տուժող Կարինե Ավդալյանը դատաքննության ընթացքում հայտնեց, որ «...ինքն ի սկզբանե տեղյակ է եղել, թե ինչ պետք է աշխատի և Դուբայ է մեկնել իր ցանկությամբ: Ամայա Մատուլյանին պետք է վերադարձներ վիզայի և տոմսի գումարը, շուրջ 3000-4000 ԱՄՆ դոլար: Ռուզաննա Հարությունյանի տանը մնացել է շուրջ 2 ամիս, օրեկան աշխատել է 700 դրիամ, 600 դրիամ, 500 դրիամ, իսկ աշխատած գումարները տվել է Ռուզաննա Հարությունյանին: Ինքը փակել է պարտք գումարը, սակայն Ռուզաննա Հարությունյանն անընդհատ պնդել է, որ պարտք է: Ինքը Ամայա Մատուլյանից պարտք ու պահանջ չունի»:

Տուժող Կարինե Ավդալյանը նախաքննության ընթացքում հայտնել է, որ «...մոտ 2,5 ամիս ապրել է Ռուզանի տանը և զբաղվել

մարմնավաճառությամբ: Օրեկան աշխատել է 200 ԱՄՆ դոլար և տվել Ռուզանին, որպեսզի պարտքը շուտ մարի: Իր հաշվարկներով պարտքը մարելուց հետո Ռուզանից պահանջել է իր անձնագիրը, սակայն նա պատասխանել է, որ Նանոն կգա այդ հարցը նոր կլուծենք, բացի այդ ասել է, որ անձնագիրը «սպոնսորի» մոտ է և մինչև պարտքը չմարի անձնագիրը չեն տա: Ինքը 2,5 ամսվա ընթացքում Ռուզանին է տվել շուրջ 15000 ԱՄՆ դոլար և ըստ իր հաշարկների վաղուց մարել է իր ունեցած պարտք: ...Ռուզանը պետք է, որ Նանոյի հետ համաձայնության եկած լիներ, քանի որ Նանոն էր իրեն ուղարկել Դուբայ և Ռուզանը ինքնագուլիս իր անձագիրը հետ չէր տա» /հատոր 4-րդ գթ. 60-62/:

Տուժող Արմենուհի Աշոտի Ասատրյանը նախաքննության ընթացքում հայտնել է, որ «... Նանոն ասել է, որ ճանապարհածախսը ինքը կհոգա, իսկ Դուբայ քաղաքում իրեն կդիմավորի իր աջ ձեռքը Ռուզանը, որի տանը կապրի ու կզբաղվի մարմնավաճառությամբ մինչև որ ինքը ժամանի Դուբայ: Ինքը զբաղվել է մարմնավաճառությամբ, իսկ վաստակած գումարները տվել է Ռուզանին, իսկ օրեկան միջին հաշվով աշխատել է 800-ից 1000 դրիսան գումար, որը կազմել է 250 ԱՄՆ դոլար: Ինքը հասկացել է, որ ծուղակն է ընկել ու երբեք այդ պարտքից չի պրծնի, վախեցել է աղմուկ բարձրացնել, քանի որ գտնվել է օտարության մեջ, անձնագիրը գտնվել է Ռուզանի մոտ, իսկ պարտքը մարելու հեռանկարներ չի ունեցել: 2006 թվականի նոյեմբեր ամսին Նանոն եկել է Դուբայ, տուն վարձել և իր ուղարկած աղջիկներին, այդ թվում իրեն իր հետ տարել է, որից հետո աշխատած գումարները մինչև Նանոյի բռնվելը տվել են նրան» /հատոր 4-րդ գթ. 11-16, 18-22/:

Վերոնշյալ ապացույցների վերլուծությունը թույլ է տալիս հանգել հետևության, որ Ամայա Մատույանը տևական ժամանակով զբաղվել է Հայաստանից Դուբայ աղջիկներ տեղափոխելով և նրանց սեռական շահագործման մեջ ներգրավելով: Ամայա Մատույանը նախնական համաձայնություն է ձեռք բերել Քայանե Մելքոնյանի, Սուսաննա Նիկողոսյանի, Դուբայ քաղաքում բնակվող Ռուզաննա Հարությունյանի հետ իր հանցավոր գործունեությունն առավել անխափան ու արդյունավետ իրագործելու նպատակով: Այսինքն հանցանքը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, քանի որ դրան մասնակցել են այնպիսի համակատարողներ, ովքեր նախապես մինչև հանցագործություն սկսելը, պայմանավորվել են հանցանքը համատեղ կատարելու մասին: Ըստ նախնական պայմանավորվածության հանցակիցների մի մասը Հայաստանում հավաքագրել է աղջիկներին և ճանապարհից Մոսկվա քաղաք հստակ իմանալով, որ այնտեղ գտնվող իրենց «գործընկերները» կդիմավորեն աղջիկներին և կճանապարհեն Դուբայ քաղաք, իսկ Դուբայում գտնվող խմբի մյուս անդամները կդիմավորեն Հայաստանից ժամանած աղջիկներին և կհանձնեն Ա. Մատույանին:

Ամբաստանյալ Ամայա Մատույանը նրա շահերի պաշտպան Ռ. Թովմայանը առաջ քաշեցին նաև այն փաստարկը, որ Ամայա Մատույանը ոսկյա զարդերի մի մասը գնել, իսկ մյուս մասը նվեր է ստացել, բացի այդ Ա. Մատույանը բացի կավատությունից այլ աշխատանք է կատարել և այդ գումարներով է գնել ոսկյա զարդեր, այլ ոչ թե թաքցրել է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները: Սակայն դատարանում չներկայացվեցին բավարար չափով ապացույցներ առ այն, որ եկամուտները ստացվել են օրինական տնտեսական գործունեությունից: Մինչդեռ, ամբաստանյալը նշեց, որ եկամուտները ստացել է Արաբական Միացյալ Էմիրություններում նաև կավատությամբ զբաղվելու արդյունքում:

Ամբաստանյալ Ամայա Մատույանը դատարանում հայտնեց, որ ինքը զբաղվել է կավատությամբ, սակայն մարդիկ եկել են տեղյակ լինելով, թե ինչի համար են գալիս, ինքը նրանց ազատությունից չի զրկել, այդ աղջիկները ՀՀ-ում ևս զբաղվել են մարմնավաճառությամբ, իսկ ապա եկել Դուբայ: Բայց Ամայա

Մատուլյանը դատաքննության ընթացքում, այնուամենայնիվ, ընդունեց մարդկանց հավաքագրելու հանգամանքը:
Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 358 հոդվածի համաձայն դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա: Կոնկրետ դեպքով դատաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ հետազոտությամբ, ինչպես նաև դատարանի ներքին համոզմամբ ապացուցվել է ամբաստանյալ Ամայա Մատուլյանի կողմից Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 1321 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 325 հոդվածի 1-ին մասով, 38-329 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հանցանքները կատարելու փաստը: Այսպիսով, գործով ձեռք բերված, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտված յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ բոլոր ապացույցներն իրենց համակցությամբ գործի լուծման համար բավարարողության տեսանկյունից, դատարանը ապացուցված համարեց ամբաստանյալ Ամայա Ստեփանի Մատուլյանի կողմից կատարված հանցավոր արարքները, որոնք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, 1321 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերի, 190 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 325 հոդվածի 1-ին մասի, 38-329 հոդվածի 1-ին մասի հատկանիշներին:
Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 12 հոդվածի 1-ին մասի համաձայն, արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: Ամբաստանյալի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով նախատեսված հանցանքը կատարվել է մինչև 2006 թվականի հունիսի 1-ը ՀՀ քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին օրենքի ընդունումը /ՀՕ-103-Ն/: Նշված հանցանքի համար այդ հոդվածի 3-րդ մասը որպես պատիժ նախատեսում էր ազատազրկում 5-ից մինչև 8 տարի ժամանակով: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 13 հոդվածի դրույթների համաձայն, ամբաստանյալի նկատմամբ ենթակա է կիրառման Հայաստանի Հանրապետության 2003 թվականի քրեական օրենսգրքի 132 հոդվածն այն խմբագրությամբ, որն առկա էր մինչև 2006 թվականի հունիսի 1-ին ՀՀ քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին օրենքը (այս օրենքով քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի սանկցիայով նախատեսված 5-ից մինչև 8 տարի ժամկետով ազատազրկումը փոխարինվել է 7-ից մինչև 10 տարի ժամկետով ազատազրկմամբ): Ավելի որոշակի ասած, դատարանը արձանագրում է մի իրավիճակ, երբ ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցանքը կատարելու և դատավճիռ արձակելու միջև ընկած ժամանակահատվածում տվյալ հանցանքի համար պատասխանատվություն սահմանող օրենքը փոփոխվել է մեկից ավելի անգամ: Ղեկավարվելով քրեական իրավունքի և քրեական օրենսդրության կարևորագույն սկզբունքներից մեկի արդարության սկզբունքի դրույթներով, կիրառման ենթակա է հանցավորի համար առավել բարենպաստ քրեական օրենքը, այդ թվում «միջանկյալ» օրենքը: Հակառակ դեպքում հանցավորի նկատմամբ նշանակվող պատիժը կախման մեջ կդրվի ոչ միայն հանցագործության վտանգավորության բնույթից և աստիճանից, արարքները կատարելու հանգամանքներից և հանցավորի անձից, ինչպես դա պահանջում է արդարության սկզբունքը, այլև պատահական հանգամանքներից, որպիսիք կարող են հանդիսանալ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու ժամանակը կամ դատավճիռ կայացնելու ժամանակը:
Այսպիսով, դատարանն ապացուցված է համարում ամբաստանյալի

մեղավորությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով նախատեսված հանցանքը կատարելու մեջ, արձանագրելով, որ Ամայա Մատուլյանը գործել է ուղղակի դիտավորությամբ և շահադիտական դրդումներով: Հանցավորը գիտակցել է, որ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ, խարդախության, վիճակի խոցելիությունը օգտագործելու միջոցով, շահագործման նպատակով հավաքագրում, փոխադրում և ստանում է մարդկանց, ինչը կատարվել է երկու կամ ավելի անձանց նկատմամբ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:

Ղատարանն ապացուցված է համարում նաև ամբաստանյալի մեղավորությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 1321 հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված հանցանքը կատարելու մեջ, արձանագրելով, որ Ամայա Մատուլյանը գործել է ուղղակի դիտավորությամբ, հանցավորը գիտակցել է, որ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ, խարդախության, վիճակի խոցելիությունը օգտագործելու միջոցով, մարդուն պոռնկության կամ սեռական շահագործման այլ ձևերի մեջ է ներգրավում, ինչը կատարվել է երկու կամ ավելի անձանց նկատմամբ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ:

Ղատարանն ապացուցված է համարում ամբաստանյալի մեղավորությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքը կատարելու մեջ, արձանագրելով, որ Ամայա Մատուլյանը գործել է ուղղակի դիտավորությամբ, հանցավոր գիտակցել է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն իր կողմից օրինականացնելու փաստը, և ցանկացել է դա, ինչը կատարվել է խոշոր չափերով: Ըստ գործի տվյալների Ամայա Մատուլյանը զբաղվել է հանցավոր գործունեությամբ, մասնավորաբար, կավատությամբ, որի արդյունքում և ձեռք է բերել խոշոր չափերի հասնող գույք ոսկյա զարդեր, գումարներ և այլն:

Ղատարանն ապացուցված է համարում նաև ամբաստանյալի մեղավորությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 325 հոդվածի 1-ին մասով և 38-329 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքները կատարելու մեջ, հավաստելով, որ ամբաստանյալը գործել է դիտավորյալ մեղքով, այսինքն հանցավորը գիտակցել է, որ կեղծում է իրավունք վերապահող փաստաթուղթ այլ անձի կողմից դա օգտագործելու համար և օժանդակում է առանց պատշաճ թույլտվության ապօրինաբար պետական սահմանը հատելուն:

Ղատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ամայա Մատուլյանը ենթակա է պատժի իր կատարած հանցանքների համար: Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի առավ կատարված հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների առկայությունը:

Որպես ամբաստանյալ Ամայա Մատուլյանի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ դատարանն արձանագրում է հանցագործության սուբյեկտի կողմից մասնակիորեն մեղքն ընդունելու և զղջալու փաստը: Պատիժ նշանակելիս դատարանը ամբաստանյալին դիտարկում է ոչ թե որպես հանցագործության վերացարկված սուբյեկտ ընդհանրապես, այլ որպես կոնկրետ մարդ իր անհատական հատկություններով ու որակներով:

Որպես ամբաստանյալ Ամայա Մատուլյանի պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ դատարանը հաշվի առավ հանցանքը կատարելու ռեցիդիվը, հանցանքը որպես արհեստ կատարելը, հանցագործության մեջ

առանձնապես ակտիվ դերը /ՀՀ քր. օր-ի 63 հոդ. 1-ին մասի 1-ին և 4-րդ կետեր/:

Այսպիսով, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ամայա Մատուլյանը կատարել է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 1321 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 325 հոդվածի 1-ին մասով, 38-329 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքներ, որոնք համար էլ պետք ենթարկվի քրեական պատասխանատվության և պատժի:

Դատարանը հանգում է հետևության, որ ամբաստանյալ Ամայա Ստեփանի Մատուլյանին ավելի նպատակահարմար է պատժիչ դատախազական ներգործության ենթարկել հասարակությունից մեկուսացնելու պայմաններում: Ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը ելնում է այն իրողությունից, որ օրենքի առաջնային պահանջը պատժի արդարացիությունն է, որը որպես քրեական իրավունքի սկզբունք, ձևակերպված է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածում, համաձայն որի հանցանք կատարած անձի նկատմամբ պատիժը պետք է լինի արդարացի, անհրաժեշտ և բավարար նրան ուղղելու և նոր հանցագործությունը կանխելու համար: ՀՀ քրեական օրենսգրքի 48 հոդվածի դրույթների համաձայն, պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները: Դատարանը միաժամանակ հավաստում է, որ նշանակվող պատժի արդարացիության հարցը լուծելիս դատարանը ճիշտ է գնահատել գործի բոլոր հանգամանքները, ամբաստանյալի անձը բնութագրող բոլոր տվյալները և, քրեական օրենքով նախատեսված պահանջներից ելնելով, ամբաստանյալի նկատմամբ նշանակում է այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ և բավարար է տվյալ անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար: Ոնդ որում, պատիժ նշանակելիս դատարանն ուղեցույց է ընդունում նաև քրեական օրենքի դրույթն այն մասին, որ հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները (ՀՀ քր. օր-ի 61-րդ հոդվածի 3-րդ մաս): Միաժամանակ նշված հանգամանքների ամբողջությունը դատարանին հիմք է տալիս կիրառելու ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի, 1321 հոդվածի 2-րդ մասի, 190 հոդվածի 2-րդ մասի, 325 հոդվածի 1-ին մասի, 38-329 հոդվածի 1-ին մասի սանկցիաների ոչ խիստ տարբերակը չափի իմաստով: Այդպիսի եզրակացության դատարանը գալիս է հաշվի առնելով արարքների բոլոր փաստական ու քրեաիրավական բնութագրերը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները, հանցավորի անձը բնութագրող տվյալները: Դատարանը գտնում է նաև, որ Ամայա Մատուլյանի նկատմամբ նախաքննության մարմնի կողմից ընտրված խափանման միջոցը կալանավորումը, պետք է թողնել անփոփոխ մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

Դատարանը գտնում է, որ տուժող Գայանե Ղանդիլյանի կողմից ներկայացրած քաղաքացիական հայցը պետք է թողնել առանց քննության, քանի որ ամբաստանյալը և նրա պաշտպանն ամբողջությամբ չընդունեցին քաղաքացիական հայցը: Քաղաքացիական հայցվորին բացատրվեց քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը: Գործով իրեղեն ապացույց ճանաչված և քրեական գործին կցված «Վալգե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատանը թիվ 168244 պայմանագրով գրավադրված 900 հարզի ոսկու համաձուլվածքից պատրաստված 47,360 գրամ քաշով 440.800 ՀՀ դրամ արժողությամբ ապարանջանը, «Ֆաստ-Կրեդիտ» գրավատանը թիվ 107008 պայմանագրով գրավադրված 750 հարզի ոսկու համաձուլվածքից պատրաստված 444.700 ՀՀ դրամ արժողությամբ 31,357 գրամ քաշով մանյակը, 13,856 գրամ քաշով

ապարանջանը և 10,822 գրամ քաշով մատանին պետք է հանձնել պետական բյուջե:

Ապացույց ճանաչված և քրեական գործին կցված այլ փաստաթղթերը Ամայա Մատուլյանի կողմից Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքից «Վեստերն Յունիոն» համակարգով գումար փոխանցելու վերաբերյալ թվով 4 կտրոնները, պետք է թողնել քրեական գործին կից /հատոր 2 գք. 301-304/: 2009 թվականի հունիսի 15-ին Ամայա Ստեփանի Մատուլյանին պատկանող «Վալգե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատանը թիվ 168244 պայմանագրով գրավադրված 900 հարգի ոսկու համաձուլվածքից պատրաստված 47,360 գրամ քաշով 440.800 ՀՀ դրամ արժողությամբ ապարանջանի, «Ֆաստ-Կրեդիտ» գրավատանը թիվ 107008 պայմանագրով գրավադրված 750 հարգի ոսկու համաձուլվածքից պատրաստված 444.700 ՀՀ դրամ արժողությամբ 31,357 գրամ քաշով մանյակի, 13,856 գրամ քաշով ապարանջանի և 10,822 գրամ քաշով մատանու, ինչպես նաև Ամայա Մատուլյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերված 67.500 ՀՀ դրամ արժողությամբ «Նոկիա 2630» և «Սամսունգ-SGH-D600» բջջային հեռախոսների վրա դրված կալանքը պետք է թողնել անփոփոխ, մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

Ղատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո քրեական գործին կցված և Ամայա Մատուլյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերված 67.500 ՀՀ դրամ արժողությամբ «Նոկիա 2630» և «Սամսունգ-SGH-D600» բջջային հեռախոսները պետք է վերադարձնել Ամայա Ստեփանի Մատուլյանի եղբորը Արա Ստեփանի Սնացականյանին:

Հետագոտված փաստերի և գործի հանգամանքների համալիր արժեքավորման հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 357-360, 364-365, 369-373 հոդվածներով, դատարանը
Վ ճ ո ե ց

Ամբաստանյալ Ամայա Ստեփանի Մատուլյանին հանցավոր ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով (ՀՀ 2003թ. քր. օր-ի 132 հոդվածի խմբագրությամբ) և դատապարտել ազատազրկման 5 /հինգ/ տարի ժամկետով:

Ամբաստանյալ Ամայա Ստեփանի Մատուլյանին հանցավոր ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 1321 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով և դատապարտել ազատազրկման 8 /ութ/ տարի ժամկետով:

Ամբաստանյալ Ամայա Ստեփանի Մատուլյանին հանցավոր ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտել ազատազրկման 8 /ութ/ տարի ժամկետով գույքի, այսինքն հանցավոր ճանապարհով ստացած գույքի բռնագրավմամբ:

Ամբաստանյալ Ամայա Ստեփանի Մատուլյանին հանցավոր ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 325 հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 1 /մեկ/ տարի ժամկետով:

Ամբաստանյալ Ամայա Ստեփանի Մատուլյանին հանցավոր ճանաչել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 38-329 հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 1 /մեկ/ տարի ժամկետով:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 66 հոդվածի կարգով հանցագործությունների համակցությամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 11 /տասնմեկ/ տարի ժամկետով գույքի, այսինքն հանցավոր ճանապարհով ստացած գույքի բռնագրավմամբ:

Պատիժը պետք է կրի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համապատասխան քրեակատարողական հիմնարկում:

	<p>Ամբաստանյալ Ամայա Ստեփանի Մատուլյանի նկատմամբ ազատագրված ձևով նշանակված պատժի սկիզբը հաշվել 2009 թվականի փետրվարի 13-ից: Ամբաստանյալ Ամայա Ստեփանի Մատուլյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը կալանավորումը, թողնել անփոփոխ մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Գործով իրեղեն ապացույց ճանաչված և քրեական գործին կցված «Վալգե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատանը թիվ 168244 պայմանագրով գրավադրված 900 հարզի ոսկու համաձուլվածքից պատրաստված 47,360 գրամ քաշով 440.800 ՀՀ դրամ արժողությամբ ապարանջանը, «Ֆաստ-Կրեդիտ» գրավատանը թիվ 107008 պայմանագրով գրավադրված 750 հարզի ոսկու համաձուլվածքից պատրաստված 444.700 ՀՀ դրամ արժողությամբ 31,357 գրամ քաշով մանյակը, 13,856 գրամ քաշով ապարանջանը և 10,822 գրամ քաշով մատանին հանձնել պետական քույշե: 2009 թվականի հունիսի 15-ին Ամայա Ստեփանի Մատուլյանի պատկանող «Վալգե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատանը թիվ 168244 պայմանագրով գրավադրված 900 հարզի ոսկու համաձուլվածքից պատրաստված 47,360 գրամ քաշով 440.800 ՀՀ դրամ արժողությամբ ապարանջանի, «Ֆաստ-Կրեդիտ» գրավատանը թիվ 107008 պայմանագրով գրավադրված 750 հարզի ոսկու համաձուլվածքից պատրաստված 444.700 ՀՀ դրամ արժողությամբ 31,357 գրամ քաշով մանյակի, 13,856 գրամ քաշով ապարանջանի և 10,822 գրամ քաշով մատանու, ինչպես նաև Ամայա Մատուլյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերված 67.500 ՀՀ դրամ արժողությամբ «Նոկիա 2630» և «Սամսունգ-SGH-D600» բջջային հեռախոսների վրա դրված կալանքը թողնել անփոփոխ, մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո քրեական գործին կցված և Ամայա Մատուլյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերված 67.500 ՀՀ դրամ արժողությամբ «Նոկիա 2630» և «Սամսունգ-SGH-D600» բջջային հեռախոսները վերադարձնել Ամայա Ստեփանի Մատուլյանի եղբորը Արա Ստեփանի Մնացականյանին: Ապացույց ճանաչված և քրեական գործին կցված այլ փաստաթղթերը Ամայա Մատուլյանի կողմից Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքից «Վեստերն Յունիոն» համակարգով գումար փոխանցելու վերաբերյալ թվով 4 կտրոնները, թողնել քրեական գործին կից: Տուժող Գայանե Ղանդիլյանի ներկայացրած քաղաքացիական հայցը թողնել առանց քննության: Դատավճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանին հրապարակվելու օրվանից մեկ ամսվա ժամկետում, իսկ արդարադատության բուն էությունը խաթարող հիմնարար խախտումների բացառիկ դեպքերում դատական ակտը օրինական ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:</p>
Դատական ակտի ամսաթիվը:	Դատավոր՝ Մ. Գրիգորյան 30-11-2009
Գործը հանձնվել է գրասենյակ:	18-01-2010
Էջերի քանակ:	5 հատոր
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Գործը ուղարկվել է:	18-01-2010

Էջերի քանակը:	5 հատոր
Գործին կից նյութերը:	
Ուր(դատարան):	Քրեական և զինվորական վերաք.
Ուր:	
Ելքի գրության համարը:	.
Ամսաթիվ:	18-01-2010
Ամսաթիվ:	12-04-2010
Ամսաթիվ:	13-04-2010
Գործը հանձնվել է գրասենյակ:	11-05-2010
Էջերի քանակ:	5 հատոր
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	11-05-2010
Էջերի քանակը:	5 հատոր
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	23-06-2011
Ամբաստանյալ/Դատապարտյալ	
Անուն	Ամայյա
Ազգանուն	Մատուլյան
Հասցե	Այժմ գտնվում է ՀՀ ԱՆ Աբովյան ՔԿՀ
Սեռ	Իգական
Դատարանի նախաձեռնությամբ:	
Միջնորդություն ներկայացնող:	Ամայյա Մատուլյան
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	23-06-2011
Դատարան:	Մալաթիա-Սեբաստիա
Հանձնվել է դատավորին	
Դատարանի անվանում:	Մալաթիա-Սեբաստիա
Դատավորի անուն:	Կարեն Սուրենի Ֆարխոյան
Ամսաթիվ:	19-07-2011
Ամսաթիվ:	19-07-2011

Որոշման բովանդակություն:

ՈՐՈՇՈՒՄ

դատավճիռը վերանայելու մասին

19.07.2011թ. թիվ ԵՄԴ/0082/01/09 ք.Երևան

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը նախագահությամբ դատավոր Կ.Ֆարխոյանի, քարտուղարությամբ Ս.Գևորգյանի, մասնակցությամբ դատախազ Գ.Հովհաննիսյանի, դատարանում, դռնբաց դատական նիստում քննարկելով ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալ Ամայա Ստեփանի Մատուլյանի դիմումը իր նկատմամբ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ԵՄԴ/0082/01/09 դատավճիռը վերանայելու մասին
Պարզեց

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ԵՄԴ/0082/01/09 դատավճռով Ամայա Ստեփանի Մատուլյանը, ծնված 1964 թվականի դեկտեմբերի 11-ին Երևան քաղաքում, ազգությամբ հայ, Հայաստանի Հանրապետության քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, չի աշխատում, ամուսնացած, նախկինում 5 անգամ դատապարտված 14.12.1987թ. ՀՀ 1961 թվականի քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասով, 15-143 հոդվածի 2-րդ մասով, 08.09.1989թ. ՀՀ 1961 թվականի քրեական օրենսգրքի 143 հոդվածի 2-րդ մասով, 24.02.1993թ. ՀՀ 1961 թվականի քրեական օրենսգրքի 229 հոդվածի 5-րդ մասով, 16.08.2000թ. ՀՀ 1961 թվականի քրեական օրենսգրքի 226 հոդվածի 1-ին մասով, 25.08.2004թ. ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասով, 262 հոդվածով, 34-262 հոդվածով, 38-329 հոդվածի 1-ին մասով, դատվածությունը չմարված, հաշվառված է Երևան քաղաքի Անդրանիկի փողոց, 10/1 շենքի թիվ 5 բնակարանում, փաստացի բնակվել է Երևան քաղաքի Հ.Հակոբյան փողոցի 1-ին շենքի թիվ 63 բնակարանում, մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով (ՀՀ 2003թ. քր. օր-ի 132 հոդվածի խմբագրությամբ) և դատապարտվել է ազատազրկման 5 /հինգ/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 1321 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով՝ դատապարտվել է ազատազրկման 8 /ութ/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ դատապարտվել է ազատազրկման 8 /ութ/ տարի ժամկետով գույքի, այսինքն հանցավոր ճանապարհով ստացած գույքի բռնագրավմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 1-ին մասով՝ դատապարտվել է ազատազրկման 1 /մեկ/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 38-329 հոդվածի 1-ին մասով՝ դատապարտվել է ազատազրկման 1 /մեկ/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի կարգով հանցագործությունների համակցությամբ պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 11 /տասնմեկ/ տարի ժամկետով գույքի, այսինքն հանցավոր ճանապարհով ստացած գույքի բռնագրավմամբ, այն բանի համար, որ նա 1997 թվականից մինչև 2002 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում Արաբական Միացյալ Էմիրություններում զբաղվել է կավատությամբ, ինչի համար նախկինում դատապարտվել է:

Ամայա Մատուլյանը 2001 թվականի օգոստոս ամսին գտնվելով Երևան քաղաքում հանդիպել է նախկինում Արաբական Միացյալ Էմիրություններում մարմնավաճառությամբ զբաղվող Ալլա Ալբերտի Սեդրակյանին: Ամայա Մատուլյանը տեղեկացել է, որ Ալլա Սեդրակյանը ցանկանում է կրկին մեկնել Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաք մարմնավաճառությամբ զբաղվելու նպատակով, սակայն արտաքսված լինելու պատճառով չի կարող իր անձնագրով մեկնել Դուբայ քաղաք: Ամայա Մատուլյանն

առաջարկել է իր օգնությունը, նշելով որ կկատարի անձնագրի ձևակերպման և Դուբայ մեկնելու հետ կապված ծախսերը: Նա վերցրել է Ալլա Սեդրակյանի լուսանկարը, այն փակցրել անհայտ հանգամանքներում իր կողմից ձեռք բերված Արինկա Աթանեսյանի անձնագրում և անձնագիրը տրամադրել է Ալլա Սեդրակյանին: Ալլա Սեդրակյանը Ամայա Մատուլյանի կողմից իրեն տրամադրված կեղծ անձնագրով հատել է ՀՀ պետական սահմանը և մեկնել Դուբայ քաղաք:

Ամայա Մատուլյանը բնակվել է Արաբական Միացյալ Էմիրություններում և շարունակել իր գործունեությունը: Ամայա Մատուլյանը շահագործման նպատակով մարդուն հավաքագրելու և փոխադրելու շուրջ նախնական համաձայնության է եկել Գայանե Մելքոնյանի, Սուսաննա Նիկողոսյանի հետ և գումարներ վաստակելու նպատակով 2003 թվականի սեպտեմբեր ամսին Գյումրի քաղաքում բարձր վարձատրվող մատուցողուհու աշխատանք տրամադրելու կեղծ խոստումով հավաքագրել և Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաք է ուղարկել հայ աղջիկների: Սևակ Սիմոնյանը և Ավետիք Խաչատրյանը Մոսկվա քաղաքում դիմավորել են աղջիկներին, իսկ ապա նրանց փոխադրել Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաք:

ՀՀ քաղաքացի Լուսինե Հարությունյանը 2003 թվականի օգոստոս ամսին Գյումրի քաղաքում ծանոթացել է Գայանե Մելքոնյանի հետ, վերջինս նրան առաջարկել է Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում մատուցողուհու բարձր վարձատրվող աշխատանք: Լուսինե Հարությունյանը ընդունել է Գայանե Մելքոնյանի առաջարկը և նրան փոխանցել իր ՀՀ քաղաքացու անձնագիրը: Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում գտնվող Սևակ Սիմոնյանի և Ավետիք Խաչատրյանի միջոցով Լուսինե Հարությունյանին փոխադրել են Դուբայ քաղաք, որտեղ նրան դիմավորել և տարել են Ամայա Մատուլյանի մոտ: Ամայա Մատուլյանը վերցրել է նրա անձնագիրը, պահել իր մոտ: Ամայա Մատուլյանը օգտագործել է Լուսինե Հարությունյանի կողմից լեզվին չտիրապետելու, անձնագրի բացակայությամբ օտար երկրում տեղաշարժվելու հնարավորության բացակայությունը, ինչպես նաև Լուսինե Հարությունյանի կողմից փոխադրման գումարները վերադարձնելու հնարավորություն չունենալու կապակցությամբ վերջինիս մոտ առաջացած վիճակի խոցելիությունը, բացի այդ Լուսինե Հարությունյանի առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու իրեն չենթարկվելու դեպքում արաբների միջոցով ծեծի ենթարկելու և բռնաբարելու սպառնալիքներով, նրան ներգրավել է պոռնկության մեջ ու շուրջ 6 ամիս պահել նրան սեռական շահագործման մեջ: Ամայա Մատուլյանն ամբողջությամբ ստացել է Լուսինե Հարությունյանի կողմից մարմնավաճառությամբ վաստակած գումարները:

ՀՀ քաղաքացի Գայանե Ղանդիլյանը 2003 թվականի հոկտեմբեր ամսին Գյումրի քաղաքում ծանոթացել է Գայանե Մելքոնյանի հետ: Գայանե Մելքոնյանը Գայանե Ղանդիլյանին առաջարկել է մեկնել Հնդկաստան, իր ծանոթ կնոջ մոտ խմորեղենի խանութում բարձր աշխատավարձով վաճառողուհի աշխատելու համար, միաժամանակ հայտնել է, որ ճանապարհածախսը պետք է կատարվի աշխատանք տրամադրողի կողմից այն վերադարձնելու պայմանով: Գայանե Ղանդիլյանը ընդունել է առաջարկը: Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում գտնվող Սևակ Սիմոնյանի և Ավետիք Խաչատրյանի միջոցով Գայանե Ղանդիլյանին փոխադրել են Դուբայ քաղաք, որտեղ նրան դիմավորել և տարել են Ամայա Մատուլյանի մոտ: Ամայա Մատուլյանը վերցրել է նրա անձնագիրը, պահել իր մոտ: Ամայա Մատուլյանը օգտագործել է Գայանե Ղանդիլյանի կողմից լեզվին չտիրապետելու, անձնագրի բացակայությամբ օտար երկրում տեղաշարժվելու հնարավորության բացակայությունը, ինչպես նաև Գայանե Ղանդիլյանի կողմից փոխադրման գումարները վերադարձնելու հնարավորություն չունենալու կապակցությամբ վերջինիս մոտ առաջացած վիճակի

խոցելիությունը, բացի այդ Գայանե Ղանդիլյանի առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու իրեն չենթարկվելու դեպքում անապատում արաբների միջոցով ծեծի ենթարկվելու և բռնաբարելու սպառնալիքներով, նրան ներգրավել է պոռնկության մեջ ու շուրջ 5 ամիս պահել սեռական շահագործման մեջ: Ամայա Մատուլյանն ամբողջությամբ ստացել է Գայանե Ղանդիլյանի կողմից մարմնավաճառությամբ վաստակած գումարները:

Ամայա Մատուլյանը շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելու, փոխադրելու, ստանալու և սեռական շահագործման մեջ ներգրավելու դիտավորությամբ նախնական համաձայնության է եկել Արաբական Միացյալ Էմիրություններում բնակվող Ռուզաննա Սոկրատի Հարությունյանի հետ: Այդ նպատակով 2006 թվականի հուլիս ամսին, խաբեությամբ Դուբայ քաղաքում պոռնկությամբ զբաղվելով գումարներ վաստակելու խոստումներով, Երևան քաղաքում հավաքագրել է Արմենուհի Աշոտի Ասատրյանին: Ամայա Մատուլյանը Արմենուհի Ասատրյանին տրամադրել է Արաբական Միացյալ Էմիրությունների մուտքի հրավերք և Երևան-Մոսկվա, Մոսկվա-Դուբայ չվերթի ուղետոմսեր և 2006 թվականի հուլիսի 29-ին նրան փոխադրել Դուբայ քաղաք: Ըստ նախնական համաձայնության Դուբայ քաղաքում Ռուզաննա Հարությունյանը վերցրել և իր մոտ է պահել Արմենուհի Ասատրյանի անձնագիրը, ապա օգտագործելով նրա անձնագրի բացակայության, ինչպես նաև օտար երկրի օրենքներին ծանոթ չլինելու, գումար չունենալու, Դուբայ փոխադրելու և մուտքի հրավերք ձեռք բերելու ծախսերը մարելու կապակցությամբ Արմենուհի Ասատրյանի մոտ ծագած վիճակի խոցելիությունը, նրա նկատմամբ իրականացրել են փոխադարձ հսկողություն և մինչև 2007 թվականի փետրվար ամիսը նրան պահել սեռական շահագործման մեջ տիրանալով նրա կողմից մարմնավաճառությամբ վաստակած գումարներին:

Ամայա Մատուլյանը շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելու, փոխադրելու, ստանալու և սեռական շահագործման մեջ ներգրավելու դիտավորությամբ նախնական համաձայնության գալով Ռուզաննա Սոկրատի Հարությունյանի հետ 2006 թվականի օգոստոս ամսին խաբեությամբ Դուբայ քաղաքում պոռնկությամբ զբաղվելով գումարներ վաստակելու խոստումներով, Հայաստանի Հանրապետությունում հավաքագրել է Կարինե Խաչատուրի Ավդալյանին: Ամայա Մատուլյանը Կարինե Ավդալյանին տրամադրել է Արաբական Միացյալ Էմիրությունների մուտքի հրավերք, Երևան-Մոսկվա, Մոսկվա-Դուբայ չվերթի ուղետոմսեր և 2006 թվականի օգոստոսի 16-ին նրան փոխադրել է Դուբայ քաղաք: Ըստ նախնական համաձայնության Դուբայ քաղաքում Ռուզաննա Հարությունյանը վերցրել և իր մոտ է պահել Կարինե Ավդալյանի անձնագիրը, ապա օգտագործելով նրա անձնագրի բացակայության, ինչպես նաև օտար երկրի օրենքներին ծանոթ չլինելու, գումար չունենալու, Դուբայ փոխադրելու և մուտքի հրավերք ձեռք բերելու ծախսերը մարելու կապակցությամբ Կարինե Ավդալյանի մոտ ծագած վիճակի խոցելիությունը, նրան մինչև 2006 թվականի հոկտեմբեր ամիսը պահել է սեռական շահագործման մեջ տիրանալով նրա կողմից մարմնավաճառությամբ վաստակած գումարներին: Կարինե Ավդալյանի անձնագիրը վերադարձնելու համար Ռուզաննա Հարությունյանը նրանից պահանջել է 6.000 ԱՄՆ դոլար, գումարը ստանալուց հետո վերադարձրել է նրա անձնագիրը:

Ամայա Մատուլյանը շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելու, փոխադրելու, ստանալու և սեռական շահագործման մեջ ներգրավելու դիտավորությամբ նախնական համաձայնության գալով Ռուզաննա Սոկրատի Հարությունյանի հետ 2006 թվականի նոյեմբեր ամսին խաբեությամբ Դուբայ քաղաքում պոռնկությամբ զբաղվելով գումարներ վաստակելու խոստումներով, Երևան քաղաքում հավաքագրել է Մարինե Հարությունի Նալբանդյանին: Ամայա Մատուլյանը Մարինե Նալբանդյանին տրամադրել է Արաբական Միացյալ Էմիրությունների մուտքի հրավերք, Երևան-Մոսկվա, Մոսկվա-Դուբայ չվերթի ուղետոմսեր և 2006 թվականի

նոյեմբերի 9-ին նրան փոխադրել է Դուբայ քաղաք: Ըստ նախնական համաձայնության Դուբայ քաղաքում Ռուզաննա Հարությունյանը վերցրել և իր մոտ է պահել Մարինե Նալբանդյանի անձնագիրը, ապա օգտագործելով նրա անձնագրի բացակայության, ինչպես նաև օտար երկրի օրենքներին ծանոթ չլինելու, գումար չունենալու, Դուբայ փոխադրելու և մուտքի հրավերը ձեռք բերելու ծախսերը մարելու կապակցությամբ Մարինե Նալբանդյանի մոտ ծագած վիճակի խոցելիությունը, նրան մինչև 2007 թվականի փետրվար ամիսը պահել է սեռական շահագործման մեջ տիրանալով նրա կողմից մարմնավաճառությամբ վաստակած գումարներին: Ամայյա Մատուլյանը նպատակ ունենալով թաքցնել և խեղաթուրել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները մի խումբ անձանց սեռական շահագործման ենթարկելու միջոցով վաստակած գումարների ծագումը, այդ եկամուտները փոխակերպել է այլ արժեքի ձեռք է բերել 4769500 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ոսկյա զարդեր: Ամայյա Մատուլյանը 2008 թվականի հունիս ամսից մինչև 2009 թվականի փետրվար ամիսն ընկած ժամանակահատվածում ոսկյա զարդերը գրավադրել է Երևան քաղաքի տարբեր գրավատներում: Ամայյա Մատուլյանը 2004 թվականի փետրվար-մարտ ամիսների ընթացքում Արաքսյան Միացյալ Եմիրությունների Դուբայ քաղաքից «Վեստերն Յունիոն» դրամական փոխանցումների համակարգով 2028996 ՀՀ դրամին համարժեք 3600 ԱՄՆ դոլար է փոխանցել Ռուսաստանի Դաշնությունում գտնվող Սևակ Սիմոնյանին և դրամական փոխանցումներ է կատարել Հայաստանի Հանրապետությունում գտնվող Սուսաննա Նիկողոսյանի և Ազնեսա Մարտիրոսյանի անվամբ: Ամայյա Մատուլյանը փոխանցման միջոցով օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացած 6798496 ՀՀ դրամ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի մարտի 02-ի որոշման համաձայն, Ամայյա Ստեփանի Մատուլյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 132 1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190 հոդվածի 2-րդ մասի 1-ին մասով, 325 հոդվածի 1-ին մասով, 38-329 հոդվածի 1-ին մասով Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 30.11.2009 թվականի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ պաշտպանության կողմի վերաքննիչ բողոքը մերժվել է:

Դատապարտյալ Ամայյա Ստեփանի Մատուլյանը 2011 թվականի հունիսի 23-ին դիմում ներկայացրել դատարան և խնդրել է վերանայել դատարանի կողմից իր նկատմամբ կայացված դատավճիռը՝ նկատի ունենալով ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թվականի մարտի 01-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Դատախազ Գևորգ Հովհաննիսյանը չառարկեց ներկայացված դիմումին և հայտնեց, որ Ամայյա Ստեփանի Մատուլյանի նկատմամբ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ԵՄԴ/0082/01/09 քրեական գործով կայացված դատավճիռը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 132 1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով պետք է վերանայել և այն պետք է համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերին: Քննարկելով դիմումը, դատարանը գտավ, որ այն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

2011 թվականի մարտի 01-ի ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն, ՀՀ քրեական օրենսգրքի 132 1 հոդվածը ճանաչվել է ուժը կորցրած: ՀՀ քրեական օրենսգրքի 13 հոդվածի 1-ին մասի համաձայն, արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են

պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011թ. մարտի 01-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ուժով Ամայա Ստեփանի Մատույանի նկատմամբ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵՄԴ/0082/01/09 քրեական գործով կայացված դատավճիռը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 132 1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով պետք է վերանայել և Ամայա Ստեփանի Մատույանի կողմից կատարված հանցավոր արարքները՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով կամ դրա գործադրմամբ, խարդախության, վիճակի խոցելիությունը օգտագործելու միջոցով, մարդուն պոռնկության կամ սեռական շահագործման այլ ձևերի մեջ է ներգրավում, ինչը կատարվել է երկու կամ ավելի անձանց նկատմամբ և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ դրվագներով հանցավոր արարքները պետք է համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերին: Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ Ազգային ժողովի կողմից 01.03.2011 թվականին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 13 հոդվածի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 437 և 438 հոդվածների պահանջներով դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Դատապարտյալ Ամայա Ստեփանի Մատույանի դիմումը քավարարել: Դատապարտյալ Ամայա Ստեփանի Մատույանի նկատմամբ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 132 1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով 2009 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ԵՄԴ/0082/01/09 քրեական գործով կայացված դատավճիռը վերանայել, դատավճռով հաստատված Ամայա Ստեփանի Մատույանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 132 1 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով կատարված հանցավոր արարքները համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 132 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերին: Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ԵՄԴ/0082/01/09 դատավճիռը մնացած մասով թողնել անփոփոխ: Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քրեական դատարան հրապարակման պահից 10 օրվա ընթացքում:

Դատավոր Կ.Ֆարխոյան

Այլ նշումներ:

Գործը հանձնվել է գրասենյակ: 04-08-2011

Էջերի քանակ: 5 հատոր

Գործին կից նյութերը:

Այլ նշումներ:

Ամսաթիվ:	08-08-2011
Էջերի քանակը:	5 հատոր
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Գործը ուղարկվել է:	17-08-2011
Էջերի քանակը:	5 հատոր
Գործին կից նյութերը:	
Ուր(դատարան):	Քրեական և զինվորական վերաք.
Ուր:	
Ելքի գրության համարը:	.
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	22-08-2011
Ամսաթիվ:	29-08-2011
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	29-08-2011
Այլ նշումներ:	
Գործը հանձնվել է գրասենյակ:	05-09-2011
Էջերի քանակ:	5 հատոր
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	05-09-2011
Էջերի քանակը:	5 հատոր
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	
Գործը ուղարկվել է:	14-09-2011
Էջերի քանակը:	5 հատոր
Գործին կից նյութերը:	
Ուր(դատարան):	Վճռաբեկ
Ուր:	
Ելքի գրության համարը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	17-09-2011

Ամսաթիվ:	19-10-2011		
Այլ նշումներ:			
Գործը հանձնվել է գրասենյակ:	25-10-2011		
Էջերի քանակ:	5 հատոր		
Գործին կից նյութերը:			
Այլ նշումներ:			
Ամսաթիվ:	25-10-2011		
Էջերի քանակը:	5 հատոր		
Գործին կից նյութերը:			
Այլ նշումներ:			
Դատական Գործ N: ԵՄԴ/0082/01/09			
Ամսաթիվ:	28-12-2009		
Ամբաստանյալ			
Անձ			
	Անուն	Անայա	
	Ազգանուն	Մատուլյան	
	Հասցե	չկա	
Հոդված_1			
	Հոդված	132	Մաս 2 Կետ 3,4
Հոդված_1			
	Հոդված	190	Մաս 2 Կետ 1
Հոդված_1			
	Հոդված	325	Մաս 1
Դատվածություն:			
Պաշտպան			
	Անուն	Ռազմիկ	
	Ազգանուն	Թովասյան	
	Հասցե	ք. Երևան, Սեբաստիա 66	
	Պատիժ:		
Հոդված_2			
	Հոդված	38-329	Մաս 1
	Խախտման միջոց:	Կալանավորում	
	Ուն կողմից է բերվել բողոքը:	Պաշտպան	
Բողոքը բերող անձը			
	Անուն	Ռազմիկ	
	Ազգանուն	Թովմասյան	
	Հասցե	ք. Երևան, Սեբաստիա 66	

Բողոքի բովանդակությունը:	Մասնակիորեն բեկանել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի՝ Ամայա Ստեփանի Մատույանի /ՀՀ քր. օր-ի 132-1 հոդ. 2-րդ մասի 3-րդ , 4-րդ կետերով 190 հոդ. 2-րդ մասի 1-ին կետով , 325 հոդ.1-ին մասով , 38-329 հոդ. 1-ին մասով , ՀՀ քր.օր. 66 հոդ. կաշրջով վերջնական պատիժ - 11 տարի ազ.՝ գույքի բռնագրավմամբ / վերաբերյալ 30.11.2009թ. դատավճիռը , ՀՀ քր. օր-ի 132-1 հոդ. 2-րդ մասի 3-րդ , 4-րդ կետերով 190 հոդ. 2-րդ մասի 1-ին կետով գործի վարույթը կարճել , իսկ մնացած մասով նշանակված պատիժը մեղմացնել :
Բողոքի ստացման կարգը:	Առձեռն հանձնվել է գրասենյակ
Ամսաթիվ:	26-12-2009
Չափահաս:	Այո
Ամսաթիվ:	28-12-2009
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քրեական և զինվորական վերաք.
Դատավորի անուն:	Արմեն Համլետի Դանիելյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քրեական և զինվորական վերաք.
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	21-01-2010
Կից փաստաթղթեր և իրեղեն ապացույց:	Քրեական գործին կից փաստաթղթեր և իրեղեն ապացույցներ չկան:
Ամսաթիվ:	26-01-2010
Երբ:	09-02-2010
Ուղարկվել է ծանուցագիր:	26-01-2010
Ժամ:	12:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	4-րդ
Երբ:	02-03-2010
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	12:00
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	4-րդ
Անփոփոխ թողնված դատական ակտը:	Պատճառաբանվել է
Ամսաթիվ:	02-03-2010
Ամբաստանյալ	
Անուն	Ամայա

Ազգանուն	Մատուլյան
Հայրանուն	Ստեփանի
Հասցե	ՀՀ ԱՆ <<Աբովյան>> ՔԿՀ
Քր. դատ. օր. հոդված	
Հոդված	393
Քր. դատ. օր. հոդված	
Հոդված	394
Այլ նշումներ:	
Քր.օր. հոդված	
Հոդված	132 հոդ. 3-րդ մասի 1, 2 կետեր, 132-1 հոդ. 2-րդ մասի 3, 4 կետեր, 190 հոդ. 2-րդ մասի 1-ին կետ, 325 հոդ. 1-ին մաս, 38-329 հոդ. 1-ին մաս
Դատական ակտ:	<p>Գործ ԵՄԴ/0082/01/09 Ո Ր Ո Շ ՈՒ Մ</p> <p>ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>02 մարտի 2010թ. ք.Երևան</p> <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՐԱՔԵՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵԿՅԱԼ ԿԱԶՄՈՎ</p> <p>ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱԿՈՐ՝ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ ԴԱՏԱԿՈՐՆԵՐ՝ Մ.ԱՐԴԱՄԱՆՅԱՆ Մ.ՈՒԵՀԱՆՅԱՆ</p> <p>ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Մ.ՍԵԼՔՈՆՅԱՆԻ</p> <p>ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝ ՄԵԴԱԴՐՈՂ՝ Ա.ԴԱԿԹՅԱՆԻ ՊԱՇՏՊԱՆ՝ Ռ.ԹՈՎՄԱՍՅԱՆԻ</p> <p>Դռնբաց դատական նիստում քննության առնելով պաշտպանության կողմի վերաքննիչ բողոքը՝ Ամայա Ստեփանի Մատուլյանի նկատմամբ ՀՀ քր. օր-ի 132 հոդ. 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 1321 հոդ. 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190 հոդ. 2-րդ մասի 1-ին կետով, 325 հոդ. 1-ին մասով և 38-329 հոդ. 1-ին մասով Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 30.11.2009թ. դատավճռի դեմ.</p> <p>Պ Ա Ր Զ Ե Ց</p> <p>Գործի դատավարական նախապատմությունը</p> <p>12.04.2007թ. հարուցված թիվ 62202607 քրեական գործի նախաքննության ընթացքում. 06.06.2007թ. որոշում է կայացվել Ամայա Ստեփանի Մատուլյանին ՀՀ քր. օր-132 1 հոդ. 2-րդ մասի 4-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին: 06.06.2007թ. որոշում է կայացվել Ամայա Ստեփանի Մատուլյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին: 06.06.2007թ. որոշում է կայացվել Ամայա Ստեփանի Մատուլյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու մասին: 12.07.2007թ. որոշում է կայացվել թիվ 62202607 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին, մինչև մեղադրյալ Ամայա Ստեփանի</p>

Մատույանի հայտնաբերումը:

01.12.2007թ. թիվ 62202607 քրեական գործը ընդունվել է ՀՀ ոստիկանությանն քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչության քննիչի վարույթ և կատարվել է նախաքննություն:

16.09.2008թ. որոշում է կայացվել Ամայա Ստեփանի Մատույանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և լրացնելու մասին:

16.09.2008թ. որոշում է կայացվել Ամայա Մատույանին ՀՀ քր. օր-ի 132 հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

30.09.2008թ. որոշում է կայացվել թիվ 62202607 քրեական գործի վարույթը կասեցնելու մասին մինչև մեղադրյալներ Ա.Մատույանին, Ա.Նադիրյանին և Կ.Մելքոնյանին հայտնաբերելը, իսկ Ա.Մատույանի կողմից կեղծ անձնագիր պատրաստելու հարցին որոշվել է անդրադառնալ Ա.Մատույանին և Ա.Սեդրակյանին հայտնաբերելուց հետո:

13.02.2009թ. մեղադրյալ Ամայա Ստեփանի Մատույանը հայտնաբերվել է:

13.02.2009թ. որոշում է կայացվել քրեական գործի վարույթը վերսկսելու մասին:

17.06.2009թ. որոշում է կայացվել Ամայա Ստեփանի Մատույանին ՀՀ քր. օր-ի 132 հոդ. 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով և 1321 հոդ. 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

21.07.2009թ. որոշում է կայացվել Ամայա Ստեփանի Մատույանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու, լրացնելու մասին և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր-ի 132 հոդ. 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 1321 հոդ. 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190 հոդ. 2-րդ մասի 1-ին կետով, 325 հոդ. 1-ին մասով և 38-329 հոդ. 1-ին մասով:

21.07.2009թ. որոշում է կայացվել Ամայա Ստեփանի Մատույանին ՀՀ քր. օր-ի 132 հոդ. 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 132-1 հոդ. 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190 հոդ. 2-րդ մասի 1-ին կետով, 325 հոդ. 1-ին մասով և 38-329 հոդ. 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

21.07.2009թ. որոշում է կայացվել թիվ 62202607 քրեական գործով Ամայա Մատույանի կողմից Ալլա Սեդրակյանի պռնկությամբ զբաղվելուն նպաստելու դեպքի վերաբերյալ քրեական գործի մասը կարճելու մասին և քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ՝ նույն մեղադրանքով օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության պատճառաբանությամբ:

22.07.2009թ. որոշում է կայացվել քրեական գործից մաս անջատելու և առանձին վարույթում առանձնացնելու մասին:

31.07.2009թ. Ամայա Մատույանի վերաբերյալ քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի ընդհանուր իրավասության դատարան: Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 30.11.2009թ. դատավճռով.

Ամայա Ստեփանի Մատույանը հանցավոր է ճանաչվել ՀՀ քր. օր-ի 132 հոդ. 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով /ՀՀ 2003թ. քր. օր-ի 132 հոդվածի խմբագրությամբ/ և դատապարտվել է ազատազրկման 5/հինգ/ տարի ժամկետով:

Ամայա Ստեփանի Մատույանը հանցավոր է ճանաչվել ՀՀ քր. օր-ի 1321 հոդ. 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով և դատապարտվել է ազատազրկման 8/ութ/ տարի ժամկետով:

Ամայա Ստեփանի Մատույանը հանցավոր է ճանաչվել ՀՀ քր. օր-ի 190 հոդ. 2-րդ մասի 1-ին կետով և դատապարտվել է ազատազրկման 8/ութ/ տարի ժամկետով՝ գույքի այսինքն հանցավոր ճանապարհով ստացած գույքի բռնագրավմամբ:

Ամայա Ստեփանի Մատույանը հանցավոր է ճանաչվել ՀՀ քր. օր-ի 325 հոդ. 1-ին մասով և դատապարտվել է ազատազրկման 1/մեկ/ տարի ժամկետով:

Ամայա Ստեփանի Մատույանը հանցավոր է ճանաչվել ՀՀ քր. օր-ի 38-329 հոդ. 1-ին մասով և դատապարտվել է ազատազրկման 1/մեկ/

տարի ժամկետով:

ՀՀ քր. օր-ի 66 հոդ. կիրառմամբ հանցագործությունների համակցությամբ պատիժները մասնակի գումարելու միջոցով վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 11 /տասնմեկ/ տարի ժամկետով՝ գույքի, այսինքն հանցավոր ճանապարհով ստացած գույքի բռնագրավմամբ:

Պատժի սկիզբը հաշվվել է 2009 թվականի փետրվարի 13-ից: Ընտրված խափանման միջոցը՝ կալանավորումը թողնվել է անփոփոխ մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը: Վճռվել է նաև.

Գործով իրեղեն ապացույց ճանաչված և քրեական գործին կցված «Վալգե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատանը թիվ 168244 պայմանագրով գրավադրված՝ 900 հարզի ոսկու համաձուլվածքից պատրաստված 47,360 գրամ քաշով՝ 440.800 ՀՀ դրամ արժողությամբ ապարանջանը, «Ֆաստ-Կրեդիտ» գրավատանը թիվ 107008 պայմանագրով գրավադրված՝ 750 հարզի ոսկու համաձուլվածքից պատրաստված՝ 444.700 ՀՀ դրամ արժողությամբ՝ 31,357 գրամ քաշով մանյակը, 13,856 գրամ քաշով ապարանջանը և 10,822 գրամ քաշով մատանին հանձնել պետական քույզե:

2009 թվականի հունիսի 15-ին Ամայա Ստեփանի Մատույանին պատկանող «Վալգե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատանը թիվ 168244 պայմանագրով գրավադրված՝ 900 հարզի ոսկու համաձուլվածքից պատրաստված 47,360 գրամ քաշով՝ 440.800 ՀՀ դրամ արժողությամբ ապարանջանի, Ֆաստ-Կրեդիտ» գրավատանը թիվ 107008 պայմանագրով գրավադրված 750 հարզի ոսկու համաձուլվածքից պատրաստված՝ 444.700 ՀՀ դրամ արժողությամբ՝ 31,357 գրամ քաշով մանյակի, 13,856 գրամ քաշով ապարանջանի և 10,822 գրամ քաշով մատանու, ինչպես նաև Ամայա Ստեփանի Մատույանի անձնական խուզարկությամբ հայտնաբերված 67.500 ՀՀ դրամ արժողությամբ՝ «Նոկիա 2630» և «Սամսունգ-SGH-D600» բջջային հեռախոսների վրա դրված կալանքը թողնել անփոփոխ, մինչև դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելը:

Դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո քրեական գործին կցված և Ամայա Ստեփանի Մատույանի անձնական խուզարկությամբ հայտնաբերված 67.500 ՀՀ դրամ արժողությամբ՝ «Նոկիա 2630» և «Սամսունգ-SGH-D600» բջջային հեռախոսները վերադարձնել Ամայա Ստեփանի Մատույանի եղբորը՝ Արա Ստեփանի Մատույանին:

Ապացույց ճանաչված և քրեական գործին կցված այլ փաստաթղթերը՝ Ամայա Ստեփանի Մատույանի կողմից Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքից «Վեստերն Յունիոն» համակարգով գումար փոխանցելու վերաբերյալ թվով 4 կտրոնները, թողնել քրեական գործին կից:

Տուժող Գայանե Դանդիլյանի ներկայացրած քաղաքացիական հայցը թողնել առանց քննության:

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 30.11.2009թ. դատավճիռն ղեկավարված ընդհանուր քննության արդյունքում հանցագործը պատժվել է 11 տարի ազատազրկումով:

Գործի փաստական հանգամանքները.

Ամայա Մատույանը 1997 թվականից մինչև 2002 թվականի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում Արաբական Միացյալ Էմիրություններում զբաղվել է կավատությամբ, ինչի համար նախկինում դատապարտվել է:

Ամայա Մատույանը 2001 թվականի օգոստոս ամսին գտնվելով Երևան քաղաքում հանդիպել է նախկինում Արաբական Միացյալ Էմիրություններում մարմնավաճառությամբ զբաղվող Ալլա Ալբերտի Սեդրակյանին: Ամայա Մատույանը տեղեկացել է, որ Ալլա

Սեդրակյանը ցանկանում է կրկին մեկնել Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաք՝ մարմնավաճառությամբ զբաղվելու նպատակով, սակայն արտաքսված լինելու պատճառով չի կարող իր անձնագրով մեկնել Դուբայ քաղաք։ Ամայա Մատուլյանն առաջարկել է իր օգնությունը, նշելով որ կկատարի անձնագրի ձևակերպման և Դուբայ մեկնելու հետ կապված ծախսերը։ Նա վերցրել է Ալլա Սեդրակյանի լուսանկարը, այն փակցրել անհայտ հանգամանքներում իր կողմից ձեռք բերված Արինկա Աթանեսյանի անձնագրում և անձնագիրը տրամադրել է Ալլա Սեդրակյանին։ Ալլա Սեդրակյանը Ամայա Մատուլյանի կողմից իրեն տրամադրված կեղծ անձնագրով հատել է ՀՀ պետական սահմանը և մեկնել Դուբայ քաղաք։

Ամայա Մատուլյանը բնակվել է Արաբական Միացյալ Էմիրություններում և շարունակել իր գործունեությունը։ Ամայա Մատուլյանը շահագործման նպատակով մարդուն հավաքագրելու և փոխադրելու շուրջ նախնական համաձայնության է եկել Գայանե Մելքոնյանի, Սուսաննա Նիկողոսյանի հետ և գումարներ վաստակելու նպատակով 2003 թվականի սեպտեմբեր ամսին Գյումրի քաղաքում բարձր վարձատրվող մատուցողուհու աշխատանք տրամադրելու կեղծ խոստումով հավաքագրել և Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաք է ուղարկել հայ աղջիկների։ Սևակ Սիմոնյանը և Ավետիք Խաչատրյանը Մոսկվա քաղաքում դիմավորել են աղջիկներին, իսկ ապա նրանց փոխադրել Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաք։

ՀՀ քաղաքացի Լուսինե Հարությունյանը 2003 թվականի օգոստոս ամսին Գյումրի քաղաքում ծանոթացել է Գայանե Մելքոնյանի հետ, վերջինս նրան առաջարկել է Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում մատուցողուհու բարձր վարձատրվող աշխատանք։ Լուսինե Հարությունյանը ընդունել է Գայանե Մելքոնյանի առաջարկը և նրան փոխանցել իր ՀՀ քաղաքացու անձնագիրը։ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում գտնվող Սևակ Սիմոնյանի և Ավետիք Խաչատրյանի միջոցով Լուսինե Հարությունյանին փոխադրել են Դուբայ քաղաք, որտեղ նրան դիմավորել և տարել են Ամայա Մատուլյանի մոտ։ Ամայա Մատուլյանը վերցրել է նրա անձնագիրը, պահել իր մոտ։ Ամայա Մատուլյանը օգտագործել է Լուսինե Հարությունյանի կողմից լեզվին չտիրապետելու, անձնագրի բացակայությամբ օտար երկրում տեղաշարժվելու հնարավորության բացակայությունը, ինչպես նաև Լուսինե Հարությունյանի կողմից փոխադրման գումարները վերադարձնելու հնարավորություն չունենալու կապակցությամբ վերջինիս մոտ առաջացած վիճակի խոցելիությունը, բացի այդ Լուսինե Հարությունյանի առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու իրեն չենթարկվելու դեպքում արաբների միջոցով ծեծի ենթարկելու և բռնաբարելու սպառնալիքներով, նրան ներգրավել է պոռնկության մեջ ու շուրջ 6 ամիս պահել նրան սեռական շահագործման մեջ։ Ամայա Մատուլյանն ամբողջությամբ ստացել է Լուսինե Հարությունյանի կողմից մարմնավաճառությամբ վաստակած գումարները։

ՀՀ քաղաքացի Գայանե Ղանդիլյանը 2003 թվականի հոկտեմբեր ամսին Գյումրի քաղաքում ծանոթացել է Գայանե Մելքոնյանի հետ։ Գայանե Մելքոնյանը Գայանե Ղանդիլյանին առաջարկել է մեկնել Հնդկաստան, իր ծանոթ կնոջ մոտ խմորեղենի խանութում բարձր աշխատավարձով վաճառողուհի աշխատելու համար, միաժամանակ հայտնել է, որ ճանապարհածախսը պետք է կատարվի աշխատանք տրամադրողի կողմից այն վերադարձնելու պայմանով։ Գայանե Ղանդիլյանը ընդունել է առաջարկը։ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում գտնվող Սևակ Սիմոնյանի և Ավետիք Խաչատրյանի միջոցով Գայանե Ղանդիլյանին փոխադրել են Դուբայ քաղաք, որտեղ նրան դիմավորել և տարել են Ամայա Մատուլյանի մոտ։ Ամայա Մատուլյանը վերցրել է նրա անձնագիրը, պահել իր մոտ։ Ամայա Մատուլյանը օգտագործել է Գայանե Ղանդիլյանի կողմից լեզվին չտիրապետելու, անձնագրի

բացակայությամբ օտար երկրում տեղաշարժվելու հնարավորության բացակայությունը, ինչպես նաև Գայանե Ղանդիյանի կողմից փոխադրման գումարները վերադարձնելու հնարավորություն չունենալու կապակցությամբ վերջինիս մոտ առաջացած վիճակի խոցելիությունը, բացի այդ Գայանե Ղանդիյանի առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու՝ իրեն չենթարկվելու դեպքում անապատում արաբների միջոցով ծեծի ենթարկելու և բռնաբարելու սպառնալիքներով, նրան ներգրավել է պոռնկության մեջ ու շուրջ 5 ամիս պահել սեռական շահագործման մեջ: Ամայա Մատուլյանն ամբողջությամբ ստացել է Գայանե Ղանդիյանի կողմից մարմնավաճառությամբ վաստակած գումարները:

Ամայա Մատուլյանը շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելու, փոխադրելու, ստանալու և սեռական շահագործման մեջ ներգրավելու դիտավորությամբ նախնական համաձայնության է եկել Արաբական Միացյալ Էմիրություններում բնակվող Ռուզաննա Սոկրատի Հարությունյանի հետ: Այդ նպատակով 2006 թվականի հուլիս ամսին, խաբեությամբ՝ Դուբայ քաղաքում պոռնկությամբ զբաղվելով գումարներ վաստակելու խոստումներով, Երևան քաղաքում հավաքագրել է Արմենուհի Աշոտի Ասատրյանին: Ամայա Մատուլյանը Արմենուհի Ասատրյանին տրամադրել է Արաբական Միացյալ Էմիրությունների մուտքի հրավերը և Երևան-Մոսկվա, Մոսկվա-Դուբայ չվերթի ուղետոմսեր և 2006 թվականի հուլիսի 29-ին նրան փոխադրել Դուբայ քաղաք: Ըստ նախնական համաձայնության Դուբայ քաղաքում Ռուզաննա Հարությունյանը վերցրել և իր մոտ է պահել Արմենուհի Ասատրյանի անձնագիրը, ապա օգտագործելով նրա անձնագրի բացակայության, ինչպես նաև օտար երկրի օրենքներին ծանոթ չլինելու, գումար չունենալու, Դուբայ փոխադրելու և մուտքի հրավերը ձեռք բերելու ծախսերը մարելու կապակցությամբ Արմենուհի Ասատրյանի մոտ ծագած վիճակի խոցելիությունը, նրա նկատմամբ իրականացրել են փոխադարձ հսկողություն և մինչև 2007 թվականի փետրվար ամիսը նրան պահել սեռական շահագործման մեջ՝ տիրանալով նրա կողմից մարմնավաճառությամբ վաստակած գումարներին:

Ամայա Մատուլյանը շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելու, փոխադրելու, ստանալու և սեռական շահագործման մեջ ներգրավելու դիտավորությամբ նախնական համաձայնության գալով Ռուզաննա Սոկրատի Հարությունյանի հետ՝ 2006 թվականի օգոստոս ամսին խաբեությամբ՝ Դուբայ քաղաքում պոռնկությամբ զբաղվելով գումարներ վաստակելու խոստումներով, Հայաստանի Հանրապետությունում հավաքագրել է Կարինե Խաչատուրի Ավդալյանին: Ամայա Մատուլյանը Կարինե Ավդալյանին տրամադրել է Արաբական Միացյալ Էմիրությունների մուտքի հրավերը, Երևան-Մոսկվա, Մոսկվա-Դուբայ չվերթի ուղետոմսեր և 2006 թվականի օգոստոսի 16-ին նրան փոխադրել է Դուբայ քաղաք: Ըստ նախնական համաձայնության Դուբայ քաղաքում Ռուզաննա Հարությունյանը վերցրել և իր մոտ է պահել Կարինե Ավդալյանի անձնագիրը, ապա օգտագործելով նրա անձնագրի բացակայության, ինչպես նաև օտար երկրի օրենքներին ծանոթ չլինելու, գումար չունենալու, Դուբայ փոխադրելու և մուտքի հրավերը ձեռք բերելու ծախսերը մարելու կապակցությամբ Կարինե Ավդալյանի մոտ ծագած վիճակի խոցելիությունը, նրան մինչև 2006 թվականի հոկտեմբեր ամիսը պահել է սեռական շահագործման մեջ՝ տիրանալով նրա կողմից մարմնավաճառությամբ վաստակած գումարներին: Կարինե Ավդալյանի անձնագիրը վերադարձնելու համար Ռուզաննա Հարությունյանը նրանից պահանջել է 6.000 ԱՄՆ դոլար, գումարը ստանալուց հետո վերադարձրել է նրա անձնագիրը: Ամայա Մատուլյանը շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելու, փոխադրելու, ստանալու և սեռական շահագործման մեջ ներգրավելու դիտավորությամբ նախնական համաձայնության գալով Ռուզաննա Սոկրատի Հարությունյանի հետ՝ 2006 թվականի նոյեմբեր ամսին խաբեությամբ՝ Դուբայ քաղաքում պոռնկությամբ զբաղվելով գումարներ վաստակելու խոստումներով, Երևան

քաղաքում հավաքագրել է Մարինե Հարությունի Նալբանդյանին: Ամայա Մատուլյանը Մարինե Նալբանդյանին տրամադրել է Արաբական Միացյալ Եմիրությունների մուտքի հրավերք, Երևան-Մոսկվա, Մոսկվա-Դուբայ չվերթի ուղետոմսեր և 2006 թվականի նոյեմբերի 9-ին նրան փոխադրել է Դուբայ քաղաք: Ըստ նախնական համաձայնության Դուբայ քաղաքում Ռուզաննա Հարությունյանը վերցրել և իր մոտ է պահել Մարինե Նալբանդյանի անձնագիրը, ապա օգտագործելով նրա անձնագրի բացակայության, ինչպես նաև օտար երկրի օրենքներին ծանոթ չլինելու, գումար չունենալու, Դուբայ փոխադրելու և մուտքի հրավերք ձեռք բերելու ծախսերը մարելու կապակցությամբ Մարինե Նալբանդյանի մոտ ծագած վիճակի խոցելիությունը, նրան մինչև 2007 թվականի փետրվար ամիսը պահել է սեռական շահագործման մեջ՝ տիրանալով նրա կողմից մարմնավաճառությամբ վաստակած գումարներին: Ամայա Մատուլյանը նպատակ ունենալով թաքցնել և խեղաթուրել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները՝ մի խումբ անձանց սեռական շահագործման ենթարկելու միջոցով վաստակած գումարների ծագումը, այդ եկամուտները փոխակերպել է այլ արժեքի՝ ձեռք է բերել 4.769.500 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ոսկյա զարդեր: Ամայա Մատուլյանը 2008 թվականի հունիս ամսից մինչև 2009 թվականի փետրվար ամիսն ընկած ժամանակահատվածում ոսկյա զարդերը գրավադրել է Երևան քաղաքի տարբեր գրավատներում: Ամայա Մատուլյանը 2004 թվականի փետրվար-մարտ ամիսների ընթացքում Արաբական Միացյալ Եմիրությունների Դուբայ քաղաքից »Վեստերն Յունիոն« դրամական փոխանցումների համակարգով 2.028.996 ՀՀ դրամին համարժեք 3.600 ԱՄՆ դոլար է փոխանցել Ռուսաստանի Դաշնությունում գտնվող Սևակ Սիմոնյանին և դրամական փոխանցումներ է կատարել Հայաստանի Հանրապետությունում գտնվող Սուսաննա Նիկողոսյանի և Ազնեսա Մարտիրոսյանի անվամբ: Ամայա Մատուլյանը փոխանցման միջոցով օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացած 6.798.496 ՀՀ դրամ:

Նախաքննության մարմնի կողմից 2009թ. հունիսի 17-ին Ռուզաննա Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր-ի 132 հոդ. 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 1321 հոդ. 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, վերջինիս նկատմամբ հայտարարվել է հետախուզում, որպես խափանման միջոց ընտրվել է կալանավորումը:

Նախաքննության մարմինը 2009թ. հուլիսի 22-ի որոշմամբ թիվ 62202607 քրեական գործից անջատել է Ռուզաննա Հարությունյանի վերաբերյալ մասը:

Գայանե Մելքոնյանը և Սուսաննա Նիկողոսյանը ներգրավվել են որպես մեղադրյալ ՀՀ քր. օր-ի 132 հոդ. 3-րդ մասի 2-րդ կետով և 2008թ. մարտի 7-ին Երևանի քրեական դատարանի դատավճռով դատապարտվել են ազատազրկման:

Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Պաշտպանության կողմը վկայակոչելով բողոքում նշված պատճառաբանությունները, խնդրել է սույն վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ: Մասնակիորեն բեկանել Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 30.11.2009թ. դատավճիռը:

ՀՀ քր. օրի 1321 հոդ. 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով և 190 հոդ. 2-րդ մասի 1-ին կետով գործի վարույթը կարճել: Իր նկատմամբ նշանակված պատիժը մեղմացնել, հետևյալ հիմնավորումներով. Առաջադրված մեղադրանքներով իրեն մեղավոր է ճանաչել մասնակիորեն: Այն է. իրեն մեղավոր է ճանաչել ՀՀ քր. օրի 132 հոդ. 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 38-329 հոդ. 1-ին մասով և 325 հոդ. 1-ին մասով, խնդրել է այդ հոդվածներով իր նկատմամբ մեղմ պատիժ սահմանել:

Իր կատարած արարքների համար հայտնել է, որ պատրաստ է պատիժ կրել, սակայն ամեն դեպքում իր կատարած արարքի համար սահմանվել է անհամեմատ խիստ պատիժ: Այդ մասով խնդրում է պատժի մեղմացում:

Ղատարանը սխալ է կիրառել նյութական նորմը՝ իրեն ղատապարտելով ՀՀ քր. օրի 132 հոդ. 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով և 190 հոդ. 2-րդ մասի 1-ին կետով, նշված սխալը ազդել է պատժաչափի վրա:

Վերաքննիչ ղատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վերաքննիչ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերլուծելով գործի նյութերը, վերաքննիչ ղատարանը հանգում է այն հետևության, որ պաշտպանության կողմի վերաքննիչ բողոքը պետք է մերժել հետևյալ պատճառաբանությամբ:

Գործի քննության ընթացքում առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Ամայյա Ստեփանի Մատույանն իրեն մեղավոր է ճանաչել մասնակիորեն և ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը 2003 թվականին գտնվել է Ղուբայ քաղաքում: Իրեն զանգահարել է ընկերուհին և հայտնել, որ աղջիկներ կան, որոնք ցանկանում են գալ Ղուբայ: Ինքը օգնել է նրանց մեկնել Ղուբայ և այդ ճանապարհով Լուսինե Հարությունյանը, Գայանե Ղանդիլյանը մեկնել են Ղուբայ: Նրանք տեղյակ են եղել թե ուր են գնում և ինչով են զբաղվելու: Այդ աղջիկները Ղուբայ են գնացել իրենց կամքով, ինքը ոչ մեկին չի ստիպել, ազատությունից չի զրկել, չի ծեծել, բացի այդ նրանք կապ են ունեցել իրենց ծնողների հետ, իսկ անձնագրերը նրանց մոտ են եղել: Ինքը նրանց չի ստիպել, իր բռնվելուց հետո նրանք տարիներ շարունակ մնացել են Ղուբայ քաղաքում, իրենց հաճությամբ վայելել են, իսկ ապա եկել ու իր »վրա գրում են«: Ինքը հավաքագրել է մարդկանց և ուղարկել Ղուբայ, սակայն ոչ մեկի չի ստիպել, նրանք տեղյակ են եղել, որ գնում են մարմնավաճառությամբ զբաղվելու և կիսովի գումար աշխատելու: 2006 թվականին կրկին դիմել են իրեն ու խնդրել իրենց տանել աշխատելու, ինքը ոչ մի վատ բան չի արել: Ինքը սխալ արել է, որը պետք է չաներ, բայց արել է: Ամայյա Մատույանն իրեն մեղավոր չի ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 1321 հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, քանի որ ոսկյա զարդերը եղել են իր անձական օգտագործման զարդերը, որոնց մի մասը նվեր է ստացել, իսկ մի մասը գնել է, բացի այդ ոչ մեկի չի շահագործել, չի սպառնացել, ազատությունից չի զրկել, ծեծի չի ենթարկել, ֆիզիկական բռնություն չի եղել, աղջիկները բոլորը իրենց կամքով են մեկնել Ղուբայ: Ինքն արարք կատարել է, բայց թող իրեն դատեն արածի համար, այլ ոչ թե չարածների համար:

Գայանե Ղանդիլյանի կողմից ներկայացրած քաղաքացիական հայցը չի ընդունում, քանի որ նա իրեն գումար չի տվել, ինքն այդ գումարներից տեղեկություն չունի, իսկ նա »շանտաժի սովոր է և ցանկանում է այդ ճանապարհով ևս գումար աշխատել«:

Վերաքննիչ ղատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Ամայյա Ստեփանի Մատույանին ՀՀ քր. օր-ի 132 հոդ. 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 1321 հոդ. 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190 հոդ. 2-րդ մասի 1-ին կետով, 325 հոդ. 1-ին մասով, 38-329 հոդ. 1-ին մասով մեղսագրված արարքները հիմնավորվում, իսկ պաշտպանության կողմի վերը բերված պատճառաբանությունները հերքվում են գործով ձեռք բերված հետևյալ ապացույցներով.

Տուժող Գայանե Արտաշեսի Ղանդիլյանի գործի քննության ընթացքում տված ցուցմունքներով այն մասին, որ 2003 թվականի հոկտեմբեր ամսվա սկզբին Գյումրի քաղաքում ծանոթացել է Գայանե Մելքոնյանի հետ: Գայանե Մելքոնյանն իրեն առաջարկել է 3 ամիս ժամանակով մեկնել Հնդկաստան իր ծանոթ կնոջ մոտ խմորեղենի խանութում բարձր աշխատավարձով վաճառողուհի աշխատելու: Ինքը համաձայնվել է, մեկնել է Երևան քաղաք, որտեղ

մի քանի օր մնացել է Սուսաննայի տանը, իսկ ապա մեկնել Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաք: Մոսկվա քաղաքում իրեն դիմավորել են Սևակն ու Ավոն: Նրանք իրեն տարել են իրենց բնակարան, որտեղ մնացել է 10 օր, ապա նրանք պատրաստել են իր լուսանկարով ՌԴ քաղաքացու կեղծ անձնագիր և ինքը 2003 թվականի հոկտեմբերի 17-ին մեկնել է Դուբայ քաղաք: Դուբայ քաղաքում իրեն դիմավորել են Անժելան ու Սաթենիկը և տարել Ամայա Մատուլյանի՝ «Նանոյի» բնակարան: Ամայա Մատուլյանը վերցրել է իր անձնագիրը և ասել. «այսօր գնա հանգստացիր, իսկ վաղը կհագնվես, կքսվես և աղջիկների հետ կգնաս դիսկոտեկա, որտեղ կզբաղվես մարմնավաճառությամբ»: Հաջորդ օրը զբաղվել է մարմնավաճառությամբ, իսկ աշխատած գումարները տվել է Ամայա Մատուլյանին: Գայանե Ղանդիլյանը շուրջ 5 ամիս մնացել է Ամայա Մատուլյանի մոտ և զբաղվել մարմնավաճառությամբ, ահուվախոլ աշխատել է Արաբական Միացյալ Էմիրություններում: Ինքն այլ ճանապարհ չի ունեցել և ստիպված զբաղվել է մարմնավաճառությամբ, քանի որ «հնար չի եղել», օրեկան միջին աշխատել է 300 ԱՄՆ դոլար: Ամայա Մատուլյանն այդ ընթացքում իր աշխատած գումարներից իր համար գնել է ոսկյա շղթա, մատանի, ականջօղ, հագուստներ: Ամայա Մատուլյանի բռնվելուց՝ 2004 թվականից հետո Անժելան իրենց անձնագրերը հանձնել է և ասել. «Նանոյին բռնել են, դուք կարող եք աշխատել ինքներդ ձեզ համար»: Այդ օրվանից իրենք աշխատել են առանց հսկողության և իրենք են տնօրինել իրենց աշխատած գումարները: Ինքը ներկայացնում է քաղաքացիական հայց և խնդրում Ամայա Մատուլյանից հօգուտ իրեն բռնագանձել 20.000 ԱՄՆ դոլար:

Տուժող Մարինե Հարությունի Նալբանդյանի գործի քննության ընթացքում ցուցմունքներ է տվել այն մասին, որ 2006 թվականի նոյեմբեր ամսին ժամոթացել է «Նանոյի» Ամայա Մատուլյանի հետ: Ինքն այդ ժամանակ գտնվել է նյութապես վատ վիճակում և Ամայա Մատուլյանին խնդրել է իրեն օգնել մեկնել Դուբայ քաղաք: Ամայա Մատուլյանի օգնությամբ ինքն անձանգիր է ստացել և նրա օգնությամբ գնացել Դուբայ, քանի որ ցանկացել է մի երկու կուպեկ աշխատել և վերադառնալ: Մեկնելու ժամանակ Ամայա Մատուլյանը իր ընտանիքի անդամներին գումար է տվել, որպեսզի նրանք ապրեն մինչև իր կողմից գումար ուղարկելը: Ամայա Մատուլյանի դեմ բողոք, պարտք ու պահանջ չունի, այլ գոհ է նրանից, որ նրա «օգնությամբ իր աչքերը բացվել են», բացի այդ մինչև օրս ինքը չի վերադարձրել Ամայա Մատուլյանին պարտք գումարը: Եթե ինքը ներկա պահին հնարավորություն ունենար, ապա կրկին կմեկներ Դուբայ քաղաք: Մինչև Դուբայ քաղաք մեկնելը ինքը Հայաստանում զբաղվել է մարմնավաճառությամբ: Դուբայ քաղաքում օրական սպասարկել է մեկ մարդու և աշխատել 1500 դրամ:

Մարինե Հարությունի Նալբանդյանը դատաքննությամբ նախաքննության ընթացքում տված ցուցմունքը հրապարակվելու կապակցությամբ հայտնել է նաև, որ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներում սխալ է գրել միայն անձնագրի պահը, այսինքն այն, որ «անձնագիրը տվել է Նանոյին», իսկ նախաքննության ընթացքում գրված ցուցմունքն ամբողջությամբ ճիշտ է: Նախաքննության ընթացքում իր կողմից տրված գումարային հարցերը չափազանցված են և չեն համապատասխանում իրականությանը:

Տուժող Մարինե Նալբանդյանի՝ նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ 2006 թվականի նոյեմբեր ամսվա սկզբին որոշել է մեկնել Դուբայ՝ մարմնավաճառությամբ փող աշխատելու նպատակով: Իր ընկերուհի Տինայի մայրը՝ Մարինեն տվել է Նանոյի հեռախոսահամարը և ասել, որ նրա օգնությամբ կարող է մեկնել Դուբայ, քանի որ իր աղջիկը նրա օգնությամբ է մեկնել Դուբայ և շատ գոհ է: Մարինե Նալբանդյանը զանգահարել, իսկ ապա հանդիպել է Նանոյին: Նա իրեն ասել է, որ կօգնի մեկնել Դուբայ՝ մարմնավաճառությամբ գումար աշխատելու համար, սակայն պետք է վերադարձնի իր կողմից կատարած ծախսի

գումարը, իսկ ապա նոր աշխատի իր համար: Ինքը համաձայնվել է, Նանոյի օգնությամբ ստացել է ՀՀ քաղաքացու անձնագիր, քանի որ այդ ժամանակ մշտական բնակության վայր չի ունեցել, ուստի չի կարողացել ստանալ անձնագիր: 2006 թվականի նոյեմբերի 2-ին մեկնել է ՌԴ Մոսկվա քաղաք, իսկ նոյեմբերի 9-ին մեկնել է Դուբայ քաղաք: Մինչև մեկնելը Նանոն իրեն ասել է, որ իր վրա կատարած ծախսերը կազմում են 2000 ԱՄՆ դոլար: 2006 թվականի նոյեմբերի 9-ի ուշ երեկոյան հասել է Դուբայ քաղաք, որտեղ իրեն դիմավորել է Ռուզանը ու տարել իր վարձակալած բնակարան: Մոտ 20 օր բնակվել է Ռուզանի տանը և այդ ընթացքում տանից դուրս չի եկել, չի աշխատել, իսկ իրեն այդ ընթացքում պահել է Ռուզանը: 2006 թվականի նոյեմբերի 29-ին Նանոն եկել է Դուբայ: Ինքը և մի քանի այլ աղջիկներ, որոնց Դուբայ է ուղարկել Նանոն, նրա հետ միասին տեղափոխվել են այլ բնակարան ու ապրել համատեղ: Տեղափոխվելուց հետո Նանոն վերցրել է իր անձնագիրը, պահել իր մոտ, որպեսզի անձնագիրը չկորչի, իսկ ապա ասել է, որ պետք է պարտքը՝ 2000 ԱՄՆ դոլարը վերադարձնի: Նանոյի հետ բնակվելու ընթացքում զբաղվել է մարմնավաճառությամբ և աշխատած գումարները տվել Նանոյին, որի մեջ է մտել նաև տան վարձի գումարը, կոմունալ ծախսերի գումարը և այլն: 2007 թվականին Նանոյի բռնվելուց հետո իրենք հայտնվել են փողոցում, ուստի ինքն ու Ամինան մի քանի օր բնակվել են առանձին, որից հետո ինքը գնացել է Ռուզանի մոտ: Նանոյից տեղեկացել է, որ իր անձնագիրը գտնվում է Ռուզանի մոտ և նրանից պահանջել է անձնագիրը, սակայն Ռուզանը հրաժարվել է վերադարձնել անձնագիրը և ասել է, որ իրեն պարտք է, պարտքը մարելուց հետո անձնագիրը կվերադարձնի: Որոշ ժամանակ բնակվել է Ռուզանի տանը, ապա իր արաբ ընկերոջ հետ բնակվել է առանձին: Այդ ընթացքում ոստիկաններն իրեն բռնել են ու պահանջել անձնագիրը: Ինքը զանգահարել է Ռուզանին, ասել, որ ոստիկանությունում է, եթե անձնագիրը չբերի, ապա ամեն ինչ կպատմի: Ռուզանն իր անձնագիրը վերադարձրել է և այդ օրվանից ինքը Ռուզանին չի տեսել: Մինչև Նանոյի բռնվելը օրեկան Նանոյին տվել է 150-ից 200 ԱՄՆ դոլար: Նանոյի հետ բնակվելու ընթացքում նա իր մորն ուղարկել է 300 ԱՄՆ դոլար և ճամպուրուկով հագուստ /հատոր 4-րդ գթ. 31-34/:

Տուժող Մարինե Նալբանդյանը նախաքննության ընթացքում հայտնել է նաև, որ մեկուկես ամսվա ընթացքում օրեկան վաստակել է շուրջ 200 ԱՄՆ դոլար: Նանոյին ընդհանուր տվել է 8000-9000 ԱՄՆ դոլար և այդ գումարներով մարել իր պարտքը: Իր հաշվարկներով պարտքը մարել է և հասկացել, որ Նանոն հաշվարկների մեջ ձիշտ չէ, եթե Նանոն չբռնվեր, հայտնի չէ, թե որքան ժամանակ ինքը ստիպված էր լինելու զբաղվել մարմնավաճառությամբ և նրան վճարելու իր վաստակած գումարները /հ. 4, գ.թ. 77-78/:

Տուժող Լուսինե Վաղարշակի Հարությունյանի գործի քննության ընթացքում տված ցուցմունքներով այն մասին, որ 2003 թվականի օգոստոս ամսվա կեսերին Գյումրի քաղաքում, աշխատանքի վայրում ծանոթացել է Գայանե Մելքոնյանի հետ: Գայանե Մելքոնյանն իրեն առաջարկել է բարձր աշխատավարձով մատուցողուհու աշխատանք Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում: Ինքը համաձայնվել է և երեք օր անց Գայանե Մելքոնյանի ուղեկցությամբ եկել է Երևան քաղաք, իսկ անձնագիրը տվել Գայանե Մելքոնյանին: Ինքը չորս օր բնակվել է Սուսանայի տանը, ապա մեկնել Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաք, որտեղ իրեն դիմավորել են Սևակ և Ավո անուններով հայազգի տղաներ և տարել իրենց տուն, որտեղ մնացել է 14 օր: 2003 թվականի սեպտեմբերի 2-ին Սևակը և Ավոն իրեն ճանապարհել են Դուբայ քաղաք, որտեղ իրեն դիմավորել են Երկու աղջիկներ և տարել Ամայա Մատուլյանի տուն: Ամայա Մատուլյանն իրեն դիմավորել է, տանը մարդ չի եղել, իսկ երեկոյան տուն են եկել մի քանի աղջիկներ, իսկ հաջորդ օրը Ամայա Մատուլյանն իրեն ուղարկել է դիսկոտեկա: Ինքը Դուբայ քաղաքում աշխատել է որպես

մարմնավաճառ, իսկ աշխատած գումարներն ամբողջությամբ տվել է Ամայյա Մատուլյանին: Ամայյա Մատուլյանի մոտ մնացել է մինչև նրա ձերբակալվելը, որից հետո իրենց անձնագրերը տվել են իրենց: Տուժող Լուսինե Հարությունյանը հայտնել է նաև, որ Գայանե Մելքոնյանը և Սուսաննան իրեն մինչև վերջ չեն ասել, որ Դուբայ քաղաքում աշխատելու է որպես մարմնավաճառ: Դուբայ քաղաքում իրեն դիմավորել է «Ազնեսան» և տարել Ամայյա Մատուլյանի մոտ: Ամայյա Մատուլյանն իրեն ասել է. «այսօր հոգնած ես, լողացիր քնիր», իսկ հաջորդ օրն իրեն ուղարկել է դիսկոտեկա և ասել, որ պետք է զբաղվես մարմնավաճառությամբ: Ինքը մերժել է ու ասել, որ իրեն մատուցողուհու աշխատանք են խոստացել: Ամայյա Մատուլյանն ասել է. «մոռացիր այդ մասին, այստեղ պետք է մարմնավաճառությամբ գումար վաստակես, հո քեզ սիրուն աչքերի համար չեն բերել այստեղ»: Ինքը ստիպված է աշխատել, քանի որ «Նանոն» վախեցրել է և ասել. «կգանգեմ պոչիկ Ալիյին, կգա կտանի, ամեն տեղից ամեն բան կանի և տեսնեմ, թե ոնց չեք աշխատում»: Աշխատած գումարը տվել է Ամայյա Մատուլյանին: Նա իր ընտանիքի անդամներին երկու անգամ 100 դոլար է ուղարկել, բացի այդ տվել է տան վարձը, սննդի գումարը և հագուստներ է գնել: Ինքն ամեն օր գնացել է դիսկոտեկա և յուրաքանչյուր օր աշխատել 300-ից 500 ԱՄՆ դոլար, նայած օր, բացի այդ օրեր են եղել, որ չի աշխատել: Երբ չի աշխատել, Ամայյա Մատուլյանը խփել է և ասել. «գնա աշխատիր», իսկ խփել է կամ ձեռքով, կամ փայտով, կամ երկարացման լարով: Անձնագրերը գտնվել են Ամայյա Մատուլյանի մոտ, իսկ եթե նրան չձերբակալեին, հնարավոր է, որ նա վերադարձներ աշխատած գումարները: Ինքը Ամայյա Մատուլյանի հանդեպ պարտք ու պահանջ չունի, իրեն ոչինչ պետք չէ: Տուժող Կարինե Խաչատուրի Ավդալյանը գործի քննության ընթացքում ցուցմունքներ է տվել այն մասին, որ իր ծնողները բնակվել են գյուղում, իսկ ինքը Գյումրի քաղաքում և ցանկացել է բնակարան գնել, քանի որ բնակարան չի ունեցել: Ինքը զրուցել է Գայանեի հետ, նա ասել է. «կցանկանաս գնալ Դուբայ, աշխատել որպես մարմնավաճառ, ապա գալ բնակարան գնել»: Ինքը ցանկություն է հայտնել, վերցրել է «Նանոյի» հեռախոսահամարը, զանգահարել է նրան, պայմանավորվել, ապա եկել է Երևան քաղաք ու հանդիպել նրան: Ամայյա Մատուլյանը օգնել է իրեն, ինքը ստացել է մուտքի հրավերք և մեկնել Դուբայ քաղաք: Ինքն ի սկզբանե տեղյակ է եղել, թե ինչ պետք է աշխատի և Դուբայ է մեկնել իր ցանկությամբ: Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքով մեկնել է Դուբայ, որտեղ իրեն դիմավորել է Ռուզաննա Հարությունյանը և վերցրել իր անձնագիրը, ապա ասել է. «այսօր հանգստացիր, իսկ վաղը կգնաս աշխատելու»: Սակայն ինքը նույն օրը աղջիկների հետ գնացել է դիսկոտեկա, աշխատել է, իսկ աշխատած գումարները տվել է Ռուզաննա Հարությունյանին: Ինքը աշխատել է շուրջ ամիս ու կես, որի ընթացքում ծանոթացել է մի տղայի հետ և նրա հետ մեկնել Աբու-Դաբի, որտեղ նրա հետ ապրել է հինգ ամիս, ապա վերադարձել Հայաստան և ընկերոջ իսկ օգնությամբ իր համար բնակարան է գնել Գյումրի քաղաքում: Տուժող Կարինե Ավդալյանը հայտնել է նաև, որ ինքը Ամայյա Մատուլյանին պետք է վերադարձներ վիզայի և տոմսի գումարը, շուրջ 3000-4000 ԱՄՆ դոլար: Ինքը Դուբայ քաղաքում Ամայյա Մատուլյանին չի հանդիպել, քանի որ իր ընկերոջ հետ գնացել է Աբու-Դաբի: Ռուզաննա Հարությունյանի տանը մնացել է շուրջ 2 ամիս, օրեկան աշխատել է 700 դրիամ, 600 դրիամ, 500 դրիամ, իսկ աշխատած գումարները տվել է Ռուզաննա Հարությունյանին: Ռուզաննա Հարությունյանն ասել է. «ես պիտի գումարները հավաքեմ, իսկ երբ Ամայյան գա, իր հետ ձեր հարցերը կլուծեք»: Ռուզաննա Հարությունյանն իրենց աշխատած գումարները տվել է տան վարձը, սննդի գումարը և իրենց համար շորեր է գնել, որոնք թանկ գներով վաճառել է իրենց վրա: Իրեն ոչ մեկը չի արգելել տանից դուրս գալ, խանութ է գնացել, գնումներ կատարել: Ինքը մինչև Ամայյա Մատուլյանի Դուբայ գալը Ռուզաննայից պահանջել է

իր անձնագիրը, որպեսզի ընկերոջ հետ գնա, սակայն նա իրեն ասել է, որ «դու դեռ պարտքեր ունես, անձնագիրդ չեմ տա, այն կպատռեմ և այլն»: Ինքը Ռուզաննա Հարությունյանից 20.000 դրհամով գնել է իր անձնագիրը և ընկերոջ հետ գնացել Աբու-Դաբի: Ինքը Ամայա Մատուլյանից պարտք ու պահանջ չունի:

Տուժող Կարինե Ավդալյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ 2006 թվականի հուլիս, օգոստոս ամիսներին հանդիպել է Ամայա Մատուլյանին «Նանոյին», նա իրեն առաջարկել է գնալ Դուբայ և մարմնավաճառությամբ զումար աշխատել: Ամայա Մատուլյանն ասել է, որ իր միջոցներով կլուծի վիզայի և ճանապարհածախսի հարցերը: Ըստ իրենց նախնական պայմանավորվածության ինքը Նանոյին պարտք է մնացել 4000-5000 ԱՄՆ դոլար, որը պետք է մարեր մարմնավաճառությամբ զբաղվելու արդյունքում վատակած գումարներով: 2006 թվականի օգոստոսի 15-ին մեկնել է ՌԴ Մոսկվա քաղաք, իսկ այնտեղից մեկնել է Դուբայ: Դուբայում իրեն դիմավորել է Նանոյի ընկերուհի Ռուզանը ու տարել իր բնակարան: Ճանապարհին Ռուզանը վերցրել է իր անձնագիրը և ասել, որ այն պետք է փոխանցի «սպոնսորին»: Նախքան Դուբայ մեկնելը Նանոն իրեն զգուշացրել է, որ Ռուզանը պետք է անձնագիրը վերցնի և որպես երաշխիք պահի իր մոտ, մինչև իր կողմից պարտքը մարելը և դա իր համար անսպասելի չի եղել: Առաջին իսկ օրից զբաղվել է մարմնավաճառությամբ, իսկ աշխատած գումարները տվել է Ռուզանին: Մոտ 2,5 ամիս բնակվել է Ռուզանի տանը, աղջիկների հետ գնացել «դիսկոտեկ», որտեղ հաճախորդ է գտել ու զումարի դիմաց սեռական հարաբերություն ունեցել, իսկ աշխատած գումարները հանձնել է Ռուզանին: Օրեկան աշխատել է 200 ԱՄՆ դոլար և տվել Ռուզանին, որպեսզի պարտքը շուտ մարի և սկսի աշխատել իր համար: Ինքը պարտքը մարել է ու այդ մասին ասել է Ռուզանին, իսկ նա պատասխանել է, որ Նանոն կգա, այդ հարցը նոր կլուծեք: Մի քանի անգամ Ռուզանից պահանջել է իր անձնագիրը, սակայն նա անձնագիրը չի վերադարձրել, այլ ասել է, որ անձնագիրը «սպոնսորի» մոտ է, պարտքը կմարի, նոր անձնագիրը կվերադարձնեն: Այդ ընթացքում ծանոթացել է արաբ տղայի հետ և որոշել նրա հետ մեկնել Աբու-Դաբի ու բնակվել այնտեղ: Ինքն այդ մասին հայտնել է Ռուզանին, սակայն նա զայրացել է ու ասել, որ դեռ պարտքը չի մարել, իսկ անձնագիրը վերադարձնելու համար պահանջել է 20.000 դրհամ 6000 ԱՄՆ դոլար: Ռուզանին ասել է, որ իր պարտքը վաղուց մարել է և կրկին պահանջել է անձնագիրը, սակայն նա կտականապես հրաժարվել է առանց զումարի վերադարձնել անձնագիրը: Կարինե Ավդալյանն այդ մասին ասել է ընկերոջը և նա 20.000 դրհամով Ռուզանից գնել է անձնագիրը: Ինքը 2,5 ամսվա ընթացքում աշխատել է 15.000 ԱՄՆ դոլար և այն ամբողջությամբ տվել Ռուզանին, իսկ վերջում 6000 ԱՄՆ դոլարով գնել է իր անձնագիրը: Ինքը «ենթադրում է, որ Ռուզանը պետք է Նանոյի հետ համաձայնության եկած լիներ, քանի որ Նանոն էր իրեն Դուբայ ուղարկել և չի կարծում, որ Ռուզանն ինքնազուլուխ իր անձնագիրը հետ կտար» /հ. 4-րդ գթ. 60-62/:

Վկա Անահիտ Վաչագանի Ղանդիլյանի գործի քննության ընթացքում տված ցուցմունքներով այն մասին, որ Քայանե Ղանդիլյանն իր աղջիկն է: Իր աղջիկը 2003 թվականին անհայտ կորել է, ուստի ինքը ուստիկանությունում հայտարարություն է տվել: Որոշ ժամանակ անց տեղեկացել է, որ իր դստերը խաբեությամբ տարել են Դուբայ քաղաք, որտեղ նա 4 տարի զբաղվել է տաժանակիր աշխատանքով մարմնավաճառությամբ: Իր դուստրը եղել է 17 տարեկան, ամուսնացած չի եղել և նրան խաբելով վաճառել են արաբների շեյխերին: Ամայա Մատուլյանն իր դստերը լավ հագուկապ տվել է, պահել, իսկ եթե տաս դոլար է ծախսել, ապա իր աղջկանից վերցրել է մարմնավաճառությամբ աշխատած գումարները: Ինքը որպես ծնող խնդրում է խստագույն պատիժ, քանի որ որպես մայր չի կարողանում պարզ ձակատով նայել որևէ մեկին: Ինքը հեռախոսով խոսել է դստեր հետ, նրա ծնունդից հետո 2004 թվականի փետրվարի 4-ին: Քայանե Ղանդիլյանն իրեն ասել է. «մամ, ես շատ

լավ են, Դուբայում են, ամուսնացել են և աշխատում են խմորեղենի ցեխում», իսկ ապա ստացել է գումար: Մինչ դասեր հետ խոսելն իրեն ուղարկել են 250 ԱՄՆ դոլար և խաղալիքներ: Ինքը հեռախոսով խոսել է Ամայա Մատուլյանի հետ, նա ասել է, որ «Պայանեն իր մոտ է, նրան պահում է իր աղջկա պես և նա աշխատում է խմորեղենի ցեխում»: Իր դուստրը ստիպված է զբաղվել մարմնավաճառությամբ, քանի որ նրան ստիպել են, վերցրել անձնագիրը և ծեծել են: Վկա Սևակ Նվերի Սիմոնյանի գործի քննության ընթացքում տված ցուցմունքներով այն մասին, որ ինքը գտնվել է Մոսկվա քաղաքում և հայ աղջիկների ու տղաների կեղծ ռուսական անձնագրեր է տվել, որպեսզի մեկնեն Դուբայ քաղաք, կեղծել է շուրջ 20-ից 30 անձնագիր: Կատարած արարքի համար դատապարտվել է: Դուբայ քաղաքից զանգահարել են իրեն և ասել, որ «պետք է դիմավորեն որևէ անձի, անձնագիր տան և ճանապարհեն Դուբայ»: Ինքը խոսել է հեռախոսով, ոչ մեկի հետ չի հանդիպել, իսկ իրեն զանգահարել են «Նարինե», «Նանո» անուններով անձնավորությունները: Կատարած գործողությունների համար վճարել է զանգահարողը և ինքն այդ ճանապարհով գումար է աշխատել: Ինքը աղջիկներին դիմավորել է, նկարել, ապա անձնագրերը տվել է նրանց ու ճանապարհել: Ինքը ոչ մեկի չի հանդիպել, այլ խոսել և պայմանավորվել է հեռախոսով, իսկ յուրաքանչյուր անձնագրի համար վճարել են 1000-ից 1500 ԱՄՆ դոլար: Վկա Սևակ Սիմոնյանը պնդել է նախաքննության ընթացքում տված ցուցմունքները և հայտնել, որ դեպքից բավականին ժամանակ է անցել և ներկայումս ինքը մանրամասն չի հիշում: Վկա Սևակ Սիմոնյանը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել այն մասին, որ 2002-2005 թվականներն ընկած ժամանակահատվածում ինքը, Արայիկ Աղաջանյանը և Ավետիք Խաչատրյանը դիմավորել են Հայաստանից ժամանած մարմնավաճառների, իսկ ապա ճանապարհել Դուբայ քաղաք, իսկ նրանց տարիքը չբավականացնելու դեպքում նրանց տվյալներով պատրաստել են ՌԴ քաղաքացու կեղծ անձնագրեր, ապա նոր ճանապարհել Դուբայ: Դուբայ քաղաքից իրենց զանգահարել են այնտեղ կավատությամբ զբաղվող Մարիետա Մուսայելյանը, Նարինե Խաչատրյանը, Անահիտ Մալխասյանը և հայտնել Մոսկվա քաղաք ժամանող մարմնավաճառների տվյալները, թռիչքի օրը, ժամը և համարը: Իրենք գնացել են օդանավակայան, դիմավորել տվյալ մարմնավաճառներին, իսկ ապա նրանց ճանապարհել են Դուբայ քաղաք: Նման հարցերով մի քանի անգամ զանգահարել է Ամայա Մատուլյանը «Նանո» մականունով: Իրենք զանգահարող կավատներին չեն ճանաչել, չեն հանդիպել, նրանց հետ պայմանավորվածություն ձեռք են բերել հեռախոսազանգի միջոցով: Դիմավորած և Դուբայ ճանապարհած մարմնավաճառների հետ իր շփումը սահմանափակվել է նրանց դիմավորելով, բնակարանում ժամանակավորապես տեղավորելով, հարկ եղած դեպքում նրանց համար կեղծ անձնագիր պատրաստելով, իսկ ապա Դուբայ քաղաք ճանապարհելով/հ. 1, գ.թ. 84-85/:

Վկա Արա Մնացականյանի գործի քննության ընթացքում տված ցուցմունքով այն մասին, որ Ամայա Մատուլյանն իր հարազատ քույրն է: Ամայա Մատուլյանը 1990-ական թվականների վերջերից սկսած պարբերաբար մեկնել է Դուբայ քաղաք, որտեղ բնակվել է տևական ժամանակով: Ամայա Մատուլյանը մի քանի անգամ դատապարտվել է, այդ թվում նաև կավատությամբ զբաղվելու համար: Տեղյակ չէ, թե ովքեր են մեկնել Դուբայ Ամայա Մատուլյանի մոտ, ինքը որևէ առնչություն չի ունեցել այդ գործերից և տեղյակ չի եղել, որ Ամայա Մատուլյանը գտնվում է հետախուզման մեջ: Ամայա Մատուլյանը ունեցել է բավականին մեծ քանակության ոսկյա զարդեր, որոնց մեծ մասը գնել է և իր հետ Երևան բերել Դուբայ քաղաքից, իսկ թե որ զարդը երբ է գնել, տեղյակ չէ: Ամայա Մատուլյանը մոտ երկու տարի գտնվում է Երևան քաղաքում: Նա չի աշխատել, ուստի իրեն պատկանող ոսկյա զարդերը ընկերոջ Արմեն Հակոբյանի անվամբ գրավ է դրել տարբեր գրավատներում: 2009 թվականի հունվար-փետրվար ամիսների ընթացքում իր կնոջից

խնդրել և վերցրել է մեկ ոսկյա շղթա ու ոսկյա թևնոց, որոնք գրավ է դրել գրավատանը, իսկ թե որ գրավատանը և որքան գումար է վերցրել, չգիտի:

Վկա Արաքսյա Սահակյանի գործի քննության ընթացքում տված ցուցմունքով այն մասին, որ Ամայա Մատուլյանն իր ամուսնու Արա Մնացականյանի հարազատ քույրն է, որի հետ գտնվում է նորմալ հարաբերությունների մեջ: Ամայա Մատուլյանը երկար ժամանակով բացակայել է Հայաստանից և բնակվել Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում, իսկ Հայաստանում գտնվելու ժամանակ բնակվել է տարբեր հասցեներում: Տեղյակ չէ, թե Ամայա Մատուլյանը Դուբայ քաղաքում ինչով է զբաղվել, նրա գործերի հետ չի առնչվել և տեղյակ չի եղել, որ նա գտնվել է հետախուզման մեջ: Ամայա Մատուլյանը միշտ կրել է ոսկյա զարդեր, որոնք իր իմանալով գնել և իր հետ բերել է Դուբայ քաղաքից: 2008 թվականի հոկտեմբեր ամսին Ամայա Մատուլյանը եկել է իրենց տուն և ասել, որ իրեն գումար է անհրաժեշտ, միաժամանակ խնդրել է որոշ ժամանակով իրեն տալ ոսկյա զարդերը, որպեսզի դրանք թողնի գրավատանը և գումար վերցնի, իսկ հետագայում դրանք գրավից կհանի և կվերադարձնի իրեն: Ինքը համաձայնվել է, նրան է տվել իր երկու ապարանջանները, որոնցից մեկը մոտավորապես եղել է 750 հարգի 60 գրամ քաշով, իսկ մյուսը 750 հարգի 20 գրամ քաշով: Նշված զարդերը իրեն նվիրել են իր ծնողները, այդ իսկ պատճառով երբևէ այդ ոսկյա զարդերը չի կշռել և կոնկրետ չգիտի այդ զարդերի քաշը և արժեքը: 2009 թվականի փետրվար ամսին տեղեկացել է, որ Ամայա Մատուլյանը ձերբակալվել է, իսկ թե իր կողմից տրված ոսկյա զարդերը ներկայումս որտեղ են, չգիտի:

Վկա Ալլա Սեդրակյանի գործի քննության ընթացքում տված ցուցմունքով այն մասին, որ ինքը 1996-1997 թվականներին Անահիտ Մալխասյանի ղեկավարությամբ Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում զբաղվել է մարմնավաճառությամբ, որտեղ ծանոթացել է կավատությամբ զբաղվող «Բանգլադեշի Նանոյի» Ամայա Մատուլյանի հետ: Հայաստանի Հանրապետություն վերադառնալուց հետո մշտական աշխատանք չունենալու պատճառով որոշել է կրկին մեկնել Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաք և զբաղվել մարմնավաճառությամբ: Ալլա Սեդրակյանը 2001 թվականի Երևան քաղաքում հանդիպել է «Նանոյի» հետ և նրան հայտնել իր մտադրության մասին, միաժամանակ հայտնել է, որ Դուբայ քաղաքից արտաքսվել է և չի կարողանում իր անձնագրով մեկնել Դուբայ: Ամայա Մատուլյանը համաձայնվել է կազմակերպել մեկնումը և վերցրել է իր լուսանկարը: Մի քանի օր անց Ամայա Մատուլյանը զանգահարել է և ասել, որ փաստաթղթերը պատրաստ են, կարող է մեկնել Դուբայ քաղաք: «Ջվարթնոց» օդանավակայանում Վարդուհի անունով անձը իրեն է փոխանցել իր լուսանկարով, սակայն Արինկա Աթանեսյանի տվյալներով ՀՀ քաղաքացու անձնագիր և ինքը մեկնել է Դուբայ քաղաք:

Վկա Ավետիք Խաչատրյանի գործի քննության ընթացքում տված ցուցմունքով այն մասին, որ 2001 թվականին մեկնել է Ռուսաստանի Ղաշնուխյան Մոսկվա քաղաք, որտեղ շուրջ մեկ տարի աշխատել է տարբեր շինարարական կազմակերպություններում: 2002 թվականի հուլիս ամսին իր հարևան Սևակ Սիմոնյանի միջոցով ծանոթացել է նրա հորաքրոջ որդու Արայիկ Աղաջանյանի հետ: Արայիկ Աղաջանյանը մտերիմ հարաբերությունների մեջ է գտնվել Դուբայ քաղաքում կավատությամբ զբաղվող մի շարք հայ կանանց հետ: Այդ ժամանակահատվածից սկսված իրենք երեքով դիմավորել են Հայաստանից Մոսկվա ժամանող աղջիկներին, որոնք մեկնելիս են եղել Դուբայ քաղաքում գտնվող հայ ազգի կավատների Ամայա Մատուլյանի և մյուսների մոտ մարմնավաճառությամբ գումար վաստակելու նպատակով: Ինքը և Սևակ Սիմոնյանը դիմավորել են Հայաստանից ժամանող աղջիկներին և տեղափոխել վարձակալած բնակարան: Ինքն անձամբ այդ աղջիկներին համար կեղծ անձնագրեր չի պատրաստել, սակայն տեղյակ է եղել, որ այդ հարցերով

զբաղվում են Սևակ Սիմոնյանն ու Արայիկ Աղաջանյանը: ՌԴ քաղաքացու կեղծ անձնագրերը պատրաստելուց հետո այդ աղջիկներին տարել են օդանավակայան, տվել անձնագրերը և ճանապարհել Դուբայ: Ինքն անձամբ այդ աղջիկների հետ չի գրուցել և տեղյակ չի եղել, որ նրանցից շատերին արտասահմանում մատուցողուհու կամ վաճառողուհու աշխատանք խոստանալով ՀՀ-ից հավաքագրել են, ուղարկել ՌԴ Մոսկվա քաղաք, իսկ իրենց կողմից Դուբայ ճանապահելուց հետո այդ աղջիկներին սեռական շահագործման են ենթարկել: Կատարած արարքների համար ինքը 2006 թվականի դեկտեմբեր ամսին դատապարտվել է: Տուժող Արմենուհի Աշուտի Ասատրյանի գործի քննության ընթացքում տված ցուցմունքով այն մասին, որ ինքը 2002 թվականին Հոկտեմբերյանի բնակիչ Վեռայի միջոցով գնացել է Դուբայ, որտեղ Սուսաննա անունով մի կնոջ մոտ աշխատել է մարմնավաճառ: 2003 թվականին վերադարձել է Հայաստան և աշխատել որպես վաճառողուհի: 2006 թվականին իրեն է զանգահարել Մարիետան ու ասել, որ Դուբայի Նանոն Հայաստանում է ու ցանկանում է իր հետ խոսել: Քանի որ ինքը գտնվել է նյութապես ծանր վիճակում, ուստի որոշել է հանդիպել Նանոյի հետ: Ինքը գնացել է Նանոյի բնակարան և Նանոն իրեն առաջարկել է մեկնել Դուբայ մարմնավաճառությամբ գումար աշխատելու համար: Ինքը հարցրել է, թե ինչ պայմանով պետք է մեկնի ու աշխատի: Նանոն ասել է, որ ճանապարհածախսը ինքը կհոգա, իսկ Դուբայ քաղաքում իրեն կդիմավորի իր աջ ձեռքը Ռուզանը, որի տանը կապրի ու կզբաղվի մարմնավաճառությամբ մինչև որ ինքը ժամանի Դուբայ: Միաժամանակ հայտնել է, որ վիզայի ու տոմսի ծախսը կազմելու է 6000 ԱՄՆ դոլար և այդ պարտքը տալուց հետո աշխատելու է ինքն իր համար: Ըստ պայմանավորվածության Դուբայ քաղաքում անձնագիրը և մարմնավաճառությամբ աշխատած գումարները պետք է հանձնել Ռուզանին: Նանոն միաժամանակ հայտնել է, որ 3-4 ամիս հետո ինքը նույնպես կգա Դուբայ և կապրեն միասին: Իրեն այդ պայմանները ձեռնտու են եղել, ուստի համաձայնվել է և 2006 թվականի հուլիսի 29-ին մեկնել է Մոսկվա քաղաք, իսկ այնտեղից Դուբայ, որտեղ իրեն դիմավորել է Ռուզանը ու տարել իր տուն: Մեկ շաբաթ հանգստանալուց հետո սկսել է զբաղվել մարմնավաճառությամբ, իսկ վաստակած գումարները տվել է Ռուզանին, որը մատյան է վարել, որում գրել է աղջիկների կողմից տված գումարները և ծախսերը: Օրեկան միջին հաշվով աշխատել է 800-ից 1000 դրհամ գումար, որը կազմել է 250 ԱՄՆ դոլար: Ռուզանը կատարած ծախսերը մեծացրել է և ըստ նրա հաշվարկների այնպես է ստացվել, որ ինքը փակել է իր վրա կատարած ծախսերը, իսկ պարտքը մնացել է: Հասկացել է, որ ծուղակն է ընկել ու երբեք այդ պարտքից չի պրծնի: Ինքը վախեցել է աղմուկ բարձրացնել, քանի որ գտնվել է օտարության մեջ, անձնագիրը գտնվել է Ռուզանի մոտ, իսկ պարտքը մարելու հեռանկարներ չի ունեցել: 2006 թվականի նոյեմբեր ամսին Նանոն եկել է Դուբայ, տուն վարձել և իր ուղարկած աղջիկների, այդ թվում իր հետ, բնակվել է համատեղ, որից հետո աշխատած գումարները տվել են Նանոյին: Ինքը Նանոյին ասել է, որ պարտքը վաղուց է մարել, Նանոն պատասխանել է, որ Ռուզանի հետ հաշվարկ կանի ու այդ հարցը կլուծի, սակայն այդ հաշվարկը անընդհատ ձգձգվել է: 2007 թվականի ապրիլ ամսին Դուբայ քաղաքում ոստիկանները Նանոյին բռնել են և իրենք ցրվել են: Ինքն իր անձնագիրը 6000 դրհամով 1500 ԱՄՆ դոլարով գնել է Ռուզանից, ապա նոր վերադարձել Հայաստան: Լուսանկարով անձին ճանաչման ներկայացնելու արձանագրություններով, որոնց ժամանակ Լուսինե Հարությունյանը, Գայանե Ղանդիլյանը, Արմենուհի Ասատրյանը ճանաչման ներկայացված լուսանկարներում պատկերված անձանցից ճանաչել են Ամալյա Մատուլյանին որպես Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում իրենց սեռական շահագործման ենթարկող անձի /հ. 1, գթ. 278, 297, հ. 4, գթ. 17/: Իրեղեն ապացույց ճանաչված և քրեական գործին կցված «Վալգե»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատանը թիվ 168244 պայմանագրով գրավադրված 900 հարզի ոսկու համաձուլվածքից պատրաստված 47,360 գրամ քաշով 440.800 ՀՀ դրամ արժողությամբ ապարանջանով, «Ֆաստ-Կրեդիտ» գրավատանը թիվ 107008 պայմանագրով գրավադրված 750 հարզի ոսկու համաձուլվածքից պատրաստված 444.700 ՀՀ դրամ արժողությամբ 31,357 գրամ քաշով մանյակով, 13,856 գրամ քաշով ապարանջանով և 10,822 գրամ քաշով մատանիով /հ. 4, գթ. 106-107/:

Ապրանքագիտական, մետաղագիտական և հեմոլոգիական փորձաքննության 2009 թվականի ապրիլի 27-ի թիվ Հճ.10180910 եզրակացությամբ այն մասին, որ.

1. փորձաքննությանը ներկայացված զարդերի ընդհանուր շուկայական արժեքը, առկա ապրանքային վիճակի հաշվառմամբ, 2009 թ. փետրվարի 13-ի դրությամբ, կարող էր կազմել 2.086.800 /երկու միլիոն ութսունվեց հազար ութ հարյուր/ դրամ, իսկ դրանց արժեքները, առանձին-առանձին, բերված են սույն եզրակացության »Հետազոտություն« բաժնի »Ապրանքագիտական« մասում:

2. Փորձաքննությանը ներկայացված բջջային հեռախոսների ընդհանուր շուկայական արժեքը, առկա ապրանքային վիճակի հաշվառմամբ, 2009թ. փետրվարի 13-ի դրությամբ, կարող էր կազմել 67.500 /վաթսույնյոթ հազար հինգ հարյուր/ դրամ, իսկ դրանց արժեքները, առանձին-առանձին, բերված են սույն եզրակացության »Հետազոտություն« բաժնի »Ապրանքագիտական« մասում /հ. 3, գթ. 227-231:

Ամայա Մատուլյանի կողմից Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքից »Վեստերն Յունիոն« համակարգով գումար փոխանցելու վերաբերյալ թվով 4 կտրոններով /հ. 2, գթ. 301-304/: Քնահատելով ամբաստանյալ Ամայա Մատուլյանի գործի քննությանը ընթացքում տված ցուցմունքները, դրանք համադրելով միմյանց և գործով ձեռք բերված մյուս փաստական տվյալների հետ վերաքննիչ դատարանը ոչ արժանահավատ է համարում վերջինիս կողմից բերված պատճառաբանությունները ՀՀ քրեական օրենսգրքի 1321 և 190 հոդվածներով ըստ էության իրեն մեղավոր չճանաչելու, ոսկյա զարդերը իր անձական օգտագործման զարդերը լինելու /որոնց մի մասը նվեր է ստացել, իսկ մի մասը գնել է/, բացի այդ ոչ մեկի չչափազործելու, չսպառնալու, ազատությունից չզրկելու, ծեծի չենթարկելու, ֆիզիկական բռնություն չկիրառելու և այլնի վերաբերյալ, քանի որ դրանք չեն բխում գործի օբյեկտիվ տվյալներից, որով փորձ է արվում հնարավորինս խուսափել քրեական պատասխանատվությունից:

Քնահատելով տուժողներ՝ Մարինե Նալբանդյանի և Կարինե Ավդալյանի գործի քննության ընթացքում տված ցուցմունքները, դրանք համադրելով միմյանց և գործով ձեռք բերված մյուս փաստական տվյալների հետ վերաքննիչ դատարանը արժանահավատ է համարում վերջիններիս կողմից տված ցուցմունքներն ամբաստանյալ Ամայա Մատուլյանին հանցագործության կատարման մեջ մերկացնելու վերաբերյալ, քանի որ դրանք բխում են գործի օբյեկտիվ տվյալներից:

Այսպիսով, վերլուծելով գործի փաստական տվյալները, քնահատելով ինչպես յուրաքանչյուր ապացույց, այնպես էլ դրանք իրենց համակցությամբ վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ ամբաստանյալ Ամայա Ստեփանի Մատուլյանին ՀՀ քր. օր-ի 132 հոդ. 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 1321 հոդ. 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190 հոդ. 2-րդ մասի 1-ին կետով, 325 հոդ. 1-ին մասով և 38-329 հոդ. 1-ին մեղսագրված արարքները հիմնավորվում են և նա պետք է քրեական պատասխանատվության և պատժի ենթարկվի:

Նման պայմաններում, վերը նշված հանգամանքների առկայության պայմաններում, պաշտպանության կողմի վերաքննիչ բողոքում շարադրված պատճառաբանություններն անհիմն են և այն բավարարելու հիմք համարվել չեն կարող:

	<p>Քննության առնելով ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատժի հարցը վերաքննիչ դատարանը հաշվի է առնում ամբաստանյալի կատարած հանցագործությունների բնույթը և վտանգավորության աստիճանը, կատարման հանգամանքները, դատական ակտում շարադրված ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հազամանքները այն որ մասնակիորեն մեղքը ընդունել է, զղջացել է, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը որպես ծանրացնող հանգամանք դատարանը դիտել է հանցաքը կատարելու ռեցիդիվը, հանցանքը որպես արհեստ կատարելը, հանցագործության մեջ առանձնապես ակտիվ դերը և հանգում է այն հետևության, որ տվյալ դեպքում վերջինիս նկատմամբ հանցանքների համակցությամբ նշանակվել է համաչափ պատիժ, ինչը տվյալ դեպքում համապատասխանում է ամբաստանյալի կատարած հանցանքների ծանրությանն ու վերջինիս անձին, հետևաբար դատական ակտը պատժի մասով ևս փոփոխելու հիմքեր չկան:</p> <p>Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 393-394 հոդվածներով վերաքննիչ դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց</p> <p>Ամալյա Ստեփանի Մատուլյանի նկատմամբ ՀՀ քր. օր-ի 132 հոդ. 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 132-1 հոդ. 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190 հոդ. 2-րդ մասի 1-ին կետով, 325 հոդ. 1-ին մասով, 38-329 հոդ. 1-ին մասով Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 30.11.2009թ. դատավճիռը թողնել օրինական ուժի մեջ, իսկ պաշտպանության կողմի վերաքննիչ բողոքը մերժել:</p> <p>Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան՝ հրապարակվելու պահից մեկամսյա ժամկետում:</p> <p>ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ Մ.ԱՐԴԱՄԱՆՅԱՆ Մ.ՈՒԵՀԱՆՅԱՆ</p>
Դատական ակտի ամսաթիվը:	02-03-2010
Ամսաթիվ:	09-04-2010
Էջերի քանակը:	305, 346, 340, 147, 293
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Գործն ուղարկվել է:	09-04-2010
Էջերի քանակը:	305, 346, 340, 147, 293 թերթից:
Գործին կից նյութերը:	չկա
Ուր:	Մալաթիա-Սեբաստիա
Գրության համարը:	Ե-3947/10
Այլ նշումներ:	չկա
Ամսաթիվ:	12-08-2011
Ամբաստանյալ	
Անձ	

Անուն	Ամայա
Ազգանուն	Մատուլյան
Հասցե	ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ
Հոդված_1	
Հոդված	
Պատվածություն:	
Պաշտպան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պատիժ:	
Հոդված_2	
Հոդված	
Խախանման միջոց:	Կալանավորում
Ուն կողմից է բերվել բողոքը:	Դատապարտյալ
Բողոքը բերող անձը	
Անուն	Ամայա
Ազգանուն	Մատուլյան
Հասցե	ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ
Բողոքի բովանդակությունը:	Վերանայել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ Ամայա Մատուլյանի վերաբերյալ 30.11.2009թ-ի դատավճիռը վերանայելու մասին 19.07.2011թ-ի որոշումը և սահմանված պատիժը մասնակի կրճատել
Բողոքի ստացման կարգը:	Հանձնվել է փոստին
Ամսաթիվ:	10-08-2011
Չափաիաս:	Այո
Ամսաթիվ:	16-08-2011
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քրեական և զինվորական վերաք.
Դատավորի անուն:	Աիդա Խաչատուրի Հովհաննիսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քրեական և զինվորական վերաք.
Դատավորի անուն:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	16-08-2011
Որոշման բովանդակությունը:	ԵՄԴ/0082/01/09 Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16 օգոստոսի 2011թ. ք.Երևան ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ա.Հովհաննիսյանս, ուսումնասիրելով դատապարտյալ Ամայա Ստեփանի Մատուլյանի վերաքննիչ բողոքը՝ բերված իր նկատմամբ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի »30.11.2009թ. դատավճիռը

վերանայելու մասին» կայացրած 19.07.2011թ. որոշման դեմ

Պ Ա Ր Ջ Ե Ց Ի

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի նոյեմբերի 30-ի դատավճիռով Ամալյա Ստեփանի Մատուլյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 1321-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 1-ին մասով, 38-329-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով դատապարտվել է ազատազրկման 5 /հինգ/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 1321-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով՝ ազատազրկման 8 /ութ/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ ազատազրկման 8 /ութ/ տարի ժամկետով՝ գույքի, այսինքն հանցավոր ճանապարհով ստացած գույքի բռնագրավմամբ: ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 1 /մեկ/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 38-329-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 1 /մեկ/ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կարգով հանցագործությունների համակցությամբ պատիժները մասնակիորեն զումարելու միջոցով վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 11 /տասնմեկ/ տարի ժամկետով՝ գույքի, այսինքն հանցավոր ճանապարհով ստացած գույքի բռնագրավմամբ:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2010 թվականի մարտի 02-ի որոշման համաձայն Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 30.11.2009 թվականի դատավճիռը թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ պաշտպանության կողմի վերաքննիչ բողոքը մերժվել է: Ղատապարտյալ Ամալյա Ստեփանի Մատուլյանը 23.06.2011թ. դիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան՝ խնդրելով իր նկատմամբ նշված դատավճիռը համապատասխանեցնել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 23.05.2011թ. ՀՀ ԱԺ օրենքին:

ՀՀ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը 19.07.2011թ. որոշմամբ բավարարել է դատապարտյալ Ամալյա Ստեփանի Մատուլյանի դիմումը:

Վերանայել է դատապարտյալ Ամալյա Ստեփանի Մատուլյանի նկատմամբ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի նոյեմբերի 30-ի դատավճիռը, դատավճիռով հաստատված Ամալյա Ստեփանի Մատուլյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 1321-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով կատարված հանցավոր արարքները համապատասխանեցրել է ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերին: Ղատավճիռը մնացած մասով թողել է անփոփոխ:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 19.07.2011թ. որոշման դեմ վերաքննիչ բողոք է բերել դատապարտյալ Ամալյա Մատուլյանը՝ խնդրելով մասնակի բեկանել և փոփոխել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 19.07.2011թ. որոշումը՝ մասնակի կրճատելով իր նկատմամբ նշանակված պատժաչափը: Ուսումնասիրելով դատապարտյալի վերաքննիչ բողոքը, դատական վարույթի նյութերը՝ հանգում են հետևության, որ վերաքննիչ բողոքը պետք է թողնել առանց քննության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի բողոքարկվող որոշումը կայացվել է 2011թ. հուլիսի 19-ին:

Վերաքննիչ բողոքին կից ՀՀ ԱՆ «Աբովյան» Քրեակատարողական հիմնարկի պետի ձևաթղթի /բլանկ/ ուսումնասիրությունից երևում է, որ վերաքննիչ բողոքը քրեակատարողական հիմնարկ է մուտք եղել 2011թ. օգոստոսի 10-ին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-1-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերն են՝ առաջին ատյանի դատարանի դատավճիռ, քրեական գործով վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշում, ինչպես նաև այդ ակտերի վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտեր, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում վճռաբեկ դատարանի դատական ակտերը:

Այսինքն՝ դատապարտյալ Ա.Մատուլյանի կողմից բողոքարկվող որոշումը ՀՀ քր. դատ. օր.-ի 10-1-րդ կետի իմաստով՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտ է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ կետերի համաձայն՝ վերաքննիչ բողոք բերվում են՝ առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում, կալանավորման, կալանքի ժամկետի երկարաձգման, բժշկական հաստատությունում անձանց տեղավորման մասին որոշումները՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում, իսկ գործն ըստ էության չլուծող մյուս ակտերը՝ հրապարակվելու պահից տասնօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժամկետանց բողոքները թողնվում են առանց քննության, որի վերաբերյալ դատարանը կայացնում է որոշում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժամկետները հաշվելիս նկատի չեն առնում այն ժամն ու օրը, որից սկսվում է ժամկետների ընթացքը, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության համաձայն՝ ժամկետն օրերով հաշվելիս ժամկետի ընթացքն սկսվում է առաջին օրվա գիշերվա զրո ժամից և վերջանում է վերջին օրվա գիշերվա ժամը քսանչորսին: Եթե ժամկետի լրանալը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի վերջին օրը հաշվվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի բողոքարկվող որոշման ուսումնասիրությունից երևում է, որ այն կայացվել է 2011 թվականի հուլիսի 19-ին, ընդհանուր իրավասության դատարանը իրավացիորեն նշված որոշումը ՀՀ Վերաքննիչ քրեական դատարան բողոքարկելու ժամկետ է սահմանել հրապարակման պահից տասնօրյա ժամկետ:

Հետևաբար, Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի նշված որոշման վերաքննիչ բողոքարկման ժամկետները ընդգրկում են 2011թ. հուլիսի 20-ից մինչև 2011թ. հուլիսի 29-ը ներառյալ /2011թ. հուլիսի 29-ը եղել է աշխատանքային օր/:

Սակայն, ինչպես նշվեց վերևում, վերաքննիչ բողոքին կից ձևաթղթի /բլանկ/ ուսումնասիրությունից երևում է, որ վերաքննիչ բողոքը քրեակատարողական հիմնարկ է մուտք եղել 2011թ. օգոստոսի 10-ին, այսինքն՝ վերաքննիչ բողոքարկման ժամկետները ավարտվելուց հետո, հետևաբար, վերաքննիչ բողոքը ժամկետանց է:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի 1-ին մասի՝ ժամկետն անցնելուց հետո կատարված դատավարական գործողությունները համարվում են անվավեր, եթե ժամկետը չի վերականգնվում:

Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-

րդ հողվածի 1-ին մասի համաձայն՝ հարգելի պատճառներով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք կարող են դատական ակտը կայացրած դատարանի առաջ միջնորդել՝ վերականգնելու բաց թողնված ժամկետը: Բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը քննվում է դատական նիստում դատավճիռ կամ որոշում կայացրած դատարանի կողմից, որն իրավունք ունի կանչել միջնորդություն հարուցած անձին՝ բացատրություններ տալու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ վերաքննիչ բողոքը չի համապատասխանում սույն հոդվածով սահմանված պահանջներին, բերել է այն անձը, ով չունի այդ իրավունքը, կամ բողոքը ժամկետանց է կամ բերվել է այնպիսի դատական ակտի դեմ, որը ենթակա չէ վերաքննիչ բողոքարկման կամ բերվել է 3754-րդ հոդվածի պահանջի խախտմամբ, վերաքննիչ դատարանի որոշմամբ այն թողնվում է առանց քննության:

Նման պայմաններում գտնում են, որ դատապարտյալ Ամայյա Ստեփանի Մատույանի վերաքննիչ բողոքը՝ բերված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 2011թ. հուլիսի 19-ի որոշման դեմ, պետք է թողնել առանց քննության՝ ժամկետանց լինելու հիմքով: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ, 174-րդ, 379-րդ, 381-րդ հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Դատապարտյալ՝ Ամայյա Ստեփանի Մատույանի վերաքննիչ բողոքը թողնել առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարան՝ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱԿՈՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ամսաթիվ:	25-08-2011
Էջերի քանակը:	6 թերթից
Գործին կից նյութեր:	
Գործն ուղարկվել է:	
Ուր:	
Գրության համարը:	
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	25-08-2011
Էջերի քանակը:	5 հատոր. 1-ին՝ 305 թերթից, 2-րդը՝ 346 թերթից, 3-րդը՝ 340 թերթից, 4-րդը՝ 148 թերթից, 5-րդը՝ 360 թերթից
Գործին կից նյութեր:	
Այլ նշումներ:	
Գործն ուղարկվել է:	25-08-2011

Էջերի քանակը:	1 հատորը՝ 305 թերթ, 2 հատորը՝ 346 թերթ, 3 հատորը՝ 340 թ, 4 հատորը՝ 148 թերթ, 5 հատորը՝ 360 թերթից:
Գործին կից նյութերը:	
Ուր:	Մալաթիա-Սեբաստիա
Գրության համարը:	Ե-12976/11
Այլ նշումներ:	
Ղատական Գործ N: ԵՄԴ/0082/01/09	
Ամսաթիվ:	08-09-2011
Բողոք բերող անձինք:	Ղատապարտյալ
Բողոք բերող անձինք	
Անուն	Ամալյա
Ազգանուն	Մատուլյան
Հայրանուն	Ստեփանի
Հասցե	ՀՀ ԱՆ «Արմվյան» ՔԿՀ
Հավատարմագրված փաստաբան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Ղատապարտյալ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Չափահաս:	Այո
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխանի բովանդակությունը:	
Գործի առաքման ամսաթիվը:	15-09-2011
Գրության համարը:	ԴԴ 22-Ե-13807
Գործի ստացման ամսաթիվը:	17-09-2011
Քրեական գործի հատորներ /փաստաթղթեր/:	5 հատոր
Ղատապարտյալ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Գործի համարը:	ԵՄԴ/0082/01/09
Գործը ստացվել է:	Մալաթիա-Սեբաստիա
Գործը ստացվել է:	
Գործը ստացվել է:	
Պատասխանատվության	1

Ենթարկվածների թիվը:	
Ամսաթիվ:	17-09-2011
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Համլետ Նորիկի Ասատրյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Ելիզավետա Ռեմիկի Դանիելյան
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	05-10-2011
Որոշման բովանդակությունը:	<p>ԵՄԴ/0082/01/09</p> <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p> <p>5 հոկտեմբերի 2011 թվական ք.Երևան ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),</p> <p>նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ մասնակցությամբ դատավորներ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ</p> <p>քննարկելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի օգոստոսի 16-ի որոշման դեմ դատապարտյալ Ամալյա Ստեփանի Մատուլյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը,</p> <p>Պ Ա Ր Ձ Ե Ց</p> <p>Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին աստիանի դատարանի 2009 թվականի նոյեմբերի 30-ի դատավճռով Ամալյա Ստեփանի Մատուլյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերով, 1321-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով, 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 1-ին մասով և 38-329-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի հիման վրա՝ պատիժները մասնակիորեն զուտարելու միջոցով, Ա.Մատուլյանը վերջնական դատապարտվել է ազատազրկման 11 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ: Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին աստիանի դատարանի 2009 թվականի հուլիսի 19-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 1321-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով նախատեսված հանցավոր արարքները համապատասխանեցվել են ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետերին: Դատապարտյալ Ա.Մատուլյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2011 թվականի</p>

օգոստոսի 16-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը թողել է առանց քննության՝ ժամկետանց լինելու պատճառաբանությամբ: Վերոգրյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել դատապարտյալ Ա.Մատուլյանը՝ խնդրելով բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի օգոստոսի 16-ի որոշումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը պետք է բովանդակի նույն օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի որևէ կետի հիմնավորումները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե

1. բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ
2. վերանայվող դատական ակտն առերևույթ հակասում է վճռաբեկ դատարանի՝ նախկինում ընդունված որոշումներին, կամ
3. վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրված առերևույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ, կամ
4. առկա է նոր երևան եկած կամ նոր հանգամանք:

Մինչդեռ բողոքում բացակայում են վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը և դրանց հիմնավորումները: Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ բողոքին կցվում են բողոքի պատճենը գործը քննած դատարան և դատավարության մասնակիցներին (բացառությամբ քննիչի և հետաքննության մարմնի) ուղարկված լինելը հավաստող փաստաթղթերը: Բողոքի ուսումնասիրությունից երևում է, որ բացակայում են բողոքի պատճենը գործը քննած դատարան և դատավարության մասնակիցներին ուղարկված լինելը հավաստող փաստաթղթերը: Այսինքն, պահպանված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի 21-րդ մասի պահանջը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե այն չի համապատասխանում նույն օրենսգրքի 407-րդ հոդվածի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, ուստի ներկայացված բողոքը ենթակա է վերադարձման: Հաշվի առնելով վերոշարադրյալ հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի օգոստոսի 16-ի որոշման դեմ դատապարտյալ Ամալյա Ստեփանի Մատուլյանի վճռաբեկ բողոքը վերադարձնել: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ
 Դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ
 Հ.ԱՍԱՏՐՅԱՆ
 Ա.ՊՈՂՈՍՅԱՆ

Ամսաթիվ:	12-10-2011
Այլ նշումներ:	

Գործի առաքման ամսաթիվ:	14-10-2011
Դատարան:	Մալաթիա-Սեբաստիա
Այլ նշումներ:	5 հատոր՝ 305, 346, 340, 148, 374 թերթ:

Փաստաթուղթը տպվել է www.datalex.am պորտալի կողմից 24 Հունվար 2013